



ՀՀ ԳԱԱ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐՍԻԿ ԱՐՄԵՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Ն 633

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Թաթուլ Արտիկի Ասոյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝ Վիկտոր Լիպարիտի Կատվալյան
բանասիրական գիտությունների դոկտոր
Նազիկ Գարրիի Հովհաննիսյան
բանասիրական գիտությունների թեկնածու

Արդի հայերենի բառագիտության, քերականության և
Ն 633 ոճագիտության հարցեր.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակ-
չություն, 2025.- 134 էջ:

Գրքում քննվել են արդի հայերենի բառագիտությանը, քերա-
կանությանը և ոճագիտությանն առնչվող մի քանի հարցեր: Այն
նախատեսված է հայերենագիտությամբ զբաղվողների, բանասեր-
ների և առհասարակ արդի հայերենի հարցերով հետաքրքրվող-
ների համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-970-18-9

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2025

ԳԻՐՔԸ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԱՐՑԱԽՅԱՆ ԲՈԼՈՐ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԱՆՄԱՀԱՅԱԾ ՀԵՐՈՄՆԵՐԻ ՀԱՎԵՐԺ
ԽՆԿԵԼԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ՝ Ի ԴԵՄՍ ԶԱՐՄԻԿԻՍ՝
ԳՈՌ ՄԵԼՍԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արդի հայերենի որոշ հարցեր դեռևս պարզաբանման, կանոնարկման կարիք ունեն: Դրանցից մի քանիսը գրավել են մեր ուշադրությունը ոչ միայն առօրյա հաղորդակցման ընթացքում, այլև ուսումնական գործընթացներ իրականացնելիս: Արդի հայերենի կանոնարկման խնդիրներին, ոճական առանձնահատկություններին նվիրված սույն գիրքն ամփոփում է տարբեր ժողովածուներում հրատարակված մեր հոդվածները¹, որոնք որոշ շտկումներով և լրամշակված տարբերակներով ներկայացվում են ըստ առանձին

¹ Հմմտ. **Ներսիսյան Վ.Ա.**, *Գրական արևելահայերենի կարող էմ հարադրության ձևաբանական արժեքի հարցը*, «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Ե., 2012, էջ 225-234: *Հայկական ժողովրդական հանելուկների լեզվաոճական քննություն*, «Պատմաբանասիրական հանդես», 1, Ե., 2014, էջ 108-113: *Պատկերավորման միջոցները հայկական ժողովրդական հանելուկներում*, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2014, էջ 147-152: *Հայերենի համաձայնել և համաձայնվել բայերի իմաստային տարբերակման հարցի շուրջ*, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 165-171: *Հոդակապի արժեքը ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում*, Գիտական հոդվածների ժողովածու (նվիրված Հր. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Ե., 2016, էջ 258-269: *Մերոնք և ձերոնք բառերի խոսքիմասային արժեքի հարցը գրական արևելահայերենում*, «Լեզու և լեզվաբանություն» հանդես, 1, Ե., 2018, էջ 58-67: *Հավաքականություն և հոգնակիություն ցույց տվող -ենք, -անք, -ոնք, -ունք ձևույթների գնահատումը հայերենի քերականական աշխատություններում*, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Ե., 2018, էջ 258-269: *Նոյան և նոյյան* բառերի կազմությունը և կիրառությունը հայերենում, Գիտական հոդվածների ժողովածու, ԳՊՀ, Ե., 2019, 275-281: *Կիսել և կիսվել* բայերի իմաստային դրսևորումները հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Ե., 2019, էջ 152-161: *Լեզվի պատկերավորման միջոցները Գ. Բաղդիշյանի «Մուսալեռցի պապս» խոհագրության մեջ*, Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակին, ԳՊՀ, մաս 1, 2020, էջ 244-251: *Տնօրենություն և տնօրինություն* բառերի գործածությունը հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, 16, Ե., 2021, էջ 89-100:

բաժինների: Դրանցում փորձել ենք փաստական նյութի հիման վրա ներկայացնել այս կամ այն լեզվական միավորի ընկալման, գործածության վերաբերյալ մեր տեսակետները:

Անդրադարձ է կատարվել նաև ոճագիտության որոշ հարցերի, որոնք, կարծում ենք, կհետաքրքրեն մասնագիտական շրջանակներին: Արդի հայերենի հարցերով զբաղվող օտար լեզվաբանների համար մենագրության վերջում ներկայացված են ռուսերեն և անգլերեն համառոտագրեր:

Անշուշտ, մենք այն կարծիքին չենք, որ ներկայացված մոտեցումները վերջնական են, և ուրախ կլինենք, եթե դրանք արժանանան հայերենագիտությամբ զբաղվողների ուշադրությանը: Սիրով կլսենք ինչպես դրական, այնպես էլ բացասական արձագանքներն այս կամ այն հարցի վերաբերյալ, քանզի երկու դեպքում էլ, կարծում ենք, շահելու է արդի հայ լեզվաբանությունը:

Շնորհակալություն ենք հայտնում ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդին, արդի հայերենի բաժնի աշխատակիցներին՝ գիրքը քննարկելու և տպագրության երաշխավորելու համար, բ.գ.դ. Վ.Լ. Կատվալյանին, բ.գ.թ., դոցենտ Թ.Ա. Ասոյանին, բ.գ.թ. Ն.Գ. Հովհաննիսյանին՝ գիրքը կարդալու և շահեկան դիտարկումներ անելու համար:

Վ. Ներսիսյան

1. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1.1. ՀՈՂԱԿԱՊԻ ԱՐԺԵՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐՈՒՄ

Հայտնի է, որ հայերենում իսկական բարդության բաղադրիչները կապակցվում են ինչպես հոդակապով, այնպես էլ առանց հոդակապի: Ըստ այդմ էլ դրանք լինում են **հոդակապով** կամ **անհոդակապ**: Իսկ **ա** հոդակապի ծագումը, ըստ Աբեղյանի, կապվում է բառահիմքի վերջին **ա** ձայնավորի հետ, որ միացնում է բարդության երկու մասերը՝ առաջ բերելով նոր բառ, և որը համաբանությամբ տարածվել է նաև այնպիսի բառերի վրա, որոնք ձայնավորով բուն չունեն²: Ժամանակի ընթացքում, ինչպես գիտենք, տարբեր արմատներից առաջանում են ածանցներ, որոնցից առաջ կամ հետո ևս հանդես է գալիս **ա** հոդակապը: Համապատասխան աշխատություններում, որպես կանոն, հոդակապը ներկայացվում է ածանցին կից՝ փակագծերում, որը հուշում է, որ այն կարող է լինել կամ չլինել, ինչպես՝ **ենթ(ա)-**, **համ(ա)-**, **հակ(ա)-**, **տար(ա)-**, **-(ա)գին**, **-(ա)պան**, **-(ա)ստան** և այլն, կամ բուն ածանցի կողքին փակագծերում տրվում է հոդակապով տարբերակը, ինչպես՝ **տար(տարա-)**, **փոխ(փոխա-)**, **-բան(-աբան)** և այլն: Այլ հեղինակներ հոդակապը գծով անջատում են ածանցից: Օրինակ՝ **բրդ (բուրդ) + (ա)գործ** կամ **բրդ (բուրդ) + ա/գործ, հիվանդ +(ա)գին կամ հիվանդ+ա/գին** և այլն: Ընդ որում գրեթե ոչ մի աշխատության մեջ սկզբունքը մինչև վերջ չի պահպանվում: Եվ քանի որ տեսական ուսումնասիրություններում կարծես թե հատուկ չի նշվում, թե ինչպես պետք է վարվել բառակազմական վերլուծություն կատարելիս, ուսումնական գործընթացներում առաջ են գալիս տարբեր

² Տե՛ս **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Զ, Ե., 1974, էջ 154-155:

նումներ, և շատերը բառակազմական վերլուծություն կատարելիս հողակապը դարձյալ գրում են փակագծում, որն այնքան էլ տրամաբանական չէ: Չէ՞ որ այդպես ստացվում է, որ տվյալ բառը կարող է հանդես գալ և՛ հողակապով, և՛ առանց հողակապի: Շատերն էլ հողակապն առանձնացնում են ածանցից, որը ճիշտ չէ գուտ տեսականորեն (որևէ դասակարգման մեջ չի տեղավորվում): Իսկ ածանցը հողակապի հետ միասին ներկայացնելը, որը թերևս ամենաճիշտն է, շատերի համար անընդունելի է և ոչ սովորական:

Անդրադառնանք մեր ուսումնասիրության բուն խնդրին՝ հողակապի գնահատմանը ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում, կամ ինչպե՞ս վարվել ածանցավոր բառերը վերլուծելիս. առանձնացնե՞լ հողակապն ածանցից, թե՞ ոչ: Օրինակ՝ ինչպե՞ս վերլուծել *ատաղձագործ*, *նորագույն*, *Հայաստան*, *Ռուսաստան*, *համալսարան*, *շարադրություն*, *ստորագրել*, *վերահաս* և նմանատիպ այլ ածանցավոր բառեր, որոնցում առկա է **ա** ձայնավորը: Թերևս հարցադրումը կարող էր անտեղի լինել, եթե մասնագետների շրջանում տարակարծություններ չլիներին, և ժամանակակից հայերենի բառակազմությանը նվիրված աշխատություններում միօրինակություն լիներ: Այս առումով թերևս տեղին է մեջբերել Լ. Հովսեփյանի հետևյալ ձևակերպումը. «Ժամանակակից հայերենի որևէ այլ մակարդակի նկարագրության մեջ վաղուց արդեն հաղթահարված է համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերը շփոթելու վտանգը, սակայն նույնը չի կարելի ասել բառակազմության մասին, մասամբ, ...նյութի բերումով, այսինքն՝ տարբեր ժամանակագրական շերտերի գոյակցությամբ, մասամբ հետազոտողների անհետևողականության պատճառով»³: Ըստ Ա. Սու-

³ Լ. Հովսեփյան, *Բառերի ստուգաբանական և բառակազմական վերլուծությունը հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում*, «Զահուկյանական ընթերցումներ», Ե., 2006, հուլիսի 3-4, էջ 127:

քիասյանի՝ բառակազմական վերլուծության նպատակը լեզվի զարգացման արդի փուլում բառի կառուցվածքի բացահայտումն է: Այդ նշանակում է, որ բառի՝ ըստ բաղադրիչների տարրալուծումը կատարվում է լեզվի զարգացման արդի փուլում գործող, նրա ժամանակակից վիճակն արտացոլող լեզվական ըմբռնողությամբ⁴: «Մինչդեռ ստուգաբանական վերլուծման նպատակը,- նույն աշխատության մեջ գրում է Սուքիասյանը,- նրա անցյալ վիճակի պատմական զարգացման, նախնական կառուցվածքի և բառակազմական կապերի բացահայտումն է, երբ որոշվում՝ բացահայտվում է ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ անհասկանալի կամ չբացատրվող տարրերի կազմությունն ու ծագումը»⁵: Փորձելով գտնել լեզվական վերը նշված հարցադրման պատասխանը՝ ներկայացնենք տեսական ուումնասիրությունների՝ հարցին առնչվող որոշ դրույթներ, որոնք կարող են մեզ ուղղորդել խնդրի լուծումը գտնելու առումով:

Այսպես՝ հայերենագիտության մեջ հողակապը սահմանել են բազմաթիվ լեզվաբաններ, որոնցից մի քանիսը կցանկանայինք հիշատակել: Ըստ Է. Աղայանի՝ «Բարդությունների բաղադրիչներն իրար կապող, միավորող ա ձայնավորը կոչվում է հողակապ»⁶: Ըստ Ս. Էլոյանի՝ «Հողակապը գործառություն ունի բառային մակարդակում, քանի որ մասնակցում է բարդ բառերի բաղադրմանն ու ձևավորմանը և ունի ձևակազմական արժեք»⁷: Մեկ այլ ձևակերպմամբ՝ «Հայերենում հողակապը ա-ն է, որն իրար է կապում, գողում բարդության կազմի մեջ մտնող բաղադրիչները, օր.՝ քար-

⁴ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 257:

⁵ Նշվ. աշխ., էջ 259:

⁶ **Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, Հայոց լեզու, 1-ին մաս (*«Բառագիտություն»* բաժինը՝ **Է. Աղայանի**), Ե., 1980, էջ 425:

⁷ **Ս. Էլոյան**, *Հողակապով և անհողակապ բարդությունները ժամանակակից հայերենում*, «Լրաբեր», 1, 1972, էջ 77:

ա-շեն, վեհ-ա-նիստ, անուշ-ա-համ և այլն»⁸: Ինչպես տեսնում ենք, հոդակապը բոլոր դեպքերում սահմանվում է որպես բարդ բառերի բաղադրիչներն իրար կապող միավոր: Իսկ ինչպե՛ս է գնահատվում հոդակապի գործածությունը ածանցի հետ: Այդ առիթով հետաքրքիր դիտարկում է անում Ս. Գալստյանը՝ գրելով. «Արդի հայերենի ածանցների մի խոշոր մասը ծագումնաբանորեն բաղադրյալ է, բայց համաժամանակյա կտրվածքով մեկ ածանցական իմաստ արտահայտող բաղադրյալ ածանցը մեկ ածանց է: Օրինակ՝ ներկայացվող կաղապարներում –ածո, –ածու, –ունակ, –անք մեկական ածանցներ են (R1, R2), չնայած որ նրանք պատմականորեն կազմված են R4 + R2 (–ածո, –ածու) և R2 + R1 (–ունակ, –անք) բաղադրիչներից: Վերապահում պետք է անել նաև հոդակապի վերաբերյալ: Պարզության համար կարելի է –ական, –աբար և նման ածանցների –ա-ն ածանցի մաս համարել, այդ դեպքում – կան, –բար և այլ ածանցները կդառնան նրանց տարբերակները: Կարելի է նաև ընդունել (որ ավելի ճիշտ կլինի), թե ածանցն է – կան, –վոր, –բար և այլն. այս դեպքում ա-ն դիտվում է որպես կապող ձայնավոր, կառուցվածքային տարբերակ կդառնա նույն արմատի ու նույն ածանցի հոդակապավոր և անհոդակապ բաղադրություններով (սայլվոր-սայլավոր): Մեկ կաղապարում տարբերակներ կարող են համարվել նույն խոսքիմասային արմատից հոդակապավոր և անհոդակապ բաղադրությունները (թափառական, գաղթական, օգնական, մրսկան, լալկան, լացկան)»⁹: Ինչպես տեսնում ենք, առաջարկվում է խնդրի լուծման ոչ թե մեկ, այլ երկու տարբերակ, և որոշումը մնում է ընթերցողին: Էդ. Աղայանը գրում է. «Ածանցում-

⁸ **Ռ. Մաքսպետոյան**, *Հոդակապը արդի հայերենում*, «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, 1, էջ 47: Տե՛ս նաև **Վ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Էլոյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ.1-ին, (բաժինը՝ **Ս. Էլոյանի**), Ե., 1979, էջ 311:

⁹ **Ս. Գալստյան**, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 34:

ների մեջ հոդակապը ժամանակի ընթացքում միացել է ածանցին և շատ դեպքերում այլևս չի գիտակցվում որպես այդպիսին: Քանի որ «հոդակապը», ինչպես ասացինք, երբեմնի ձայնավորական բունն է, իսկ այդպիսիք կարող էին լինել *ա, է, ու, ռ* ձայնավորները, ապա ածանցներին միանալով՝ դրանք տվել են տարբեր ձայնավորներով ձևեր, ինչպես՝ -ցի (առանց «հոդակապի»), -եցի (ե «հոդակապով»), -ացի (ա «հոդակապով»)¹⁰: Աղայանը նշում է, որ բարդությունների հոդակապը գործնականորեն նպատակահարմար է հատկացնել սերող հիմքին, իսկ ածանցումների մեջ՝ ածանցներին (ընդգծումը մերն է): Ածանցների համար, ըստ Աղայանի, սա ունի նաև այն արդարացումը, որ շատ դեպքերում հոդակապը դարձել է արդեն ածանցի անբաժան տարրը, իսկ անհոդակապ ձևն այլևս չի գիտակցվում: Շատ ածանցների հոդակապավոր և անհոդակապ ձևերը, ինչպես և նախնական բնի տարբեր ձայնավորներով ձևերը հանդես են գալիս որպես միևնույն ածանցի տարբերակներ, ինչպես՝ -*անոց/-նոց* (գլխ-անոց, ճակատ-նոց, թև-նոց, թիկն-ոց), -*աստան/-ստան* (Հայ-աստան, Ռուս-աստան, Քրդ-ստան, Հաբեշ-ստան), -*ավոր/-վոր* (գութանավոր, սայլ-վոր), -*ացի/-եցի/-ցի* (շիրակ-ացի, մեղր-եցի, լեռնցի), -*ացու/-ցու* (մս-ացու, տոլմա-ցու, փեսա-ցու), -*եստ/-իստ/- ուստ* (գով-եստ, հանգ-իստ, փախուստ) և այլն¹¹: Գ. Զահուկյանը ևս հաստատում է այդ տեսակետը. «Որոշ վերջածանցների դեպքում ա-ն այնքան սերտորեն է կապում երկու բաղադրիչները, որ վերջածանցները գրեթե չեն ընկալվում առանց հոդակապի»¹²: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից

¹⁰ **Էդ. Աղայան**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 265: Տե՛ս նաև **Գ. Զահուկյան**, **Էդ. Աղայան**, **Վ. Առաքելյան**, **Վ. Քոսյան**, *Հայոց լեզու*, 1-ին մաս, էջ 428-429:

¹¹ **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 282:

¹² **Գ. Զահուկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 37:

հայերենի բառակազմությանը նվիրված գրեթե բոլոր աշխատություններում էլ այս կամ այն չափով նշվում է հոդակապի և ածանցի ձուլման մասին, պարզապես հատուկ չի նշվում, թե ինչպես պետք է վարվել բառակազմական վերլուծություն կատարելիս, որի արդյունքում էլ ի հայտ են գալիս տարակարծություններ: Այս առումով կարող է օգտակար լինել Լ. Հովսեփյանի հետևյալ դիտարկումը. «...այս կամ այն բառակազմական միավորի առանձնացումը կապված է որոշակի պայմանականության հետ: Քանի որ բառերի տրոհելիությունը պատմականորեն փոփոխվող երևույթ է, բառակազմական տեսակետից վերլուծելի (տրոհելի) տարրերը որոշելիս պետք է ելնել տվյալ ժամանակագրական կտրվածքում գոյություն ունեցող համակարգային կապերից, այսինքն՝ հստակորեն սահմանագատել լեզվի ուսումնասիրության համաժամանակյա և պատմական հայեցակետերը և մեկ ժամանակագրական կտրվածքին հատուկ համակարգի միավորներն ու կաղապարները չվերագրել այլ ժամանակագրական կտրվածքի: Այս առումով լեզվի տվյալ փուլի բառակազմությունը պետք է քննել **կայական (ստատիկ) հայեցակետով** (ընդգծ.՝ Վ. Ն.)»¹³: Նշելով, որ բազմաթիվ բառեր ժամանակակից հայոց լեզվում տրոհելի են միայն ստուգաբանորեն, լեզվաբանը գրում է, որ դա «լեզուներում հայտնի երևույթ է, որ կոչվում է **պարզեցում և վերաբաղադրում** (ընդգծ.՝ Վ. Ն.), այսինքն՝ երբ բաղադրիչների սահմանները խախտվում են, և տրոհման տեղը (կցույթը) փոխվում է, օրինակ՝ հայերենում թեմատիկ ձայնավորների սերտաճումը բուն վերջավորությունների հետ, կամ **հոդակապի սերտաճումը ածանցի հետ**»¹⁴ (ընդգծումը՝ Վ. Ն.): Այս ամենից կարելի է եզրակացնել, որ արտասովոր ոչինչ չկա հոդակապը ածանցի հետ որպես մեկ միավոր ներկայացնելու մեջ: Թերևս

¹³ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 123:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 124:

միայն ածանցակերպներում կարելի է ընդունել հոդակապի առանձին գրությունը, թեև այստեղ էլ մեկ այլ խնդիր կա. տարբեր քերականներ որոշ միավորներ մեկ ներկայացնում են որպես ածանցակերպներ, մեկ՝ որպես ածանցներ:

Անդրադառնալով հայերենի տեսական աշխատություններում առկա միայն այն ածանցներին, որոնցում հոդակապը տրված է ածանցի հետ միասին՝ առանց փակագծերի կամ գծիկի, իսկ անհոդակապ տարբերակը՝ առանձին:

Այսպես՝ Հր. Աճառյանը նշում է հետևյալ ածանցները՝ **-ազին, -ական, -անոց, -ավոր**¹⁵: Մի շարք ածանցներ վկայված են Գ. Զահուկյանի «Հին հայերենի վերջաձանցների ծագումը» աշխատության մեջ, ինչպես՝ **-աբար, -ագար, -ագոյն, -ագան, -աժէտ, -անոց, -ապէս, -աւոր**¹⁶: Ա. Սուքիասյանը «Ժամանակակից հայոց լեզու» գրքում ներկայացնում է ածանցների հետևյալ զույգերը՝ **ապ-, ապա-, թեր-, թերա-, մակ-, մակա-, վեր-, վերա-, տար-, տարա-, փոխ-, փոխա-** նախաձանցները, **-աբան, -բան, -աբար, -բար, -ապէս, - պէս, -ական, -կան, -անոց, -նոց, -ոց, -ավետ, -վետ, -արար, -րար** վերջաձանցները¹⁷: Ս. Գալստյանը «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ ներկայացնում է հետևյալ վերջաձանցները՝ **-ապան/ -պան, -ապատիկ/-պատիկ, -ապէս, -ավետ, -ավոր, -ավուն**¹⁸: Ի դեպ, «Դպրոցական բառակազմական բառարանում» ներկայացնելով բառարանի կազմության սկզբունքները և նրանից օգտվելու կարգը՝ Ս. Գալստյանը նշում է, որ պատմականորեն բաղադրյալ բառերի բաղա-

¹⁵ Տե՛ս Հր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, Ե., 2005, էջ 179-182:

¹⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, *Հին հայերենի վերջաձանցների ծագումը*, «Պատմաբանասիրական հանդես», 1-2, Ե., 1994, էջ 54-62:

¹⁷ Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 288-329:

¹⁸ Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 95-109:

դրիչները, որոնք այսօր կարող են և չգիտակցվել, բառարանում անջատվում են | գծիկով¹⁹: Ապա ավելացնում է. «Ածանցները հիմքերին կապող (ստուգաբանորեն) մասնիկը՝ հոդակապը (ա-ն), գծիկով կարելի է և չանջատել. ասենք, գեր-ը և գերա-ն կամ ական-ը և կան-ը, ավոր-ը և վոր-ը դիտելով որպես դիրքային տարբերակ-ներ (հմմտ. գերիզոր և գերակատարել)»²⁰: Նույն տեղում ներկայացված է պատմական հնչյունափոխության ենթարկված բառերի ցուցակ՝ հին և նոր ուղղագրությամբ, որոնցում մեզ հետաքրքրում է հետևյալ ածանցների նշումը՝ **-ագոյն-ագույն, -աժէտ-աժէտ, -ապէս-ապէս, -աւոր- ավոր**:

Վերոհիշյալ բառարանից դուրս ենք գրել **արտա-** (արտաժամ, էջ 28), **բաղա-** (բաղաձայն, էջ 30), **ենթա-** (ենթագնդապետ, էջ 48), **հակա-** (հակափաստարկ, էջ 104), **համա-** (համաբարբառ, էջ 105) նախաձանցները ևս:

Տարբեր աշխատություններում նախաձանցների հարուստ շարք է ներկայացված էդ. Աղայանի կողմից՝ **անդր- /անդրա-, ապ- /ապա-, առ-/առա-, արտ-/արտա-, բաղ-/բաղա-, բաց-/ բացա-, ենթ-/ենթա-, հակ-/ հակա-, համ-/ /համա-, հար-/հարա-, մակ-/մակա, նախ-/նախա-, ներ-/ներա-, շաղ-/շաղա-, ստոր-/ստորա-, ստոր-/ստորա-, վեր-/ վերա-, տար-/տարա-, տրամ-/տրամա-, փոխ-/ փոխա-**: Վերջաձանցներից ներկայացված են՝ **-անոց/ -նոց, -աստան/- ստան, -ավոր/-վոր**²¹:

Վերջին շրջանի տեսական աշխատություններում նշված են հետևյալ ածանցները՝ **ապ-/ապա-, ենթա-, -աբար, -ագին, - ագույն,**

¹⁹ Տե՛ս Մ. Գալստյան, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2011, էջ 6:

²⁰ Նշվ. աշխ., էջ 7:

²¹ Տե՛ս **Էդ. Աղայան**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, էջ 282-291: Տե՛ս նաև **Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, Հայոց լեզու, 1-ին մաս, էջ 446-447:

-անոց/-նոց, -ապատիկ, -պէս, -ավետ, -ավոր, -ավուն²²: Մեկ այլ աշխատության մեջ բաղադրիչների բաժանված առկա են հետևյալ բառերը՝ համա-դաս, ստորա-կարգ, հակա-դարձ, հարմար-ավետ, գմբեթ-ավոր, կարմր-ավուն²³:

Ամփոփելով մեր դիտարկումները ժամանակակից հայերենում հոդակապի և ածանցների գործածության շուրջ՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

1. Հոդակապը ժամանակակից հայերենում սահմանվում է որպես միայն բարդության, այլ ոչ թե առհասարակ բոլոր տեսակի բաղադրությունների բաղադրիչներն իրար կապող մասնիկ:

2. Նախապէս հանդես գալով որոշ ածանցների հետ ևս՝ հոդակապը ժամանակի ընթացքում ձուլվում է ածանցին, որի արդյունքում նույն ածանցն ունենում է երկու տարբերակ կամ հանդես է գալիս միայն ա ձայնավորի հետ միաձույլ:

3. Քանի որ միայն իսկական բարդություններն են լինում հոդակապով և անհոդակապ, ինչպէս նաև վերը նշված մի շարք հիմնավորումներով պայմանավորված՝ կարծում ենք, որ ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում հոդակապը չպետք է տրոհել ածանցից:

²² Լ. Խաչատրյան, *Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում*, Ե., 2011, էջ 48-75:

²³ Թու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, *Հայոց լեզու, Ձևաբանություն*, Ե., 2008, էջ 46:

**1.2. ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ -ԵՆՔ, -ԱՆՔ, -ՈՆՔ, -ՈՒՆՔ ՁԵՎՈՒՅԹՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից հայերենի քերականական աշխատություններում նշվում է, որ **-ենք, -անք, -ոնք, -ունք** ածանցները կազմում են բառեր, որոնք իմաստային տարբեր դրսևորումներ ունեն²⁴: Դրանցում յուրահատուկ տեղ ունեն հավաքականություն կամ ստացականություն, միաժամանակ հոգնակիություն արտահայտող գոյականներն ու դերանունները, ինչպես՝ **Պողոսենք, Վարդանանք, մերոնք, պապոնք, Բաղունք** և այլն, որոնք ցույց են տալիս ընտանիք, գերդաստան, տոհմ կամ խմբակցություն: Ժամանակակից հայերենում վերոնշյալ ձևույթներն ունեն երկակի արժեք. դրանք հանդես են գալիս ինչպես ածանցի, այնպես էլ հոգնակերտ վերջավորության արժեքով: Այդ երկարժեքությունը դժվարություններ է հարուցում ուսումնական գործընթացներում՝ թույլ չտալով հստակորեն որոշել նշված ձևույթների արժեքը: Խնդիրը դժվարանում է հատկապես **-ոնք** ձևույթով պայմանավորված, որը հանդես է գալիս ոչ միայն հավաքական գոյականների (**տատոնք, պապոնք**), այլ նաև անձնական դերանունների սեռականի ձևերից բաղադրված ստացականներում (**իմոնք, քոնոնք, մերոնք, ձերոնք**), որոնք նույնպես տարբեր կերպ են ներկայացվում քերականական աշխատություններում, թեև քերականները դրանք հաճախ չեն առանձ-

²⁴Հմմտ. **Գ.Բ. Զահուկյան**, *Հին հայերենի վերջածանցների ծագումը*, «Պատմաբանասիրական հանդես», հ. 1-2, Ե., 1994, էջ 59, հ. 1, 1995, էջ 141: **Ա. Սուքիասյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 315: **Ս. Գալստյան**, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 95, 128, 153: **Ֆ. Խլղաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Բ պրակ, Ե., 2008, էջ 145-146:

նացնում և ներկայացնում են հավաքական գոյականների հետ միասնաբար: Թերևս այդ դժվարություններով է պայմանավորված նշված ձևայինները հաճախ պարզապես «մասնիկ» եզրությամբ ներկայացնելը՝ առանց նշելու՝ ածա՞նց է դա, թե՞ վերջավորություն: Ի դեպ, պետք է նկատել, որ **-ոնք** ձևությամբ է կազմվում նաև **որ** հարցահարաբերական դերանվան հոգնակին, որի դեպքում այն դիտարկվում է որպես հոգնակերտ վերջավորություն: Արևմտահայերենում նշված վերջավորությունը հանդես է գալիս նաև **աս** (**ասոնք**), **ատ** (**ատոնք**), **ան** (**անոնք**) դերանունների հոգնակիի ձևերում:

Մեր նպատակն է ուսումնասիրել հարցի վերաբերյալ եղած տեսակետներն ու մոտեցումները, ցույց տալ դրանց դերը հայերենի քերականական աշխատություններում:

Այսպես՝ Մ. Արեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Անվանական վերջածանցներ» բաժնում այսպես է բնութագրում նշված մասնիկները. «**Ենք, անք, ոնք, ունք** —անուններից և դերանուններից կազմում է անեզական գոյականներ՝ ստացական նշանակությամբ, ինչպես՝ **Խաչոյենք- Խաչոյի ընտանիքը, մարդիկ, Տիգրանենք, Մելիքենք, Վարդանանք, խնամոնք, Խուռոնք** կամ **Խուռուռք, քեռոնք, իմոնք, քոնոնք, մերոնք, ձերոնք**: —Ծագած է հին լեզվի «**եանք**», «**անք**» հոգնականից, ինչպես՝ **Ատոմեանք—Ատոմենք, Ղևոնդեանք-Ղևոնդենք, Վարդանանք, Մարիամանք (Մարեմանք)**»²⁵:

Հր. Աճառյանի դիտարկմամբ՝ «Հատուկ անունների հոգնակին անգործածական է, բայց գրաբարում կան սակավաթիվ օրինակներ, ինչպես՝ **Յուդայք, Միմոնից** և այլն (Զալխյան, էջ 25 ծան.), ավելի սովորական է **անք, եանք** վերջավորությամբ. Ինչ **Ներսիսեանք, -եանց, Վարդանանք, -նանց, նամբք** և այլն:

²⁵ Մ. Արեղյան, *Երկեր*, հ. Զ, Ե., 1974, էջ 207:

Աշխարհաբարում կարելի է հարկ եղած դեպքում հատուկ անունը հոգնակի դարձնել, օր.՝ *Սահակներ, Մեսրոպներ, Ներսեսներ* ենք ունեցել. և այս դեպքում հոգնակին ունի «*նմաններ*» նշանակությունը»²⁶:

Մ.Ասատրյանը նշված ձևույթները սահմանում է որպես ածանցներ՝ գրելով. «**Ենք, Անք, Ոնք, Ունք**— Կազմում են հավաքական գոյականներ, որոնք ցույց են տալիս մի ընտանիքի, գերդաստանի, տոհմի, խմբակցության պատկանող անձանց, օրինակ՝ **Գրիգորենք, Արամենք, Վարդանանք, Վասականք, Գոգոնք, տատոնք, պապոնք, քեռոնք, Վանդունք, Սայունք** և այլն»²⁷:

Ա.Սուքիասյանը ևս դրանք քննում է որպես ածանցներ՝ **-անք**-ի դիմաց գրելով, որ գոյական հիմքերից սակավաթիվ հավաքական գոյականներ է կազմում, որոնց մեծ մասը գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, և բերում է հետևյալ օրինակները. **Վարդանանք, հանդերձանք, աներանք, ջոջանք, մեծունանք, աղբերանք** և այլն²⁸: Այնուհետև **-ենք, -անք, -ոնք** ածանցները բնութագրում է է միասնաբար՝ հետևյալ մեկնաբանությամբ. «ա) կազմում է հավաքական հոգնակիի անեզական ձևեր. **Տիգրանենք, Ղևոնդենք, Գրիգորենք, Պողոսյանենք, խնամոնք, քեռոնք**, որոնց մեծ մասը կամ հնացած է, կամ էլ գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում. բ) **-ոնք** վերջածանցը կցվում է նաև դերանուններին, ինչպես՝ **մերոնք, ձերոնք, իմոնք, քոնոնք**»²⁹: **-Ունք** ածանցի համար այս կարգի օրինակներ չի բերում³⁰:

Խոսելով դերանվան ձևաբանական առանձնահատկությունների մասին՝ Հ. Հարությունյանն իր «Ածական անուն. Դերանուն»

²⁶ **Հր. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 425:

²⁷ **Մ. Ասատրյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2002, էջ 113:

²⁸ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 315:

²⁹ Նշվ. աշխ., էջ 319:

³⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 328:

աշխատության մեջ գրում է. «**Մերոնք** և **ձերոնք** դերանունները հոգնակի են, որոնք կազմված են անվանական **-ոնք** հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում են առաջին կամ երկրորդ դեմքերին վերաբերող, մոտ անձ, առարկա, **-ոնք**-ը փաստորեն նաև գոյականի հոգնակի հավաքականությունն է ցույց տալիս»³¹:

Ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ դերանունների հոլովմանը վերաբերող բաժնում նշվում է. «**Ց** հոլովման են պատկանում նաև մի շարք դերանունների հոգնակիներ՝ **խոնք—խոնց, քոնք—քոնց, մերոնք—մերոնց, ձերոնք—ձերոնց, իրենք—իրենց, սրանք—սրանց, նրանք—նրանց, որոնք—որոնց, ոմանք—ոմանց**, ինչպես և որոշ յուրահատկությամբ՝ **կին գոյականի հոգնակին՝ կանայք—կանանց**»³²: Ընդ որում այս աշխատության մեջ խնդրո առարկա ձևայինները տրվում են **մասնիկ** բնորոշմամբ, ինչպես՝ «Ժամանակակից գրական հայերենում **ենք, անք, ոնք, ունք** մասնիկներից **ց** հոլովման պատկանող բառեր ավելի շատ կազմվում են **ենք**—ով, այն էլ հատկապես հատուկ անուններից»³³, «**Ոնք** մասնիկով մեծ մասամբ կազմվում են այս հոլովման պատկանող հասարակ անձնանուններ»³⁴: Ի դեպ, հիշյալ աշխատության մեջ գոյականակերտ ածանցների մեջ դրանք նշված չեն:

Ալ. Մարգարյանն էլ այսպես է ներկայացնում. «**Ք** հոգնակերտը հանդես է գալիս նաև **-անք, -ենք, -ոնք** բաղադրյալ մասնիկներում, որոնք անձի անվան վրա դրվելով՝ անեզական կամ հավաքական գոյականներ են կազմում, հմմտ. **Աշոտ—Աշոտենք, Սու-**

³¹ **Հ. Ա. Հարությունյան**, *Ածական անուն. դերանուն*, Ե., 1976, էջ 76:

³² **Ս. Աբրահամյան, Ն. Պառնայան, Հ. Օհանյան**, *Ժամանակակից հայոց լեզու* («Դերանուն» բաժինը՝ **Ս. Աբրահամյանի**), հ. 2, Ե., 1974, էջ 101:

³³ Նշվ. աշխ., էջ 102:

³⁴ Նույն տեղում:

րեն—Սուրենենք, Վարդիթեր—Վարդիթերենք, Տիգրան—Տիգրանենք, Վարդան—Վարդանանք, Վեդի—Վեդունք, Ադո—Ադունք և այլն:

Հավաքական նշանակություն արտահայտելով՝ այդպիսի ձևերը անմիջականորեն չեն հակադրվում իրենց համապատասխան եզակի ձևերին և իմաստապես խստորեն տարբերվելով նրանցից՝ յուրատեսակ բառաքերականական ածանցներ են ներկայացնում լեզվի ձևաբանական համակարգում»³⁵:

Յու. Ավետիսյանի գնահատմամբ՝ «Անք, ենք, ունք, ոնք մասնիկներով բառաձևերը, որոնք երկու գրականներում էլ հոգնակիության յուրահատուկ իմաստ ունեն, ցույց են տալիս ոչ թե միևնույն տեսակի մեկից ավելի առարկաներ, այլ անձը իր յուրայիններով (Արամենք, Վահանենք, Վարդանանք, պապոնք, Բադունք, մերոնք), մնացուկային երևույթներ են»³⁶:

Գոյականի թվի կարգը ներկայացնելիս Ֆ. Խլղաթյանը նշված ձևությունները որպես վերջավորություն չի ընդունում. «Հոգնակիացնող ձևությունների շարքում երբեմն դասվում են **-անք, -ունք, -ոնք** ածանցները (Գ.Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր., 1967, էջ 46-47): Ճիշտ է, որ դրանց մեջ կա առարկաների բազմակիության իմաստ, սակայն դրանք քարացած ձևեր են և նշված ձևերը, ածանցները հոգնակերտ մասնիկներ համարելը ճիշտ չէ: Գոյականի թվի կարգը ենթադրում է համապատասխան բառերի եզակիի գոյությունը և նշանակում է այդ եզակի գոյականների շատությունը: Օրինակ՝ **քարեր** նշանակում է **շատ քար, աշակերտներ, բանվորներ՝ շատ աշակերտ, շատ բանվոր**: Մինչդեռ **պապոնք, քեռոնք, Սաթոնք** և նման ձևերը չեն նշանակում **շատ**

³⁵ Ալ. Մարգարյան, *Հայոց լեզվի քերականություն*, Ե., 2004, էջ 88:

³⁶ Յու. Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 42:

պապ, շատ քեռիներ, շատ Սաթո և այլն»³⁷։ Խ. Բաղիկյանը դրանք ներկայացնում է ն՝ որպես ածանց³⁸, ն՝ որպես վերջավորություն³⁹։

Հարցին առավել հանգամանորեն թերևս անդրադարձել է Էդ. Աղայանը՝ հոգնակիի կազմությունը քննելիս. «[**p**].-հոգնակերտ ուղղականի այս բազմիմաստ վերջավորություններն ունեն. ա) ազգակցություն կամ խմբակցություն (կողմնակցություն ևն) ցույց տվող հավաքական գոյականները, որոնք անեզական են (**մերոնք, ձերոնք, Վարդանանք, Հակոբենք, պապոնք** ևն...)»⁴⁰։

Ց հոլովմանը վերաբերող հատվածում վերոհիշյալ գոյականների մասին գրում է. «Սրանց բառակազմական առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ նրանք կազմվում են յուրահատուկ ածանցներով (**-ան-ք, -ուն-ք, -են-ք, -ոն-ք**), այլև այն, որ իբրև բառ էլ նշույթավորված են որպես հոգնակի ուղղական հոլով։ Այլ կերպ ասած, նրանք ունեն ուղղականի նշույթավոր վերջավորություն, առանց որի իբրև բառ էլ չեն կարող գոյություն ունենալ, ինչպես **-ի** վերջավորությամբ բառերը»⁴¹։ Այնուհետև մանրամասնում է. «Ուրիշ լեզուներում, օրինակ՝ ռուսերենում, անեզական բառերը ձևով հոգնակի են, բայց իմաստով եզակի (օր.՝ **ножницы, штаны** ևն), ըստ որում ցույց են տալիս մեկ առարկա, մինչդեռ մեր այդ անեզական բառերը իմաստով էլ հոգնակի են»⁴²։

Հետաքրքիր է, որ անեզական գոյականների՝ օտար լեզուներից թարգմանված մյուս խումբը, որ ձևավորվում է **-եր, -ներ** մասնիկներով և դարձյալ չունի համապատասխան եզակին, տա-

³⁷ **Ֆ. Խլղաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Գ պրակ, Ե., 2007, էջ 21։

³⁸ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն*, Ե., 2010, էջ 37։

³⁹ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, նշվ. աշխ., էջ 58։

⁴⁰ **Է. Աղայան**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., 1967, էջ 37։

⁴¹ Նշվ. աշխ., էջ 252-253։

⁴² **Է. Աղայան**, նշվ. աշխ., նույն տեղում։

րակարծությունների առիթ չի տալիս, ինչպես՝ **Ալպեր, Կարպատներ, Ապալաչներ** և այլն:

Պետք է նկատել, որ երևույթների այս երկարժեքությունը երբեմն պատճառ է դառնում ժամանակակից հայոց լեզվի բառակազմությունը, բառակազմական կաղապարները ոչ լիարժեք ներկայացնելուն: Այդ առիթով Լ. Խաչատրյանը գրում է, որ ժամանակակից հայոց լեզվի թվակազմական կաղապարները ներկայացնելիս ինքն անտեսել է նրանց «պատմական զարգացման ընթացքի նկարագրությունը, որով էլ մի շարք հարցեր կարիք են գգում լրացուցիչ բացատրությունների, ինչպիսին են, օր., **-իկ** և **-այք** հոգնակերտների գործառական սահմանափակությունը, **-անք** և **-այք** հոգնակերտների երկարժեք գործառույթները (թվանիշ և հոլովանիշ իմաստներով), դրանց հերթագայության դրսևորումները հոլովական իմաստներ արտահայտելու տեսանկյունից (**այք>անց, անք>անց**) և այլն»⁴³:

Մինչդեռ Գ. Ջահուկյանը նշված ձևույթների մասին խոսելիս գործածում է **վերջավորություն** եզրույթը. «.... դերանվանական հոգնակին ոչ միայն ձևով, այլև իմաստով հիշեցնում է **անք, ենք, ոնք** վերջավորություններով կազմությունները, այսինքն՝ վերջիններիս նման լրացական բնույթ ունի՝ **մենք = ես + այլ անձինք (դու, դա, դուք, նրանք), դուք = դու + այլ անձինք (նրա, նրանք), իրենք = ինքը + այլ անձինք**»⁴⁴:

Խոսելով դերանվանական թվակազմության մասին՝ Ջահուկյանը գրում է, որ այն բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով. 1) եզակիի և հոգնակիի ձևերի տարարմատությամբ և

⁴³ Լ. Խաչատրյան, *Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում*, Ե., 2011, էջ 162:

⁴⁴ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 215:

տարահիմքությամբ. 2) ուղիղ և թեք հոլովների համար թվային հակադրության տարբեր արտահայտությամբ. 3) հոգնակիի տարածված տիպերից տարբեր ձևավորմամբ. այս բառերի հոգնակին ուղղական հոլովում սովորաբար **ք** է պարունակում և մեծ մասամբ ձևով (ու իմաստով) հիշեցնում է **Վարդան-Վարդանանք, Գրիգոր-Գրիգորենք, պապ—պապոնք** լրացական-հավաքական հոգնակին: Այդ բառերն են՝ **ես—մենք** (թեք հոլովների դեպքում՝ **ինձ—մեզ**), **դու—դուք** (թեք հոլովների դեպքում՝ **քեզ—ձեզ**)...և այլն⁴⁵:

Թվակազմության այս տարբերությունները Ջահուկյանը բացատրում է նրանով, որ անձնական, ցուցական և հարցական բառերի համար բնորոշ է առարկայական իրադրականությունը, հաղորդակցման իրադրության հետ կապված լինելը⁴⁶: Թվի կարգը քննելիս ներկայացնում է թվաձևային հետևյալ 8 վերջավորությունները՝ **եր, ներ, իկ, այք, ք, անք (և յանք), ենք, ոնք**՝ իբրև ծանոթություն նշելով, որ այստեղ և այլուր **անք**-ի հետ հասկանում ենք **յանք**-ը, որ նույն գործածությունն ունի⁴⁷:

Նշելով, որ «...իրականում և՛ հիմքակազմ տարրերը, և՛ վերջավորությունները դիրքային սահմանափակություն (պայմանավորվածություն) ունեն, և կարող են հանդիպել միայն որոշ տիպեր», տալիս է վերջավորությունների գործածության (ընտրության) պայմանները, որում մեզ հետաքրքրող մասնիկների դիմաց հետևյալ «պայմաններն» է ներկայացնում՝ **անք**- հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում (արխաիկ և խոսակցական – բարբառային ոճերում), **ենք**- հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում (խոսակցական ոճում, **ոնք**—միավանկ ազգական անունների (պապ, տատ), այլև ստացական դերանունների

⁴⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 213:

⁴⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 214:

⁴⁷ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 176:

դեպքում⁴⁸: Այնուհետև տալիս է թվաձևերի բոլոր հնարավոր տիպերի կազմիչները՝ վերջավորություններով տարբերվող ձևերը դիտելով որպես տիպեր, իսկ ձևավոր հիմքերի կազմիչներով տարբերվող ձևերը՝ որպես ենթատիպեր. արդյունքում ստացվում է 15 թվաձև⁴⁹:

Գ. Զահուկյանը գրում է. «Վարդան-անք, Հակոբ-ենք, պապ-ոնք ձևերը՝ Վարդան-ներ, Հակոբ-ներ, պապ-եր ձևերի կողքին կապված են իմաստային լրացուցիչ տարբերությունների հետ, որոնք կարելի է որակել որպես դասային տարբերություններ, այլև ոճական բնույթ ունեն (հանդիպում են միայն որոշ ոճերում): Ի՞նչ իմաստային տարբերություններ են դրանք. **անք**-ը, **ենք**-ը և **ոնք**-ը հանդես են գալիս որպես համանուններ՝ ներառելով երկու կարգի իմաստ՝ **անք** = «կողմնակից, հետևորդ» + (ն)եր (Վարդանանք = Վարդան + կողմնակիցներ, Վարդանականներ), **ենք** = «ազգակից» + (ն)եր (Հակոբենք = Հակոբ + ազգակիցներ, «Հակոբյաններ»), **ոնք** = «մերձավոր, յուրային» + (ն)եր (պապոնք = պապ + մերձավորներ)>>⁵⁰: Տարբերակում է եզակի և հոգնակի ձևերի հակադրությունների հետևյալ իմաստային արժեքները՝ միաթվություն և անմիաթվություն (եզակիություն և հոգնակիություն՝ **տուն—տներ**), միասնականություն և անմիասնականություն (անընդհատականություն և ընդհատականություն, անհաշվականություն և հաշվականություն՝ **ջուր—ջրեր, խնձոր—խնձորներ**) և այլն, լիահատկանշայնություն և անլիահատկանշայնություն (մենահատկանշայնություն)՝ մեկնաբանելով հետևյալ կերպ. «տվյալ անվամբ նշանակվող առարկան որպես հատկանիշների մեկ ամբողջություն (որակ). թե որպես մեկ հատկանիշի կրող (այդ թվում՝ նաև որպես տվյալ

⁴⁸ Տե՛ս Գ. Զահուկյան, նույն տեղում:

⁴⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 177:

⁵⁰ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 179:

անունը կրող) առնելը՝ **Գրիգոր—Գրիգորներ** (Գրիգորի մեկ կամ մի քանի հատկանիշներն ունեցողներ կամ **Գրիգոր** անունը կրողներ)», **Գրիգոր—Գրիգորենք** (մարդիկ, որոնց համար ընդհանուր է Գրիգորի հետ կապված լինելու հատկանիշը) և այլն⁵¹:

Թվում է, թե Ջահուկյանի թվակազմական վերոհիշյալ դասակարգումը տալիս է մեզ հետաքրքրող հարցի պատասխանը, և վերոհիշյալ ձևույթները, այնուամենայնիվ, պետք է համարել վերջավորություն, սակայն ավելի ուշ հրատարակված «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում Ջահուկյանը վերջածանցների մեջ է ներառել **-նք, -ենք, -ունք** ածանցները՝ խնդրո առարկա բառերի կազմության տեսանկյունից ամենից կենսունակ **-ենք**-ի համար նշելով **Գրիգորենք, Հակոբենք** և այլն⁵², իսկ **-անք** և **-ունք** ածանցների համար այս կարգի բառերից օրինակներ չի բերում, այլ միայն՝ ա)աշխատանք, ընտրանք, հալածանք, չարչարանք և այլն. բ) կապանք, փշրանք և այլն⁵³, ակունք, թիկունք, շրթունք, սկզբունք և այլն⁵⁴:

Ամփոփելով մեր դիտարկումները՝ կարող ենք ասել, որ **-անք, -ենք, -ոնք, -ունք** ձևույթները, որոնք հանդես են գալիս ընտանիք, խմբակցություն և նշանակող բառերի կազմում, հայերենի քերականական աշխատություններում ներկայացված են երկակի արժեքով ոչ միայն դրանց իմաստային յուրահատուկ դրսևորումներով պայմանավորված, որոնք տարբերություններ են դրսևորում ինչպես հոգնակիի սովորական ձևերի, այնպես էլ հավաքական մնացած գոյականների համեմատությամբ, այլև անձնական և ստացական դերանունների հետ դրանց ունեցած սերտ առնչակ-

⁵¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ աշխ., էջ 182-183:

⁵² Տե՛ս **Գ.Բ.Ջահուկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 307:

⁵³ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 305:

⁵⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 311:

ցությամբ: Քերականները հաճախ այս կարգի գոյականները ևս, ինչպես **իմոնք, մերոնք, քոնոնք, ձերոնք** դերանունները, ներկայացնում են **ստացական** բնորոշմամբ: Թերևս հարցի լուծումը պետք է փնտրել հենց այս հարթությունում, որը, սակայն, առանձին ուսումնասիրության առարկա է, և որին կփորձենք անդրադառնալ հետագայում:

1.3. ՆՈՅԱՆ ԵՎ ՆՈՅՅԱՆ ԲԱՌԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայտնի է, որ լեզվի զարգացման ընթացքում այս կամ այն բառը կարող է հանդես գալ զուգաձևություններով, որոնք հավասարապես ընդունելի և գործածական են լինում տվյալ հանրության կողմից: Սակայն լեզուն, այնուամենայնիվ, ձգտում է միօրինակեցնացման, իսկ այդ գործառույթն իրականացնում է **լեզվական նորման**. այն սահմանում է, թե բառային տարբերակներից ո՛րն է ընդունելի: Այդ կարգի զուգաձևություններից կարելի է համարել նաև **նոյան և նոյան** բառազույգը, որոնցից այսօր ընդունելի է առաջինը⁵⁵: Երկրորդի գործածությունը թեև չի հանձնարարվում, սակայն այսօր գրավոր խոսքի տարբեր դրսևորումներում այն շարունակում է սխալմամբ գործածվել:

Մեր ուսումնասիրության նպատակն է ցույց տալ բառի կազմությունը և գործածությունը հայերենի զարգացման տարբեր փուլերում, բառարանային վկայություններով փորձել հիմնավորել մերժելի տարբերակի գործածության սխալ լինելը:

Բառերի արմատը, բնականաբար, **Նոյ** անձնանունն է, որի մասին Հր. Աճառյանը հետևյալ տեղեկություններն է տալիս. «Նոյ, ար., եբր. Noxa անվան հուն. տառադարձությունից. մյուսներն ունեին ասոր. Nox , լտ. Noah, ֆրանս. Noe, արաբ. Nuh ևն ձևերը (Հիւրշ. 335): Այս անունը հները մեկնում էին իբրև եբր. «հանգիստ». Այսպես՝ եբրայեցուց լեզուան կոչի Նոյ, իսկ հայովս «հանգիստ կամ արդար» (Փիլ. իմաստ. 39), «Նոյ՝ հանգիստ» (Տաթև. հարց.299): Նոր քննիչները համեմատում են հին բաբել.Nuhija անվան հետ (Qesenius, 495): Ewald, Gesch.d.Volks Isr. I.360 դնում է կորած nax

⁵⁵ Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝ **Հ.Խ. Բաբսեդյան** (1956-2006), Ե., 2006, էջ 279:

արմատից, իբր «նոր, նորոգի»: Այս անունով հայտնի է Ս. Գրքում Նոյ նահապետը, որ ազատվել է իր տապանով մեծ ջրհեղեղից: Հայերենում Նոյ բառը ունի հնչյուն են ու, իսկ ընդհանրապես ու (ինչպես խոյ): Անսովոր անուն է, այժմ անգործածական»⁵⁶:

Առաջին տարբերակի կազմությունը հետևյալն է՝ **Նոյ+-յան ածանց**, իսկ երկրորդ՝ մերժելի տարբերակում գոյականը հանդես է գալիս **ան** վերջավորությամբ, որին տարբեր մեկնաբանություններ կարելի է տալ: Սա թերևս այն դեպքերից է, երբ սխալը, լեզվական նորմայից շեղումը, լայն գործածություն ունենալով, տարածվում է և աստիճանաբար հավակնում է վերածվելու ճիշտ տարբերակի:

Այն հավանաբար պայմանավորված է բառի հոլովման թյուր ընկալմամբ և մեկնաբանությամբ: **Նոյ** բառը գրաբարում հոլովվում էր **ի** հոլովմամբ, և այդպես է գործածված Աստվածաշնչում: Այն չէր կարող պատկանել **ա** ներդրական հոլովման, քանի որ այդ հոլովմանը պատկանող բառերը ավարտվում են **ն** վերջնահնչյունով: Ժամանակակից հայերենում ևս բառը **ան** հոլովիչով չի թեքվում:

Անդրադառնալով գրաբարի հոլովման առանձնահատկություններին՝ վերհիշենք, որ այն ուներ 5 պարզ հոլովում՝ **ա, ե, ի, ու, ո**, որոնցից **ա**-ն և **ի**-ն հանդես էին գալիս թե՛ որպես ներդրական, թե՛ որպես վերջադրական հոլովումներ: **Նոյան** ձևը ճիշտ համարելու հիմք կարող էր դառնալ բառի՝ **ա** ներդրական հոլովմամբ հոլովվելը, սակայն դա հերքվում է ինչպես քերականական աշխատությունների տվյալներով, այնպես էլ աստվածաշնչյան օրինակների քննությամբ:

Ա ներդրական հոլովման պատկանում են՝ **ն**-ով և նրան նախորդող մի այլ բաղաձայնով ավարտվող բառերի մի մասը (**ակնական, ամառն-ամառան, դուռն-դռան** ևն), **-ումն** վերջածանցով

⁵⁶ **Հր. Աճառյան**, *Հայերեն անձնանունների բառարան*, Ե., 4, 1942, էջ 82:

(հարցումն- հարցման, շարժումն-շարժման են), -մն-ով (այծեամն-այծեման, կողմն-կողման), -ու-ով ավարտվող (անուն-անունան, ձեռուն-ձեռունան), -իկ և -ուկ փոքրացուցիչ-նվազական ածանց ունեցող (որոշ դեպքերում ածանցը չի գիտակցվում) մի շարք բառեր (աղջիկ-աղջկան, մանուկ, մանկան են) որոշ հատուկ անուններ՝ Աստղիկ- Աստղկան, Ձուիկ- Ձրկան (=Ձուրկան), Յուսիկ-Յուսկան, Սաթնիկ կամ Սաթինիկ- Սաթինկան են, -ութին վերջածանց ունեցող՝ Բազմութին-բազմութեան, իմաստութին - իմաստութեան են, -ին վերջածանցով կամ արմատական հնչյունակապակցությամբ ավարտվող բառեր (անկին-անկեան, արին-արեան են), -ունդ, -ուստ, -ուրդ վերջածանց ունեցող մի շարք (ծնունդ-ծննդեան, գալուստ- գալստեան, ժողովուրդ- ժողովրդեան են), ձևական ընդհանրություն չունեցող այլ բառեր (տեսիլ-տեսլեան, ամիս-ամսեան, տիւ- տուրնջեան են)⁵⁷:

Նկատենք, որ գրաբարի քերականական աշխատություններում նշված բառաշարքերում **Նոյ** անձնանունը չի հիշատակվում. այն հոլովվում է **ի** հոլովմամբ, որի վկայությունները գտնում ենք ինչպես քերականական որոշ աշխատություններում⁵⁸ (գրաբարի քերականական մի շարք աշխատություններում **ի** հոլովման պատկանող բառերի ցանկում անձնանունը չի հիշատակվում⁵⁹), այնպես էլ Աստվածաշնչում, ինչպես՝ «Եւ այս են ծնունդք **Նոյի**», Գլուխ Է, էջ 29: «Յաւուր յայնմիկ եմուտ **Նոյ**. Սէմ, Քամ, Յաբէթ, որդիք **Նոյի** , և կին **Նոյի**, և երեք կանայք որդւոց նորա ընդ նմա ի տապան անդր», Է, 30: «Յամին վեցհարիւրորդի կենացն **Նոյի**...», 30: «Եւ խօսեցաւ Տէր Աստուած ընդ **Նոյի**, ասէ. Ե՛լ ի

⁵⁷Մանրամասն տե՛ս Ա.Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 1976, էջ 28-34:

⁵⁸Տե՛ս Վ.Առաքելյան, *Գրաբարի քերականություն*, Ե., 2010, էջ 38:

⁵⁹Ա.Ա.Աբրահամյան, նշվ.աշխ., էջ 38: Վ. Համբարձումյան, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 2018, էջ 88: Լ.Մ. Խաչատրյան, Գ.Բ. Թոսունյան, *Գրաբարի դասագիրք*, 2004, էջ 47:

տապանէ անդր...», 32: Եւ ե՛լ Նոյ. և կին նորա և որդիք նորա, և կանայք որդւոց նորա ընդ նորա, 32: «Տէր Աստուած ընդ **Նոյի**...», 32: «Զտունն **Նոյի**...», էջ 19, «...որդւոյն **Նոյի**», 34 (տե՛ս Աստուածաշունչ, ի գործարանի Սրբոյն Ղազարու, 1805, Ի Վենետիկ):

Ինչպէս տեսնում ենք, բառի գործածության առաջին և հիմնական աղբյուր համարվող մատյանում հանդիպում է միայն **Նոյի** ձևը: Հետևաբար սեռականում **Նոյան** ձևը պետք է բացառել:

Անդրադառնանք **Նոյ** անձնանվան և նրանից բաղադրված ձևերի բառարանային վկայություններին: Այսպէս՝ «**Նոր բառգիրք հայկազեան լեզուի**» աշխատության մեջ վկայված են հետևյալ բաղադրությունները. «**Նոյական**, ի, ագ, **Նոյեան**. ա. Մեպհական Նոյի նահապետի, և աւուրց նորա. Ծնունդք նոյական ազգին. Մանդգ: Մասամբ նոյեան տապանին. Շար.: Եւ նոյեան խաչանշանն, որ (կամ նոր) տապանիւ ապրեցուցեալ. Մագ.աւ.խաչ: Նոր նոյեան (այս ինքն քսի) տապանն (եկեղեցի) քոյդ դադար. Շ. պաղ հոիփս: Նոյն նոյեան տապան, տախտակ տառիցն օրինաց. Տղ կոստ. ի կոյսն : Ի նոյեան դարուն. Տօնակ»⁶⁰:

Նոյանք.Նոյեանք գոյականները վկայված են հետևյալ մեկնաբանությամբ. <<Նոյ և ընտանիք նորա. Կարօղ էր և առանց տապանի ապրեցուցանել զնոյանսն ի ջուրց ջրհեղեղաց. Շ.: **Նոյինասաստ**. ի. ա. գ. Առ նոյի եղեալ սաստ ջրհեղեղի.նոյինասաստին նորոգ կենաց պատճառ ցուցար. Սիան տաղ խչ>>⁶¹:

Միջին հայերենի բառարանում որևէ վկայություն չկա⁶²:

Ստ.Մալխասյանցը ևս տալիս է **Նոյական** և **Նոյեան** ածականները՝ «Նոյ նահապետին յատուկ, վերաբերյալ» իմաստներով՝

⁶⁰Գ.Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ.Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 2, Վենետիկ, 1837, էջ 439:

⁶¹Գ.Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ.Աւգերեան, նշվ. աշխ., նույն տեղում:

⁶²Տե՛ս Ռ.Ս. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 576:

Նոյական ազգ: Նոյեան տապան⁶³: Նոր շրջանի ուղղագրական բառարաններում նշված է միայն **նոյյան** ձևը՝ «Նոյին հատուկ՝ վերաբերող» նշանակությամբ, **Նոյի աղավնի, տապան** կամ **Նոյի կառուցած** գործածություններով⁶⁴:

Էդ.Աղայանի բացատրական բառարանում դարձյալ **Նոյյան** ձևն է վկայված, և նշված են՝ **Նոյյան աղավնի՝ աղավնյակ** (հնգ.), որին անհամբեր սպասում են, և որը հանձնարարություն կատարելուց հետո վերադառնում է⁶⁵: Մինչդեռ քառահատոր բացատրական բառարանում նշված են միայն՝ **Նոյան, Նոյի** ձևերը՝ **Նոյի ագռավ, Նոյան աղավնի՝ աղավնյակ** գործածություններով⁶⁶: Այս դեպքում հավանաբար կարևորվել է ամփոփման երևույթը, կամ հիմք են ընդունվել գեղարվեստական գրականության նմուշները, որոնցում նախապատվությունը կարծես թե տրվել է մեկ յ-ով տարբերակին՝ հավանաբար համաբանությամբ խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով:

«Արևակ» էլեկտրոնային շտեմարանում **Նոյան** ձևի համար նշվում է ընդամենը **171** համատեքստային հղում, որից՝ գեղ.՝ 78, ոչ գեղարվ.՝ 5, մամուլ՝ 53, բանաստեղծություն՝ 8 և 114 տեքստային գործածություն: **Նոյյան** բառի դիմաց նշվում է ընդամենը **11.107** համատեքստային գործածություն, որից՝ գեղ.՝ 57, ոչ գեղ.՝ 5, մամուլ՝ 11.039, բանավոր՝ 6 և 1.488 տեքստային, բոլոր գործածությունները՝ մամուլից:

⁶³ Սո.Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, 3, Ե., 2010, էջ 474:

⁶⁴ Տե՛ս **Ա.Սուքիասյան, Զ.Սուքիասյան**, Ուղղագրական-ձևակազմական բառարան (տապան, աղավնի), Ե., էջ 251: **Հ.Խ., Բարսեղյան**, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան*, Ե., 1973, էջ 711: **Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան**՝ Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան. պատկերազարդ ընթերցարան (Նոյին հատուկ՝ վերաբերող՝ Նոյի տապան կամ Նոյի կառուցած), Ե., 2011, էջ 121:

⁶⁵ **Էդ.Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 1079:

⁶⁶ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.4, Ե., 1980, էջ 41:

Ներկայացնենք **Նոյան** տարբերակի գործածության օրինակներ հայ գրականությունից. «Այսպես արարեց և հավերժորեն հայ կնքեց հային, Հայ կնքեց հավերժ հայ ավագանում իրՀավերժամունչ մայր Արաքսի մեջ, Ուր գահին է **Նոյան**՝ ուր Մասիսն է Պերճ Իմ հայրենասուրբ զայրույթն ահարկու, Իմ Մասիսն ինքն է տապանը **Նոյան**», «Անիծում եմ խաբող ճամփան իմ բախտի, Ճամփես փշով կապող կապանն իմ բախտի, Ես խեղդվեցի իմ կարոտի հեղեղով, Գերի մնաց **Նոյան** տապանն իմ բախտի» (Հովհ. Շիրազ), «....որ **Նոյան** տապանը նստի, ու Հայոց երկրիցը էլ ետ մարդիկ բազմանան...» (Խ.Աբովյան), «....սակայն մոռացավ ու մտահանեց, որ Արարա՛տն էր, հենց Արարա՛տն էր, հենց Արարատն էր **նոյան** փրկիչի, որ Արարատի՛, հենց Արարատի ստորոտներում ապրեց. բազմացավ մարդու սերունդը» (Պ. Սևակ, Եռաձայն պատարագ), «...թե էս երկնանման բարձրությունից էին Հայք իրանց աշխարհին մտիկ տալիս, Մասսա, Ալագյազի վրա խնդում, **Նոյան** տապանը, Լուսավորչու կանթեղը...» (Մուրացան, Լուսավորչու կանթեղը) են: Այն գործածվել է նաև Պ. Պռոշյանի (**Նոյան տարվանից** բառակապակցության մեջ), Խ. Դաշտենցի, Էդ. Ավագյանի ստեղծագործություններում, Հայկական սովետական հանրագիտարանում (**Նոյան տապան**) են:

Կարծում ենք, որ հայ գրականության բազմաթիվ արժեքավոր նմուշներում գործածվելով պայմանավորված՝ ժամանակի ընթացքում լայն տարածում է գտել **Նոյան** տարբերակը, որի գործածությունը մերժելի է ժամանակակից հայերենում և չի հիմնավորվում բառակազմական ու քերականական օրինաչափություններով: Հիմնավոր և ընդունելի է կրկնակ բաղաձայններով **նոյան** տարբերակը, որն ամրագրված է տերմինաբանական կոմիտեի տեղեկատուում:

1.4. ԿԻՍԵԼ ԵՎ ԿԻՄՎԵԼ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայտնի է, որ լեզուն անփոփոխ, քարացած երևույթ չէ և անընդհատ փոփոխվում ու կատարելագործվում է: Այդ փոփոխությունները պայմանավորված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով: Լեզվի պատմական զարգացման ընթացքում փոփոխության կարող են ենթարկվել բառի ինչպես ձևը, այնպես էլ իմաստը:

Այդ առումով ուշագրավ է **կիսել** և **կիսվել** բայերի գործածությունը ժամանակակից հայերենում: **Կես** անստույգ արմատով⁶⁷ բաղադրված **կիսել** «կես անել» ներգործական բայի հիմնական իմաստի կողքին հատկապես խոսակցական լեզվում և սոցիալական ցանցերում լայն գործածություն է ստացել մեկ այլ՝ **«մի բանի մասնակից, հաղորդակից դարձնել»** իմաստը, որի գործածությունը տարակարծությունների առիթ է տալիս և միանշանակ չի ընդունվում մասնագետների շրջանում: Մերժելի են համարվում այնպիսի կապակցություններ, ինչպիսիք են, օր., **կիսել կարծիքը, կիսել մտահոգությունը, կիսվել տպավորություններով, կիսվել խորհուրդներով** ևն:

Մեր ուսումնասիրության նպատակն է բացահայտել վերոհիշյալ բառերի իմաստային դրսևորումները հայերենի պատմական զարգացման ընթացքում, ներկայացնել դրանց գործածությունը լեզվի տարբեր շրջաններում (եթե դրանք կան), փորձել հիմնավորել, թե ինչու՝ են դրանք սխալ կամ արդյո՞ք սխալ են :

⁶⁷ Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., էջ 581-582: **Գ.Բ. Ջահուկյան**, *Ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 403: **Կես** արմատը համապատասխանում է նոստրատիկ լեզուների համեմատական բառարանում ներկայացված **kāčā** «կտրել, կիսել» ձևին (տե՛ս **Վ. Համբարձումյան**, *Հայերենի բառաբանական և ստուգաբանական ուսումնասիրություններ*, Ե., 2012, էջ 62):

Սովորաբար մերժելի լեզվական միավորի դեպքում հիմնավորվում է, թե ինչու է այն սխալ. օտարաբանությունն է, բարբառային է, քերականորեն ոչ ճիշտ կազմությունն է ևն: Խնդրո առարկա բառերի դեպքում այդ հիմնավորումներն այնքան էլ համոզիչ չեն կամ ընդհանրապես բացակայում են համապատասխան աշխատություններում: Այսպես՝ Խ. Բաղիկյանի «Ճիշտ խոսենք հայերեն» գրքի ճիշտ և սխալ ձևերին վերաբերող հատվածում կարդում ենք հետևյալը. «...Նույնը կարելի է ասել **կիսել** և **բաժանել** բայերի ոչ տեղին գործածության մասին (չէ՞ որ ամեն բան *չի կիսվում*, իսկ բանավոր խոսքում մարդիկ իրար միջև **կիսում են** ուրախություն ու տխրություն, վիշտ ու թախիծ, **բաժանում են** կարծիք ու համոզմունք և այլն: Քիչ չենք լսում՝ «**Կիսում եմ** ձեր վիշտը», փոխանակ՝ *վշտակցում եմ, ցավակցում եմ*)»⁶⁸:

Անշուշտ, ուղիղ իմաստով հնարավոր չէ **կիսել կարծիք** կամ **ուրախություն**, իսկ փոխաբերաբար ինչու՝ հնարավոր չէ, կամ դրանք ինչու՝ չընդունել իբրև հոմանիշներ՝ չի նշվում: Ի դեպ, եթե վերոհիշյալ օրինակների դեպքում փոխարինող տարբերակները կան, ապա այլ դեպքերում դժվար է գտնել: Ներկայացնենք բառերի իմաստային դրսևորումների բառարանային վկայությունները՝ պարզելու համար մեզ հետաքրքրող հարցերի պատասխանը: Այսպես՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ, ինչպես նաև գրաբարի բառապաշարն ընդգրկող մյուս բառարաններում վկայված է միայն **կէս**-ը՝ գոյականական, ածականական, մակբայական տարբեր նշանակություններով՝ «կէսը, հաւասարը, կէս մասը, մէջ, միջին» ևն, ինչպես նաև բազմաթիվ բաղադրություններով: Իսկ նրանով բաղադրված **կիսել**-ը վկայված չէ նշված

⁶⁸ Խ. Բաղիկյան, *Ճիշտ խոսենք հայերեն*, Ե., 2012, էջ 81:

բառարաններում⁶⁹. կարելի է ենթադրել, որ գրաբարյան շրջանում բայն ընդհանրապես չի գործածվել: Միջին հայերենի բառարանում ևս բայը նշված չէ, **կես** բաղադրիչով վկայված են միայն մի քանի բաղադրություններ⁷⁰: *Կիսել* և *կիսվել* բայերը վկայված են միայն ժամանակակից հայերենի բառարաններում՝ հետևյալ իմաստներով և համապատասխան օրինակներով, որոնք կներկայացնենք ստորև:

Ըստ Ստ. Մալխասյանցի՝ բառն ունի հետևյալ իմաստները. «**Կիսել**, եցի, նբ., կես անել, երկու կեսի բաժանել: Խնձորը կիսեց, կեսն ինձ տուեց, միւս կեսը ինքը կերավ: Վնասն էլ, օգուտն էլ հաւասար կիսենք: **Կիսվել**, վեցի, կբ., չբ., նոյն նշ.: Խնձորը հաւասար չկիսվեց: Բջիջները բազմանում են կիսվելով»⁷¹: Նկատելի է, որ մեզ հետաքրքրող իմաստային գործածություններն այստեղ նշված չեն:

Ժամանակակից հայոց լեզվի քառահատոր բացատրական բառարանում կարդում ենք հետևյալը. «**Կիսել**¹, եցի, նբ, 1. կես անել, երկու կեսի՝ երկու մասի բաժանել: Ծերունին պարկի կորեկը կիսեց (ԱԲ): 2. Հատել, կտրել, Թագավորը կովի մեջ արդեն սրով կիսել էր նրա կլուխը (Մ): 3. Պակասեցնել, նվազեցնել: Ամեն անգամ նրա վարձը կիսում էր, իր բաժինը պահում (Մամուլ): 4. Կիսատ թողնել, խափանել, խանգարել: Այս վեհ գիշերին, այսքան խաղաղ, Ամոթ է

⁶⁹ Տե՛ս **Գ. Աւետիքեան, Խ. Միրումեան, Մ. Աւգերեան**, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 1, Վենետիկ, 1836, էջ 1094, 1097: **Մկ. Աւգերեան, Գր. Ճէլալեան**, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 438: **Ռ. Ս. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, հ. 1, Ե., 2000, էջ 656: **Լ. Խաչատրյան**, *Գրաբարի ուսումնական բառարան*, Ե., 2013, էջ 185: **Լ.Շ. Հովհաննիսյան**, *Գրաբարի բառարան-Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, էջ 154: **Ռ. Ս. Ղազարյան**, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Ե., 2012, էջ 65, **Ռ. Ս. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան**, *Նորայայտ բառեր գրաբարում*, Ե., 2007, էջ 53:

⁷⁰ Տե՛ս **Ռ.Ս. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 370:

⁷¹ **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 440:

մարդու նինջը կիսել (ՀՀ): **5.Հաղորդակից դարձնել, բաժանել, մի բանի մասնակից դարձնել:** Ինչպես մայրս էր վիշտս կիսում՝ Համբուրելով ինձ մի վայրկյան (ՀՇ)» (ընդգծ.՝ Վ.Ն.)⁷²: Նկատելի է, որ վերջինը մեզ հետաքրքրող իմաստն է: Նույն աշխատության մեջ, սակայն, փոխադարձ սեռի՝ մեզ հետաքրքրող բայիմաստը (**կիսվել տպավորություններով**) նշված չէ⁷³:

Է. Աղայանի բառարանում ևս վկայված է «հաղորդակից դարձնել, բաժանել, մի բանի մասնակից դարձնել» իմաստը՝ «Վիշտդ կիսի՛ր ինձ հետ» օրինակով: Նախորդի համեմատությամբ այստեղ հավելված է նաև «որևէ բանի կես մասն անել՝ անց կացնել՝ կատարել, կեսին հասնել» իմաստը՝ «Այս տարին էլ կիսեցինք» օրինակով⁷⁴: Նույն տեղում **կիսվել** բայը ներկայացված է որպես **կիսել-ի**, կրավորական և չեզոք տարբերակ⁷⁵:

Հր. Աճառյանի «Հայերեն գալառական բառարանում» **կես** բաղադրիչով բաղադրված բազմաթիվ բառեր են վկայված, ինչպես՝ **կես-գիշեր, կես-բերան, կիսաբերան, կիսագագ, կիսագնի, կիսա-խեղդ լինել, կիսակուշտ, կիսատ, կիստուկ** ևն, սակայն **կիսել** բայը վկայված չէ⁷⁶: Հայոց լեզվի բարբառային բառարանում ևս նշված են բազմաթիվ բառեր, ինչպես՝ **կիսաջան, կիսասիրտ, կիսատիկ** «խեղանդամ», **կիսաքամ, կիսկոտել** («1.Կիսել, բաժանել, երկու կես անել, 2. երկպառակտել, անմիաբանություն ստեղծել, քայքայել»), **կիսվրտիլ** («որևէ բան երկու հոգու միջև հաւասար բաժանել»),

⁷² *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Հր. Աճառյանի անվ. ԼԻ, Ե., 1969, հ. 3, էջ 140:

⁷³ Տե՛ս նույն տեղում:

⁷⁴ Տե՛ս **Է.Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ.1, Ե., 1976, էջ 735:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

⁷⁶ Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայերեն գալառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ, 567, 570-571:

կիստել («պարունակությունը կիսատել, պակասեցնել»)⁷⁷ և, բայց **կիսել** բայը վկայված չէ:

Համացանցում մեծ տարածում է գտել անգլերեն **share** բայը, որի ռուսերեն համարժեքն է **поделиться**, իսկ հայերեն թարգմանվում է **կիսվել** տարբերակով, ուստի հետաքրքիր է ծանոթանալ նաև թարգմանական բառարանների տվյալներին: Այսպես՝ «Անգլերեն-հայերեն բառարանում» նշված են բառի գոյականական և բայական իմաստները, որոնցից կներկայացնենք միայն վերջինները. «Share 2.v.1) բաժանել, բաշխել. բաժին տալ, բաժին հանել. 2) մասնակցել, բաժին ունենալ (որևէ բանի մեջ՝ in). 3) **համատեղ դիտել. բաժանել** (որևէ բան **որևէ մեկի հետ՝ with, or.՝ ուրախություն**)» (ընդգծ.՝ Վ.Ն.)⁷⁸: Ինչպես տեսնում ենք, այս բառարանի հեղինակները ևս ներկայացնում են բառի՝ մեզ հետաքրքրող իմաստային դրսևորումը:

Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» **поделить** և **поделиться** բայերի այլ իմաստների կողքին նշված են վերոհիշյալ փոխաբերական նշանակությունները ևս. «Поделить կատ. что 1. իրար մեջ բաժանել. – барышы оգուтор իրար մեջ բաժանել. – пополам իրար մեջ հավասար բաժանել, կիսել: 2. с кем բաժին հանել, կիսել, – последнее с другом բարեկամի հետ վերջին ունեցածը կիսել: 3. **փխր.բաժանել, միասին վերապրել.** – с ним тяжесть забот նրա հետ բաժանել հոգսերի ծանրությունը»⁷⁹:

«Поделиться կատ. 1. իրար մեջ բաժանել, իրար բաժին հանել. – сь со мной деньгами քո փողից ինձ բաժին հանի՛ր. փողդ ինձ հետ կիսի՛ր: 2. – **с кем հաղորդել, պատմել, բաժանել, հաղորդակից դար-**

⁷⁷ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, ԳԱԱ ԼԻ, Ե., 2004, էջ 95-96:

⁷⁸ Հ. Ասմանգուլյան, Մ. Հովհաննիսյան, *Անգլերեն-հայերեն բառարան*, Ե., 1984, էջ 857:

⁷⁹ Ա. Ս. Ղարիբյան, *Ռուս-հայերեն բառարան*, Ե., 1977, էջ 798:

ձնել. –радостью с кем-л. որևէ մեկի հետ ուրախությունը բաժանել, մեկին իր ուրախությանը հաղորդակից անել (ընդգծ.՝ Վ.Ն.)⁸⁰:

Ա. Սուքիասյանի «Հումանիշների բառարանում» **կիսել** բայի հետևյալ իմաստներն են նշված՝ առանց փոխաբերականի. «Բաժանել, երկատել, երկփեղկել, (հզվդ.) մասմասել, զուգաբաժանել, երկկիսել [հավասար], ընդմիջել (հնց.), մաս-մաս անել, բաժան-բաժան անել, կես անել, տապակ անել, երկու անել (բրբ.) մեջ անել, խոթել, փայել, ճոթ անել»⁸¹: **Կիսվել** չեզոք բայի համար «բաժանվել, երկատվել, երկփեղկվել, կես լինել» կրավորականներն են միայն նշված⁸²:

Մինչդեռ բայի՝ մեզ հետաքրքրող իմաստը վկայված է նաև Ե. Գևորգյանի «Համանունների բառարանում». «1.Կիսել նբ 1.Կես անել, երկատել: 2.Կտրել: 3.Պակասեցնել: 4.Կիսատ թողնել, խանգարել: 5.**Մի բանի մասնակից, հաղորդակից դարձնել**» (ընդգծ.՝ Վ.Ն.)⁸³:

Արևմտահայերենի բառարաններում բայը կամ նշված չէ⁸⁴, կամ նշված է առանց իմաստային մեկնաբանության («կիսուիլ [զիսվիլ], կբ.չբ»⁸⁵:

Հետաքրքիր վկայություններ կան Պ. Բեդիրյանի դարձվածաբանական բառարանում, որում *կիսել* բայով ներկայացված են հետևյալ դարձվածքները. «**493 մի բան մեկի հետ կիսել**¹՝ Մտերմաբար բաժնեկից դառնալ՝ դարձնել:

Նրանց հետ մենք կիսել ենք ոչ միայն նահանջի դառնությունն ու հաղթանակի հրճվանքը, այլև մի կուր ջուրը, մի կտոր հացը (ՄՍ

⁸⁰ Ա. Ս. Ղարիբյան, նշվ. աշխ., նույն տեղում:

⁸¹ Ա. Սուքիասյան, *Հումանիշների բառարան*, Ե., 1967, էջ 324:

⁸² Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., նույն տեղում:

⁸³ Ե. Գևորգյան, *Ժամանակակից հայերենի համանունների բառարան*, Ե., 1978, էջ 181:

⁸⁴ Ա. Սարգսյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, էջ 178:

⁸⁵ Ռ. Մաքսալետոյեան, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան*, Ե., 2011, էջ 162:

«ՄՀ»): Անշահախնդիր կերպով ու շռայլորեն պատրաստ է այդ փորձը նորից կիսելու ուրիշների հետ («Մդ», թրգմ):

494 մի բան մեկի հետ կիսել²(անխրիստ.) (ռուս. делить что с кем, делиться с кем) – Մեկի հետ մի բանում հավասարապես հաղորդակից լինել: Ամեն վայրկյան ու ակնթարթ /Դու՛ ես միայն ինձ հետ կիսել/Թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ, -/Մաքու՛ր իմ սեր (Չ, Իմ մուսային):

495 մի բան երկուսի միջև կիսել– Երկու ուղղությամբ աշխատել, ջանք թափել նա: Կնոջը մեծ մասամբ չի հաջողվում աշխատանքում իր բոլոր հնարավորությունները դրսևորել, քանի որ իր ուշադրությունը, ժամանակն ու ջանքերը կիսում է ընտանիքի և աշխատանքի միջև («Գար.»)⁸⁶: Հետաքրքիր է, որ միայն երկրորդ դարձվածքի գործածությունն է համարվում անխրախուսելի:

Այսպիսով՝ **կիսել** բայը վկայված է միայն ժամանակակից հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում, որոնցում նշված են մինչև վեց՝ ուղիղ և փոխաբերական իմաստներ, իսկ բայի **«մի բանի մասնակից, հաղորդակից դառնալ»** իմաստը նշված է գրեթե բոլոր բառարաններում, և միայն մեկ դեպքում է նրա դիմաց տրված **անխրախուսելի** հուշումը:

Բայի գործածության լավագույն դրսևորումը թերևս Հ. Սահյանի պոեզիայում ենք գտնում.

Ես կուզեի քեզ հետ **կիսել**
Վերջին պատառն իմ հացի,
Ես կուզեի քեզ հետ **կիսել**
Վերջին արցունքն իմ լացի:
Ես կուզեի քեզ հետ **կիսել**

⁸⁶ Պ. Բեդիրյան, *Հայերեն դարձվածաբանական ընդարձակ բառարան*, Ե., 2011, էջ 666:

Մրտիս բեկորը վերջին,
Ես կուզեի քո գրկի մեջ
Մթներ իմ օրը վերջին...
Ես կուզեի՝ ինչ որ ունեմ
Իբրև նվեր տայի քեզ,
Ես կուզեի... Բայց ի՞նչ անեմ
Եթե հանկարծ դու չուզես:

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը, ինչպես հայտնի է, գրել է նաև բանաստեղծություններ, որոնցից մեկ հատված կներկայացնենք ստորև.

Ուզում եմ, որ իմը լինես,
Իմ տանը, իմ տանը մնաս,
Գիշերը իմ տանը քնես,
Իմ տանը քնից արթնանաս:
Բոլոր իմ վշտերը **կխես**,
Բոլոր իմ ցավերն իմանաս,
Երբ դուրս գամ, բարի խոսք ասես,
Դարձին իմ տան դուռը բանաս⁸⁷:

.....

Ինչ վերաբերում է **կիսվել** փոխադարձ բային, ապա նրա՝ մեզ հետաքրքրող իմաստը չի հիշատակվում որևէ բառարանում. նշված է միայն չեզոք սեռի ուղիղ իմաստով, որի դիմաց տրվում է «բջիջների կիսվելու» օրինակը:

Ի դեպ, հետաքրքիր է նաև այս բայի պահանջած լրացման հարցը (**կիսվել տպավորություններով, մտքերով, հուշերով**), որը ո՛չ միջոց է, ո՛չ ներգործող խնդիր: Այն թերևս պետք է համարել վերաբերության խնդիր, որն արտահայտվում է հիմնականում բա-

⁸⁷Տե՛ս **Մ.Բաղդասարյան**, *Ակադեմիկոսը բանաստեղծ*, «Արվեստագետ» հանդես, Գևորգ Ջահուկյան հոշակավոր գիտնականը, հ. 2 (17), Ե., 2022, էջ 3:

ցառական, բայց երբեմն էլ տրական (*Խնդիրը վերաբերում է եկեղեցուն, կրոնին և հեղինակության* (ՍԶ, Պապ թագավոր))⁸⁸, երբեմն էլ գործիական հոլովներով⁸⁹: Իբրև գործիականով արտահայտված վերաբերության խնդրի օրինակ բերվում են **հետաքրքրվել** բայի հետ գործածվող լրացումները, ինչպես. «Նրանք հետաքրքրվեցին Երևանում կատարվող բնակարանային **շինարարությամբ**, Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների **աշխատանքով**, գիտահետազոտական հիմնարկների **գործունեությամբ**, ժողովրդական կրթության գործի **դրվածքով**, արվեստի **գարգացմամբ**»⁹⁰: Կարծում ենք՝ խնդրո առարկա կապակցություններում լրացումը դարձյալ վերաբերության իմաստ է արտահայտում:

Ամփոփելով մեր դիտարկումները *կիսել* և *կիսվել* բայերի գործածության և իմաստային դրսևորումների վերաբերյալ՝ կարծում ենք՝ տեղին է հիշատակել ակադ. Գ. Ջահուկյանի հետևյալ ձևակերպումը. «...ամեն մի լեզվական հանրություն գտնվում է պատմական փոփոխության մեջ, ապրում է տնտեսական, քաղաքական, մշակութային և գաղափարական անընդհատ նորացման պրոցես: Այդ նորացումը համապատասխան դրսևորում է գտնում լեզվի մեջ, որ կոչված է բավարարելու **հասարակության հաղորդակցման կարիքները**, փոխանցելու կուտակվող փորձը սերնդից սերունդ (ընդգծ.՝ Վ.Ն.): Այսպիսով, հասարակական փոփոխությունները առաջ են բերում լեզվական փոփոխություններ, ստեղծում արտահայտության նոր միջոցների ու եղանակների

⁸⁸ Տե՛ս **Ս.Գ.Աբրահամյան, Ն.Ս. Պառնասյան, Հ.Ա. Օհանյան, Խ.Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու**, հ. 3, Ե., 1976, էջ 240:

⁸⁹ Տե՛ս **Ս. Աբրահամյան, Հայոց լեզվի շարահյուսություն**, Ե., 2004, էջ 45:

⁹⁰ **Ս. Աբրահամյան**, նույն տեղում:

անհրաժեշտություն, փոփոխում սրանց նշանակման ոլորտները, դրանք ընդլայնում կամ նեղացնում»⁹¹:

Հայերենի հին և միջին շրջաններում, ինչպես տեսանք, առհասարակ չի գործածվել *կհսել* բայը՝ ո՛չ ներգործական, ո՛չ կրավորական, ո՛չ էլ կրավորակերպ չեզոք սեռի դրսևորումներով: Այն վկայված է նոր շրջանի բառարաններում և լայնորեն գործածվում է հատկապես առօրյա-խոսակցական ոճում: Այսինքն՝ բայն ստեղծվել է հետագայում: Ժամանակի ընթացքում այն սկսել է հանդես գալ իմաստային այլ նրբերանգներով ևս: Չէ՞ որ է. Աղայանի ձևակերպմամբ՝ «Ունենալով իրենց ուղղակի իմաստը և արտահայտելով այս կամ այն առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի հասկացությունը, բառերը խոսքի մեջ կարող են գործածվել նաև այնպիսի առարկաների, երևույթների, հատկանիշների համար, որոնք ինչ-որ կողմով առնչվում կամ նմանվում են ուղղակի իմաստի ցույց տված առարկային, երևույթին և այլն»⁹²:

Փոխաբերական նոր գործածությունները ձևավորում են դարձվածային հետաքրքիր միավորներ: Լեզվի զարգացման գործընթացը շարունակվում է, և բազմաթիվ բառեր իմաստային նորանոր դրսևորումներ են ունենում՝ երբեմն արտացոլելով նաև օտար լեզուների ազդեցությունը: Չէ՞ որ լեզվաբանական գիտության մեջ հիմնավորված է լեզվական փոխազդեցությունների բնական և անխուսափելի լինելը:

⁹¹ Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, 10:

⁹² Է. Բ. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 337:

1.5.ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տնօրեն գոյականից են բաղադրված ժամանակակից հայերենում խիստ գործածական *տնօրենություն* և *տնօրինություն* բառերը, որոնք կազմությամբ նույնն են և զուտ ձևային առումով տարբերվում են նրանով, որ առաջինը հնչյունափոխված է, երկրորդը՝ ոչ: Հայերենում, որպես կանոն, բաղադրական հիմքերի տարբերակներով են հանդես գալիս հիմնականում գործածական հաճախականություն ունեցող բառերը: Դա առավելապես դրսևորվում է բառակազմական հիմքերում: Տարբերակային դրսևորումներ սովորաբար չեն ունենում օտար բառերը և տերմինները, որոնք և՛ ձևակազմության, և՛ բառակազմության մեջ սովորաբար չեն ենթարկվում հնչյունափոխության⁹³:

Ուսումնասիրության նպատակն է պարզել վերոհիշյալ բառերի իմաստային դրսևորումներն ու գործածությունը հայերենում: Խնդրո առարկա բառերի դեպքում տարակարծությունները պայմանավորված են միայն մեկ՝ **«ղեկավարություն»** իմաստի գործածությամբ, որը փոխարինում է խորհրդային տարիներին լայնորեն տարածված **ղիբեկցիա** բառին: Այդ բառերին անդրադառնալու կարիք թերևս չլիներ, եթե դրանք, խիստ գործածական լինելով, հանրության շրջանում միանշանակ ընդունվեին և տարակարծությունների տեղիք չտային նաև մասնագետների շրջանում: Որոշ ձեռնարկներում «ղեկավարություն» իմաստով մերժելի է համար-

⁹³ **Տե՛ս Թու. Ավետիսյան**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում.— «Վէմ» համահայկական հանդես, Թ (ԺԵ), Ե., 2017, 1, էջ 145: Տե՛ս նաև **Մ. Ավետյան**, Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն).— «Հայագիտության հանդես», 2, Ե., 2020, էջ 212:

վում **տնօրինություն**-ը: Այսպես՝ Հ. Գալստյանը գրում է. «Արդի արևելահայերենում **տնօրինություն**-ը շատ անգամ գործածում են **դիրեկցիա** բառի դիմաց, ինչը, սակայն, պիտի համարել աննպատակահարմար, քանի որ կա **տնօրենություն**-ը, որը հենց տեսչություն, ղեկավարություն է նշանակում և որը արևմտահայերենում վաղուց ի վեր է արմատավորվել»⁹⁴: Ինչու՝ է աննպատակահարմար բառի գործածությունը՝ չի պարզաբանվում:

Փորձենք պարզել բառերի գործածությունը հայերենի պատմական զարգացման ընթացքում առհասարակ՝ նկատի ունենալով, որ լեզվում բառերի ճնշող մեծամասնությունը բազմիմաստ է, և յուրաքանչյուր բառի իմաստային առանձնահատկությունները քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել դա: Խնդրի լուծումը փորձենք գտնել հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում՝ նախ ներկայացնելով **տնօրեն** բառի իմաստային դրսևորումները: Այսպես՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ բառի համար տրվում է հետևյալ բացատրությունը. «Տնօրեն-ա., գ., ինի, նաց. տան օրենսգիր, կարգաւորիչ տան մեծի՝ կամ աշխարհիս. որպէս **տնտես**, և **տեսուչ**. **հազարապետ**. **մատակարար**. **Հրամանատար**. **վարիչ**. **ուղղիչ**. **բաշխիչ**. **հոգացող**, **կոնոմոս**, **իկոնոմոս**»⁹⁵ (ընդգծումն այս և մյուս մեջբերումներում՝ Վ.Ն.): Ի դեպ, ՆՀԲ-ում բառը հոլովվելիս հնչյունափոխված (**տնօրինի**) տարբերակով է վկայվում⁹⁶: «Առձեռն բառարանում» նշված է «ամէն բանը հոգացող»⁹⁷ իմաստը ևս: «Միջին հայերենի բառարանում» այն վկայված

⁹⁴ Հ. Գալստյան, *Ճիշտը և սխալը, Բառագործածության, բառաձևի և կապակցական սխալները հայերենում*, Ե., 2007, էջ 27:

⁹⁵ Գ. Աւետիքեան, Խ. Միսրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 886:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում:

⁹⁷ Տե՛ս Մ. Աւգերեան, Գր. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 788:

չէ, սակայն նրանից բաղադրված **տնօրինիչ** ձևն արձանագրված է՝ «նա, որ տնօրինում է» իմաստով⁹⁸, ինչպես ՆՀԲ-ում (ՆՀԲ, էջ 887): Ստ. Մալխասյանցը **տուն** և **օրէնք** բաղադրիչներից կազմված գոյականի համար նշում է հետևյալ իմաստները. «տան գործերը կարգադրող՝ վարող՝ կառավարող», «Աստուած», «Բարձրագոյն վարիչ և կառավարիչ մի հիմնարկութեան, օր.՝ դպրոցի, լրագրի, գործարանի նն»՝ վերջինիս համար նշելով նրա անգործածական լինելը (**բառարանը տպագրվել է խորհրդային տարիներին, երբ ընդունված էր օտար եզրույթը**)⁹⁹: Է.Աղայանի, ինչպես նաև ակադեմիական քառահատոր բացատրական բառարաններում **տնօրեն** բառի համար նշված մի քանի իմաստներից առաջինը որպես հնացած և արևմտահայերենին բնորոշ ձև է դիտվում՝ «**որևէ հիմնարկության կամ ուսումնական հաստատության ղեկավար, կառավարիչ**», «**տնօրինող՝ կարգադրող անձ, որևէ բան տնօրինելու իրավունք ունեցող անձ**»¹⁰⁰: Նկատելի է, որ **տնօրեն** բառը «ղեկավար» իմաստով գործածվել է դեռևս գրաբարյան շրջանում, վկայված չէ միջին հայերենի բառարաններում, իսկ խորհրդային շրջանում կազմված բառարաններում հնացած է համարվում:

Այժմ անդրադառնանք **տնօրենություն** և **տնօրինություն** բառերի քննությանը և համառոտ վերլուծենք հայերենի բառապաշարն ընդգրկող բառարանների տվյալներն այդ առիթով: Այսպես՝ ՆՀԲ-ում **տնօրենութիւն** գոյականի համար նշված են «տնտեսութիւն, կարգաւորութիւն, **հոգաբարձութիւն**, սպասաւորութիւն կամ զիջումն» և բազմաթիվ այլ իմաստներ (ՆՀԲ, էջ 886), որոնցից մենք

⁹⁸ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 763-764:

⁹⁹ Տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 4, Ե., 1944, էջ 429:

¹⁰⁰ Հմմտ. Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1979, էջ 1452: *Տամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 4, (այսուհետև՝ **ԺՀԼԲ**), Ե., 1980, էջ 519:

առանձնացրել ենք **«հոգաբարձություն»**-ը՝ որպես մեզ հետաքրքրող իմաստի դրսևորում: Մինչդեռ **տնօրինություն** բառն առհասարակ արձանագրված չէ ՆՀԲ-ում, և կարելի է ենթադրել, որ մինչև 19-րդ դարի սկիզբ բառի անհնչյունափոխ տարբերակը գործածական է եղել բոլոր հնարավոր իմաստների համար: «Միջին հայերենի բառարանում» երկու տարբերակներն էլ բացակայում են¹⁰¹:

Ստ. Մալխասյանցն արձանագրում է երկուսն էլ՝ բացատրություն տալով միայն անհնչյունափոխ տարբերակի համար՝ «կարգաւորութիւն», «տեսչութիւն» են՝ երկրորդի համար վկայակոչելով նախորդները¹⁰²: Ի դեպ, **անհնչյունափոխ ձևը տրվում է հնացած և գործածությունից դուրս եկած բառերին հատուկ նշումով**, ինչպես **տնօրէն** բառի դեպքում:

Քառահատոր բացատրական բառարանում հետևյալ բացատրություններն են. **«Տնօրենություն**, թյան գ. 1.**Տնօրեն լինելը**, 2.**Տնօրենի պաշտոն**: Ալաշկերտի վարժարանին տնօրենությունը բաց էր. ընդունեց, աղաչելով միայն, որ կարելի եղածին շուտով ճամփա ելլէ (ԳԶ) (օրինակը, կարծում ենք, ճիշտ ընտրված չէ, քանի որ պաշտոնը նույնացվել է պաշտոնավարման տեղին. իրականում բառը գործածվել է «տնօրենի աշխատասենյակ» իմաստով, որը նշված չէ որոշ բառարաններում, Վ.Ն.): 3.**նույնն է՝ Տնօրինություն...1.Տնօրինելը**, տնօրինելու իրավունք, իշխանություն....2.**Կարգադրություն**, հրաման: Ուստի հոգաբարձություն կլինդրէ, որ ձեր այցելությունները դադարեցնեք ցնոր տնօրինություն (ՏԿ)...6.**Տեսչություն**, ղեկավարություն: Հյուրանոցի տնօրինությունը մեզ տուսով կարող է ապահովել միայն վաղը առավոտյան (ՄԿ)» (ԺՀԼԲ, էջ 519):

¹⁰¹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *նշվ. աշխ.*, էջ 764:

¹⁰² Տե՛ս Ստ. Մալխասյանց, *նշվ. աշխ.*, հ. 4, էջ 429:

Է. Աղայանի բառարանում հետևյալ մեկնաբանություններն են. **«Տնօրենություն-1.**Տնօրեն լինելը: **2.**Տնօրենի պաշտոնը: **3.**(հնց.) Նախախնամություն: **4.Տեսչություն, ղեկավարություն:** **5.**Տնօրինած՝ կարգադրած գործ: **Տնօրինություն** գ. **1.**Տնօրինելը: **2.**Տնօրինելու իրավունք, իշխանություն: **3.** Կարգադրություն, հրաման: **4.**Նախախնամություն, նախասահմանում: **5.** Տնօրինած՝ կատարած՝ կարգադրած գործ: **6.Տեսչություն, ղեկավարություն:** **7.** Մեկի մը մարմնի իրավասության՝ տնօրինելու ենթակա գործ՝ գործունեություն. Բնագավառ՝ երկիր (շրջան են): **8.** (կրոն.): Քրիստոսի մարդանալը և կատարած գործերը»¹⁰³: Ինչպես տեսնում ենք, մեզ հետաքրքրող իմաստները երկու բառերի դեպքում էլ նշվում են:

Ուղղագրական բառարաններից մեկում երկու բառերն էլ նշված են՝ առանց բացատրությունների¹⁰⁴, իսկ մյուսում անհնչյունափոխ տարբերակի համար տրված են՝ «1.տնօրեն լինելը, 2.տնօրենի պաշտոնը», հնչյունափոխված բառի դիմաց՝ 1.«տնօրինելը», 2.«կարգադրություն», 3.«ղեկավարություն» իմաստները¹⁰⁵:

«Օտար բառերի բառարանում» **դիրեկցիա** (дирекция <լատ. direction ղեկավարում) բառի համար նշված է. «...հիմնարկի՝ ձեռնարկության՝ ուս. հաստատության ղեկավար մարմինը՝ դիրեկտորի գլխավորությամբ, տնօրենություն»¹⁰⁶: Մինչդեռ «Հայ-ռուսերեն բառարանում» **տնօրենություն** բառի համար գրված է. «Տե՛ս Տնօրինություն-1.Распорядительство, ведение. 2.Распоряжение, приказ, 3.Дирекция»¹⁰⁷: «Գրպանի նոր բառարանում» **տնօրինություն**

¹⁰³ Է. Բ. Աղայան, *նշվ. աշխ.*, էջ 1452:

¹⁰⁴ Ա. Մուքիայան, Զ. Մուքիայան, *Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան*, Ե., 2002, էջ 341-342:

¹⁰⁵ Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան, *Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան. պատկերազարդ ընթերցարան*, Ե., 2011, էջ 149:

¹⁰⁶ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 161:

¹⁰⁷ *Հայ-ռուսերեն բառարան*, Ե., 1987, էջ 662:

բառը թարգմանված է՝ **direction, administration, management** հոմանիշներով, իսկ **տնօրենություն** տարբերակը նույն տեղում վկայված չէ¹⁰⁸, սակայն անգլերեն **direction** բառի համար նշված է՝ **տնօրենություն**¹⁰⁹: Հոմանիշների բառարանում **տնօրենություն**-ը ներկայացվում է որպես արևմտահայերենին բնորոշ բառ՝ **տեսչություն, վարչություն, դիրեկտորություն** հոմանիշներով, իսկ **տնօրինություն**-ը՝ որպես **տնօրենություն, տնօրինում, կարգադրում, մատակարարություն, դարստություն** (բրբ.)¹¹⁰: Թեև բառարաններում հիմնականում անհնչյունափոխ տարբերակն է նշվում որպես արևմտահայերենում գործածական, սակայն Ա. Մարգարյանի «Արևմտահայերենի բառարանում» միայն հնչյունափոխված ձևն է վկայված՝ «տնօրեն լինելը» իմաստով¹¹¹: Մինչդեռ Ռ. Սաքապետոյանի բառարանում նշված է միայն **տնօրենությին** գոյականը՝ «հիմնարկի ղեկավար մարմին (դիրեկցիա)» իմաստով¹¹²:

Այժմ ներկայացնենք «ԱՐԵՎԱԿ»-ի տվյալները՝ պարզելու երկու տարբերակների գործածության հաճախականությունը¹¹³: Այսպես՝ անհնչյունափոխ տարբերակի բոլոր ձևերի համար ունենք հետևյալ պատկերը. **տնօրենություն՝ 12 համատեքստ/11տեքստ, տնօրենության՝ 97հ./75տ., տնօրենությունների՝ 7հ./6տ., տնօրենությանը՝ 33հ./29տ., տնօրենությունը՝ 128, հ./100տ., տնօրենությունները՝ 4հ./3տ., տնօրենությունից՝ 9հ./9տ., տնօրենությամբ՝ 10հ./8տ., տնօրենությունում՝ 2հ./2տ.** (այլ բառաձևեր չեն գտնվել): Անհնչյու-

¹⁰⁸ Տե՛ս Մ. Գույումճեան, Լ. Թորոսեան, *Գրպանի նոր բառարան. հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն*, Պէյրութ, 2002, էջ 289:

¹⁰⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 85:

¹¹⁰ Տե՛ս Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 1967, էջ 629:

¹¹¹ Տե՛ս Ա. Մարգարյան, *Արևմտահայերենի բառարան*, 1991, էջ 287:

¹¹² Ռ. Սաքապետոյեան, *Արևմտահայերեն- արեւելահայերեն նոր բառարան*, Ե., 2011, էջ 348:

¹¹³ Տե՛ս http://eanc.net/EANC/search/?interface_language=am, 29.07.21:

նափոխ տարբերակի «դիրեկցիա» իմաստով գործածությունների ճնշող մեծամասնությունը «Ազգ» օրաթերթից է, մի քանիսը՝ Րաֆֆուց կամ «Կարամազով եղբայրներ» վեպի թարգմանությունից, մյուսները՝ Պ. Պոռշյանից: Հնչյունափոխված բառի գործածության դեպքում հետևյալ պատկերն է. տնօրինություն՝ 133հ./121տ., տնօրինություններ՝ 4հ./4տ, տնօրինության՝ 765հ./ 496 տ., տնօրինությունների՝ 4հ./4տ., տնօրինությանը՝ 437 հ./329տ., տնօրինություններին՝ 1 հ./1տ., տնօրինությունը՝ 628 հ./469տ., տնօրինությունները՝ 12հ./10տ., տնօրինությունից՝ 50հ./49տ., տնօրինություններով՝ 1հ./1տ., տնօրինությամբ՝ 143հ./129տ., տնօրենությունում՝ 6հ./5տ. (այլ բառաձևեր չեն գտնվել): **Տնօրինություն** բառի «ղեկավարություն» իմաստով գործածությունը հիմնականում հանդիպում է ժամանակակից պարբերականներում: Օրինակներ կան նաև Զ. Դարյանի, Զ. Խալափյանի, ինչպես նաև թարգմանական երկերից: Խորհրդային տարիներին տպագրված պարբերականներում գործածված է «դիրեկցիա» բառը: Բառի գործածությանն առնչվող հարցը, կարծում ենք, պայմանավորված է հենց այս հանգամանքով. **արևմտահայերենում այն շարունակել է գործածվել, իսկ արևելահայերենում նախընտրելի է դարձել օտար տարբերակը:** Անհրաժեշտ է նաև հիշել, որ արևմտահայերենում թեև փակ վանկի ձայնավորը խիստ փոփոխվող է, որն ընդհանրական կանոն է, սակայն առանձին կազմություններում արևմտահայերենը հակված է պահպանելու անհնչյունափոխ հիմքերը, ինչպես արևելահայերենում **ե-ն**՝ օրենք- օրենսդիր են¹¹⁴: Արևմտահայերենում **ե-ն**, շեշտափոխական հնչյունափոխության ենթարկվելիս կարող է գրադարձվել **ե-ի**¹¹⁵: «Չի գրադարձվում կրկնավոր բարդություններում՝ պէս-

¹¹⁴ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Չայնավորների հնչյունափոխական առանձնահատկությունները արդի հայերենում. — «ԲԵՀ. Հայագիտություն», 133.1, Ե., 2011, էջ 15-30:

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում:

պէս, կէտ-կէտ, և մի շարք այլ բառերում՝ աղէտ—աղէտաբեր, քէն—քինոտ, օրէն—անօրէնութիւն, տէր—տէրութիւն ևն»¹¹⁶: Այս շարքում, ինչպէս տեսնում ենք, **օրէն**-ից կազմված մեկ բառ կա՝ **անօրէնութիւն**, սակայն նշված չէ **անօրէնութիւն**-ը. այն արձանագրված է «Հայոց լեզուի նոր բառարանում»՝ հետևյալ նշանակություններով. «անօրէն ըլլալը», «անօրէնի պաշտօնը», «տեսչութիւն, վարչութիւն, ղեկավարութիւն», «անօրէնի գրասենեակը», «նախախնամութիւն»¹¹⁷: Կարևոր է նաև արձանագրել, որ «...**հնչյունափոխական երևույթները, որոնք գործում են առանձին բառերի ու բառախմբերի սահմաններում, հետևողական, բացառություններ չընդունող հնչյունական օրենքի արժեք չեն ստանում**»¹¹⁸:

Եզրակացություններ: 1.ՆՀԲ-ում նշված է միայն **անօրէնութիւն** գոյականը՝ իմաստային տարբեր դրսևորումներով, այդ թվում՝ «հոգաբարձութիւն» նշանակությամբ: 2.Միջին հայերենի բառարանում վկայված չէ որևէ տարբերակ: 3.Աշխարհաբարի բառապաշարն ընդգրկող տարբեր բառարաններում ներկայացված են և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ ձևերը. երկուսի դեպքում էլ նշված է «ղեկավարություն» իմաստը: 4.Որպէս կանոն՝ բառարաններում նշվում է, որ «տեսչություն, ղեկավարություն» իմաստներով գործածությունը բնորոշ է արևմտահայերենին, որը հնացած է արևելահայերենում և համընկնում է **ղեկավարություն, դիրեկտորություն** բառերին: 5.Նկատելի է, որ արևմտահայերենում ևս անգործածական չէ հնչյունափոխված ձևը: 6.Թարգմանական (և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն) բառարաններում ևս որոշակիություն չկա. օտար բառի համար մեկ տրվում է հնչյունա-

¹¹⁶ Նույն տեղում :

¹¹⁷ Տե՛ս **Գ. Ճերեճեան, Փ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան**, Պէյրոս, 1992, էջ 974:

¹¹⁸ **Ռ.Կ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք**, Ե., 2006, էջ 16:

փոխված, մեկ՝ անհնչյունափոխ ձևը: 7.Աշխարհաբար գեղարվեստական գրականության մեջ, պարբերական մամուլում երկու ձևերն էլ հանդիպում են, եթե հեղինակները, ժամանակաշրջանով պայմանավորված, օտար եզրույթին չեն տվել նախապատվությունը: 8.Կարծում ենք, որ **տնօրինություն** բառը «ղեկավարություն» իմաստով գործածելը ոչ միայն սխալ չէ, այլև ավելի նպատակահարմար է: Պետք չէ հակադրել վերոհիշյալ երկու ձևերը և արհեստական միջամտություններով ազդել լեզվի բնականոն զարգացման վրա: Ժամանակը, կարծում ենք, կաշխատի հնչյունափոխված տարբերակի օգտին, իսկ անհնչյունափոխը կունենա խիստ սահմանափակ գործածություն՝ «տնօրեն լինելը», «տնօրենի պաշտոնը» իմաստներով: Օրինակ՝ նա լավ **տնօրենություն** է անում, այսինքն՝ տնօրենի գործն է անում, ինչպես՝ **շեֆություն անել, ուսուցչություն անել** ևն:

1.6. ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱԶԱՅՆԵԼ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՎԵԼ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հայերենում, ինչպես գիտենք, կան մի շարք բայեր, որոնք տարբերվում են *-վ-* ներածանցով միայն, որը կրավորականություն չի արտահայտում, այլ բոլորովին այլ իմաստ է հաղորդում բային: Օրինակ՝ *վերաբերել* նշանակում է «հարաբերվել, կապ, առնչություն ունենալ մի բանի», իսկ *վերաբերվել*՝ «որոշակի վերաբերմունք՝ մեկի կամ մի բանի նկատմամբ»¹¹⁹:

Հարանունների շարքեր ներկայացնող այդ բառերի իմաստային նշանակությունները, որպես կանոն, տրված են ինչպես բացատրական բառարաններում, այնպես էլ քերականական տարբերաշխատություններում և ուսումնական ձեռնարկներում: Սակայն այլ է հարցը *համաձայնել* և *համաձայնվել* բայերի դեպքում, որոնք, թերևս, իրենց գործածության հաճախականությամբ գերազանցում են մյուսներին: Ամեն օր և ամենուր կարելի է լսել և կարդալ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Եվ քանի որ այդ գործածությունները միանշանակ չեն ընդունվում բոլորի կողմից, փորձենք դրանց նշանակությունները պարզել բացատրական բառարաններում: Նախ ներկայացնենք բայահիմքի իմաստային դրսևորումները:

Աղայանի կազմած բացատրական բառարանում *համաձայն* ածականի համար նշված են՝ «1. Համակարծիք, նույն կարծիքի, համամիտ, 2. Իրար համապատասխան՝ պատշաճ, ներդաշնակ: 3. Մի առաջարկություն ընդունող, հոգուտ նրա ձայն տվող: 4. Հար և նման.... 5. Կ. ցույց է տալիս հիմունք՝ ըստ, համապատասխան նշ....»¹²⁰:

¹¹⁹ Տե՛ս Ալ. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն*, Ե., 1993, էջ 121:

¹²⁰ Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 801-802:

Համաձայնել չեզոք բայի համար նշված են՝ «1. Հավանություն տալ, ընդունել: 2. Համակարծիք՝ համամիտ լինել: 3. Միաբան՝ համերաշխ լինել: 4. Համապատասխանել, պատշաճ՝ հարմար գալ: 5. Համաձայնությամբ կապվել՝ կապակցվել (քրկն.): 6. Ձայնակցել, ձայն ձայնի տալ (հնց.): 7. Ներդաշնակել: 8. Տե՛ս **համաձայնեցնել**»¹²¹:

Այնուհետև տրված է **համաձայնվել** չեզոք բայը, որը նույնն է, ինչ **համաձայնելը**¹²²:

Մեզ հետաքրքրող բառերի համար գրեթե նույն մեկնաբանությունները գտնում ենք ինչպես քառահատոր բացատրական բառարանում¹²³, այնպես էլ Մալխասյանցի կազմած բառարանում: Մակայն ի տարբերություն նախորդ երկուսի՝ Մալխասյանցը փոքր-ինչ հստակեցնում է՝ **համաձայնվել** բայի համար գրելով՝ «Տե՛ս **համաձայնել 2**», որն է՝ «համակարծիք լինել, նույն կարծիքի լինել»: Եվ որպես օրինակ է բերված հետևյալ նախադասությունը. «Չեմ կարող **ձեզ հետ համաձայնել**»¹²⁴: **Համաձայնել** բայի համար նշված է նաև «**համաձայնեցնել**» իմաստը (ներգործական սեռ)՝ որպես հնացած նշանակություն¹²⁵:

Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում **համաձայնվել**-ը ներկայացվում է զուտ որպես հոմանիշ **համաձայնել** բային¹²⁶:

Ամփոփելով ժամանակակից հայերենի բառարաններից քաղված տվյալները մեզ հետաքրքրող բառագույգի վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ դրանցում **-վ-** բայածանցի գործածությունը

¹²¹ **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 802:

¹²² Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., նույն տեղում:

¹²³ Տե՛ս **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Լեզվի ինստ., Ե., 1969, էջ 269-270 :

¹²⁴ Տե՛ս **Սո. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 25:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում:

¹²⁶ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, էջ 574:

իմաստային որևէ տարբերակում չի մտցնում և, հետևաբար, որևէ ձևով չի հիմնավորվում: Չեն նշվում ո՛չ իմաստային, ո՛չ սեռային տարբերություններ: Երկու բառերի դեպքում էլ ունենք չեզոք ձևեր (թեև պետք է նկատել, որ ժամանակակից հայերենում ևս բայը կարող է արտահայտել ներգործական սեռի իմաստ, ինչպես՝ **Համաձայնեցի աշխատել** այդ հաստատությունում): Ստացվում է, որ իմաստով և գործածությամբ ամբողջությամբ նույնական բառերը ուղղակի հանդես են գալիս իբրև զուգաձևություններ՝ **-վ**-ով կամ առանց **-վ**-ի: Հետևաբար արդարացվում է շատերի այն կարծիքը, որ **-վ**-ով տարբերակը հնացած է, և այն չպետք է գործածել, այնպես, ինչպես **տուժվել** բայը:

Դրան հակառակ՝ մի շարք ձեռնարկներում, թելադրությունների բնագրերում հաճախ են հանդիպում թե՛ **համաձայնվել** և թե՛ **համաձայնել** բայերը, ավելին՝ հաճախ սովորողից պահանջվում է բացատրել դրանց նշանակությունները: Եվ ոչ մի աղբյուրում նույնիսկ չի ականարկվում ածանցավոր բայի հնացած լինելու մասին:

Այժմ փորձենք պարզել, թե բայերն իմաստային ի՛նչ դրսևորումներ են ունեցել հայերենի զարգացման նախորդ փուլերում՝ հիմնավորելու համար **համաձայնվել** բայի գոյության և գործածական լինելու անհրաժեշտությունը:

Այսպես՝ ՆՀԲ-ն նշում է հետևյալը. **Համաձայնեմ**, (ներգ.)-եցի-«միաբանել, զուգայարմարել», Սերն զմիանձնունսն համաձայնե (Լմբբ.), **Համաձայնեմ**, չեզոք., **Համաձայնեմ ձ.** «միաձայնիլ, միաբանիլ. ձայնակցիլ. Ձայնակից լինել». «Հոգին սուրբ յիմոցն առցե, այսինքն համաձայնեսցե ինձ (Ոսկ.): Եւ մանկունք համաձայնեցին». այսինքն միաձայնելով ընդ միաձայնելով ընդ հրեշտակս երգեցին.(Երզն.): Համաձայնեալք անմարմնոցն օրհնէին: Ընդ որս և մեք համաձայնեալք՝ բարեբանեմք (Շար.): Ուսանիմք՝ մարդկան

լաւ զհամաձայնելն իրերաց՝ քան զանհաղորդ լինելն (Լմբ¹²⁷: «Առ-
ձեռն բառարանում» ևս նշված են բայի սեռային տարբեր նշանա-
կություններ՝

Համաձայնեմ, եցի, ն. միաբանել, **համաձայնեմ**, եցի չ. Միա-
բանիլ, ձայնակից ըլլալ, **համաձայնեմ**, եցայ¹²⁸: Վերջին երկու աշ-
խատություններում էլ նշված են ներգործական, չեզոք և կրկնասեռ
տարբերակները: Հետևաբար հայերենի նախորդ փուլերում իմաս-
տային տարբերակում, այնուամենայնիվ, առկա է:

Ուշագրավ է, որ «Արևմտահայերենի բառարանում» միայն
մեկ ձև է նշված՝ **համաձայնիլ (համաձայնիլ)**, չք, և բացատրված է՝
«**համաձայնվել**»: Բերված է հետևյալ օրինակը. «Հասկցանք, որ ան-
կարելի էր **համաձայնիլ**» (Ե. Օտյան)¹²⁹:

Բառարանային դիտարկումներից հետո փորձենք խնդրի լու-
ծումը փնտրել քերականական աշխատություններում: Այսպես՝
Ա. Աբրահամյանը գրում է. «Ժամանակակից հայերենում կան որոշ
սակավաթիվ բայեր, որոնք, լինելով չեզոք սեռի, զուգահեռաբար
գործածվում են և՛ -վ- ածանցով, և՛ ածանցագուրկ ձևով, օր.
բռնկել // բռնկվել, համաձայնել // համաձայնվել, հանդարտել //
հանդարտվել, վերաբերել // վերաբերվել, տրաքել // տրաքվել և
այլն: Այս կարգի բայերը հաճախ նույն հեղինակի երկերում հանդի-
պում են զուգահեռ գործածությամբ, առանց իմաստային տարբե-
րակման»¹³⁰:

Ապա բերվում են այդ բայերի գործածության օրինակներ,
որոնցից առանձնացրել ենք միայն մեզ հետաքրքրող բառազույգի

¹²⁷ Տե՛ս Գ.Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ.2, Վենետիկ, 1837, էջ 17:

¹²⁸ Մկ. Աւգերեան., Գր. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Ս. Ղազար, Վենետիկ, 1865, էջ 470:

¹²⁹ Ա.Մարգարյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, էջ 191:

¹³⁰ Ա.Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Ե., 1962, էջ 651:

գործածության դեպքերը Շիրվանզադեի, Գ. Սևունցի, Ս. Խանզադյանի երկերից, որոնցում, ըստ Աբրահամյանի, դրանց իմաստային տարբերությունները չեն գիտակցվում:

Այսպես՝ «Ուսանողները **համաձայնեցին** հրավիրել Սանթուրյանին, չնայելով շատերի ընդդիմության», «Եթե նա **համաձայնվի** էլ, Ադելաիդան երբեք չի կամենալ» (Շիրվանզադե), «Դրա համար էլ Ազադին **համաձայնեց** նրա հետ», «Ասա՛, գուցե քեզ հետ համաձայնվեմ» (Գ. Սևունց), «Ուրախ կլինեմ, եթե Գարեգինը **համաձայնվեր** իր հետ աշխատելու», «Կգամ, իսկույն **համաձայնեց** Գարեգինը» (Ս. Խանզադյան):

Այնուհետև եզրակացնում է. «Եթե **վերաբերվել** ձևում -*վ*- ածանցի գործածությամբ հնարավոր է ցույց տալ իմաստային մի մասնակի տարբերություն, ապա դժվար է ցույց տալ այդպիսի տարբերություն **համաձայնել** և **համաձայնվել**, **բռնկել** և **բռնկվել**, **հանդարտել** և **հանդարտվել** ձևերի արտահայտած իմաստի միջև (ընդգծ.՝ Վ. Ն.)¹³¹: Չնայած Աբրահամյանի այս եզրակացությանը՝ նշված բայերը բառարաններում ունեն իրենց բացատրությունները, և խոսքում, այնուամենայնիվ, կարելի է դրանք տարբերակել: Իսկ **համաձայնել** և **համաձայնվել** բայերի համար բերված օրինակներում, կարծում ենք, իմաստային տարբերություն, այնուամենայնիվ, կա, որին ավելի ուշ կանդրադառնանք:

Աբրահամյանը շարունակում է՝ մանրամասնելով. «Առայժմ դժվար է կտրականապես սահմանազատել սրանք, բայց մի բան պարզ է, որ **կենդանի խոսքում գերակշռություն է ստանում սրանց կրավորաձև գործածությունը**»¹³²: Նույն տեղում նշում է նաև, որ այսպիսի բայերը խիստ սահմանափակ են մեր լեզվում:

¹³¹ Տե՛ս նույն տեղում:

¹³² Տե՛ս նշվ. աշխ, էջ 652:

Ա. Աբրահամյանի վերը նշված բոլոր ձևակերպումները կրավորակերպ չեզոք բայերի համար գրեթե նույնությամբ ներկայացված են **«Ժամանակակից հայոց լեզվի»** ակադեմիական հրատարակությունում, որում դարձյալ որևէ հստակություն չկա մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ¹³³:

Նշված բայերի մասին ակնարկվում է նաև Խ. Բաղիկյանի **«Ճիշտ խոսենք հայերեն»** գրքում, որում դրանք ներկայացված են որպես հարանուններ՝ հետևյալ բացատրություններով. **Համաձայնվել** բառի համար տրվում է «խրաբ հասկանալ» (**մենք համաձայնվել ենք այդ հարցում**) նշանակությունը, իսկ **համաձայնել** բառի համար բերվում է ենթակայի և ստորոգյալի համաձայնելու օրինակը միայն¹³⁴:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ ժամանակակից հայերենում ըստ իրենց ցույց տված գործողության բնույթի՝ կրավորաձև չեզոք բայերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

1. Բայեր, որոնք ցույց են տալիս ենթակայի կատարած ինքնին գործողություն՝ կապված առարկայի դիրքի, վիճակի, դրության, ինչպես նաև հոգեվիճակի, տրամադրության փոփոխության հետ և այլն (օր.՝ **շփոթվել, բացվել** (ծաղկի) :

2. Անդրադարձ բայեր- լվացվել, հագնվել, կոճկվել և այլն:

3. Փոխադարձ բայեր-գրկախառնվել, փաթաթվել և այլն:

4.Բայեր, որոնք ցույց են տալիս համատեղ գործողություն (**հավաքվել, կուտակվել** և այլն):

Ինչպես **4-րդ**, այնպես էլ **3-րդ** կետերում նշված բայերի դեպքում դրանք դրվում են հոգն. թվով: Եզակի թվով գործածվելու դեպքում սրանք ևս ցույց չեն տալիս համատեղ գործողություն:

¹³³ Տե՛ս **Ա.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնապյան, Հ.Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու**, հ. 2, Ե., 1974, էջ 297:

¹³⁴ **Խ. Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն**, Ե., 2012, էջ 47:

Օր.՝ Ձյունը կիտվել է բակերում, Անձրևաջուրը հավաքվել էր ջրափոսերում:

5. Բայեր, որոնք, ստանալով կրավորական *վ* ածանցը, բացի կրավորական սեռի նշանակությունից, ունենում են նաև առարկայի որևէ հատկանիշը կամ դերը ցույց տալու նշանակություն, ինչպես՝ Ջուրը **թափվում է**, Արյունը **մակարդվում է** և այլն¹³⁵:

Մ. Ասատրյանն իր «**Բայի սեռերը ժամանակակից հայերենում**» գրքում գրում է. «Փոխադարձ բայերը ցույց են տալիս տարբեր ենթականերից իրար վրա անցնող գործողություն: Հասկանալի է, որ բայի արտահայտած փոխադարձ իմաստը պարզ և որոշակի կարող է դրսևորվել միայն հոգնակի ձևերում: Եզակի թվում փոխադարձ իմաստ կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ այդ բայերը կապակցվում են սեռական հոլովի և **հետ** (ընդգծումը մերն է) կապի միջոցով դրսևորվող խնդրի հետ¹³⁶: Ասատրյանը նույն տեղում իբրև փոխադարձ բայերի օրինակներ է բերում՝ **համբուրվել, պաշալվել, ծեծկվել, գրկախառնվել, գրկվել, տեսնվել, ողջագուրվել** և այլն: Ապա ավելացնում է, որ «գործողության փոխադարձություն կարող են արտահայտել նաև տեսնվել, բացատրվել, զարկվել բայերը»¹³⁷: Առաջնորդվելով այս ձևակերպումով՝ կարծում ենք, որ նույնը կարելի է ասել նաև **համաձայնվել** բայի մասին, թեև լեզվաբանն այս բային չի անդրադարձնում և նույն աշխատության մեջ այլ առիթով գործածում է հետևյալ միտքը. «Պալասանյանի այս տեսակետի հետ **համաձայնել** չի լինի»¹³⁸: Կարելի է ենթադրել, որ *-վ*-ով տարբերակը չի ընդունում, բայց այդ հարցը միանգամից փակվում է, երբ թերթում ենք ավելի ուշ հրատա-

¹³⁵ Տե՛ս Մ.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնապյան, Հ.Ա. Օհանյան, *նշվ. աշխ.*, էջ 295-296:

¹³⁶ Մ. Ասատրյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959, էջ 188:

¹³⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 188-189:

¹³⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 32:

րակված «Ժամանակակից հայոց լեզու» աշխատությունը, որտեղ գրված է. «Մի քանի «կրավորակերպ» չեզոքներ ունեն առանց –վ-ի (չեզոք) ձևեր, ինչպես՝ **հակառակվել/ել, համաձայնվել/ել, մոլորվել/ել, մոայլվել/ել, նմանվել/ել, վերաբերվել/ել, տրաքվել/ել**: Գրական լեզուն երբեմն գերադասում է Վ-ով, իսկ երբեմն առանց Վ-ի ձևերը¹³⁹: Անհրաժեշտ ենք համարում նաև մեջբերել նույն աշխատության մեջ արված մեկ այլ դիտարկում. «Մեր լեզվում «կրավորակերպ» չեզոքների գոյությունը բացատրվում է նրանով, որ երբ Վ բայածանցի ստեղծումով ներգործական բայերի կրավորակերպ խոնարհման ԻԼ ձևը փոխվեց ՎԻԼ ձևի, միա-ժամանակ կրավորակերպ խոնարհվող մի շարք չեզոք սեռի բայեր (գանգատիմ, բնակիմ, խելագարիմ, սխալիմ և այլն)» նույնպես ստացան այդ ածանցը, իսկ հետո այդ բայերի նմանակությամբ կազմվեցին նաև այլ բայեր (գծվել, սիրահարվել, փշաքաղվել)¹⁴⁰:

Ներկայացնենք մեր դիտարկումները խնդրո առարկա բառերի գործածության վերաբերյալ՝ օգտվելով «Արևակ» ԱԱԿ-ի էլեկտրոնային շտեմարանից, որում ներառված են թե՛ ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններ, թե՛ մամուլից քաղված օրինակներ.

1. **Ածանցավոր բայի** օրինակներ - «Գնանք, գնենք, **համաձայնվեցի** ես», Ա. Շեկոյան, «Հայկական ժամանակ». «Անցյալ տարի ծնողներս որոշեցին ամուսնացնել ինձ, և ես սիրով **համաձայնվեցի**», Ա. Ֆրանս, 1991, «Սիրով **համաձայնվեցի** մասնակցել խմբագրմանը՝ մի քանի կոնկրետ առաջարկներով»...«Ազգ», 2006, 04.01, «Ուրեմն **համաձայնվեցինք**», Ժ. Ավետիսյան, «Ամպ ու ծիածան», «Եվ միայն իմ մի հիմար խոսքի վրա հանկարծ **համաձայնվեցինք**»,

¹³⁹ Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն*, Ե., 2002, էջ 220:

¹⁴⁰Տե՛ս նույն տեղում:

Ֆ. Դոստոևսկի, 1984, «Կարամազով եղբայրներ» և բազմաթիվ այլ օրինակներ:

2. **Պարզ բայի** գործածության օրինակներ- **«Համաձայնեցինք**, որ այդ վայրենության մեջ վեհ բան կար», Գևորգ Հայրյան, «Մեր տան ճանապարհին», «Անշուշտ, մենք **համաձայնեցինք**, որ պարտք վճարել չկա, այդ պարտքերը չեղյալ կհամարվեն, և դա ընդունվեց», «Ազգ», 2006, 11, 17 և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, **բայի երկու տարբերակների գործածության հիմքում իմաստային որոշակի տարբերակում**, այնուամենայնիվ, կա: Ածանցավոր բայը կա՛մ դրված է **հոգնակի թվով** և նշանակում է «**համաձայնության գալ**», այսինքն՝ փոխադարձ սեռի է, կա՛մ նույն նշանակությամբ գործածված է եզակի թվով՝ առանց միասնության խնդրի, որը, սակայն, հիմնականում գիտակցվում է, և հնարավոր է վերականգնել *անձնանիշ գոյականի սեռական հոլով + հետ* կապ (ի դեպ, նույնը կարելի է ասել Ա. Աբրահամյանի առանձնացրած օրինակների համար) կառույցը: Իսկ անածանց բայաձևերը արտահայտում են «**ընդունել, համաձայն լինել**» իմաստները:

Անշուշտ, կարիք չկա ներկայացնելու, թե բանավոր խոսքի տարբեր դրսևորումներում որքան հաճախ կարելի է լսել վերը նշված բառերի գործածության օրինակներ, մանավանդ որ, ինչպես արդեն նշել ենք, ըստ Ա. Աբրահամյանի՝ **կենդանի խոսքում նախապատվությունը տրվում է -վ- ածանց ունեցող ձևին**: Հետաքրքիր է պարզել, թե գրավոր խոսքում ինչ հարաբերությամբ են գործածվում դրանք: Դարձյալ օգտվելով «Արևակի» (ԱԱԿ-ն պարունակում է մոտ 110 մլն բառամթերք՝ 19-րդ դ. կեսերից մինչև մեր օրերն ստեղծված արևելահայ տեքստեր՝ ավելի քան 100 հայ դասական գեղարվեստական ստեղծագործությունների ընդգրկմամբ)

ընձեռած հնարավորությունից՝ ներկայացնենք բայերի գործածության վիճակագրությունը.՝

Անկախ դերբայաձևեր՝

համաձայնել- **1903** համատեքստ/1338 տեքստ, համաձայնվել- **467** համատեքստ/ **363** տեքստ

համաձայնող-**9/8**, համաձայնվող- **2/2**

համաձայնած- **35/33** (միայն արևմտահայերենից), համաձայնված- **6/6**

համաձայնելիս1/1(Նար-Դոսից), համաձայնվելիս-1/1 (Դրայ-գերի <<Հանճարից>>)

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձև՝

համաձայնեցի- **217/ 164** , համաձայնվեցի-**140/ 92**

համաձայնեցիր- **20/18**, համաձայնվեցիր- **12/12**

համաձայնեց- **2211/ 835**, համաձայնվեց- **467/ 233**

համաձայնեցինք- **50 / 45** , համաձայնվեցինք- **27/ 25**

համաձայնեցիք- **29/26** , համաձայնվեցիք- **19/15**

համաձայնեցին- **322 / 249** , համաձայնվեցին- **114/ 99**

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից, գրավոր խոսքում աստիճանաբար տարածում է ստանում բայի ածանցագուրկ տարբերակը, և ***համաձայնվել***-ը գործածության հաճախականությամբ զիջում է ***համաձայնել***-ին, որը, կարծում ենք, պայմանավորված է ինչպես իմաստային տարբերակման անորոշությամբ, այնպես էլ ***համաձայնվել*** բայի յուրահատուկ իմաստով՝ «համաձայնության գալ», մինչդեռ խոսակցական լեզվում ճիշտ հակառակն է. ավելի գործածական է ***համաձայնվել*** բայը:

Հետևաբար մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ բայի ածանցավոր տարբերակի գործածությունը գրական հայերենում կարող է հիմնավորվել ***որպես փոխադարձ սեռի բայ՝***

«համաձայնության գալ, պայմանավորվել» նշանակություններով, որի դեպքում, ինչպես նմանատիպ այլ բայերի պարագայում, այն պետք է հանդես գա հոգնակի թվով կամ անձնանիշ գոյականի, գոյականաբար գործածված բառի սեռական հոլովի և **հետ** կապի հետ: Օրինակ՝ «Մենք **համաձայնվեցինք** համագործակցել», «Ես նրա **հետ համաձայնվեցի**»: *Համաձայնել* բային համարժեք է *համաձայն լինել* հարադրությունը, իսկ *համաձայնվել* բային՝ *համաձայնության գալ* - ը:

2. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

2.1. ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՐՅԸ

Լեզվում շատ կարևոր և կիրառելի միավորներ այս կամ այն պատճառով երբեմն դուրս են մնում քերականական ուսումնասիրությունների շրջանակից կամ բավարար չափով ուշադրության չարժանանալով՝ տեղ չեն գտնում քերականական դասագրքերում: Այսպես՝ խոսքի թե՛ գրավոր, թե՛ բանավոր տարբերակներում, գործառական բոլոր ռճերում խիստ գործածական **կարող+ եմ// ես// է// ենք// եք// են//էի// էիր// էր// էինք// էիք//էին** հարադրության քերականական բնութագիրը, թվում է, թե անվիճելի է:

Անշուշտ, հարադրությունը կազմված է երկու բաղադրիչներից՝ *կարող* ածական + օժանդակ բայ (բոլոր հնարավոր խոնարհումներով): Ա. Աբրահամյանը, խոսելով բառերի խոսքիմասային փոխանցումների մասին, գրում է. «*Կարող* գրաբարյան *կարել* «կարողանալ» բայի ենթակայական դերբայից է առաջացած, իսկ *կարել* բայը այսպիսի իմաստով ժամանակակից գրական լեզվում գործածություն չունի (կա *կարողանալ*, ինչպես և՛ բարբառային *կարենալ*)»¹: Սակայն «*կարողացող*»-ը կամ *կարեցող*»-ը, նույն տեղում շարունակում է Աբրահամյանը, չի կարող դիտվել իբրև *կարող*-ի բառագույգ»²: Այնուհետև նշվում է, որ խոսքիմասային փոխանցմամբ բառը վերածվում է ածականի: Եվ այդպես էլ այն արձանագրվում է բացատրական բառարաններում³: Այս դեպքում

¹ Ա. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, 1, Ե., 1962, էջ 411:

² Ա. Ա. Աբրահամյան, նույն տեղում:

³ Տե՛ս Է. Բ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 711 (Աղայանը նշում է նաև *կարող էձևը*՝ «հնարավոր է, կարելի է» նշանակություններով՝ չնշելով միադիմի բայի արժեքը): Ժամանակակից հայոց լեզվի բացա-

հարց է ծագում՝ արդյո՞ք մեզ հետաքրքրող կազմության մեջ **կարող**-ը ածականի արժեք ունի, կամ արդյո՞ք այն տրոհելի է իբրև լեզվական միավոր:

Կարող եմ հարադրությունը համեմատենք նմանատիպ (*ածական + օժանդակ բայ*) այլ կազմությունների հետ, ինչպես՝ *գեղեցիկ է, վտանգավոր է, հիվանդ է, բարի է, հայտնի է* և այլն, կամ՝ ենթակայական դերբայից խոսքիմասային փոխանցումով առաջացած՝ *գրող է, ուսանող է (գոյական+օժանդակ բայ)*: Նշված ձևերի ժխտականը կլինի՝ *գեղեցիկ չէ, վտանգավոր չէ, հիվանդ չէ, բարի չէ, հայտնի չէ, գրող չէ, ուսանող չէ* և այլն: Խնդրո առարկա **կարող եմ** հարադրության ժխտականը կլինի՝ **չի կարող**, այնպես, ինչպես դիմավոր բայի դեպքում է (**աշխատում է-չի աշխատում, գրել է-չի գրել** և այլն): Այլ ձևակերպմամբ՝ օժանդակ բայը ժխտական **չ** մասնիկը դրվում է բայից առաջ, իսկ 3-րդ դեմքի **է**- ն վերածվում է **ի** - ի: Ի դեպ, այդ հատկանիշը բնորոշ է նաև որոշ միադիմի բայերի (**կարելի է - չի կարելի, թվում է - չի թվում** և այլն):

Փաստորեն ժխտական խոնարհման հարացույցում այն հարում է դիմավոր բային (շարահյուսական մակարդակում՝ բայական ստորոգյալին), որը կարող է լինել նաև միադիմի: Բացի այդ, քննվող լեզվական միավորն ունի ևս մեկ առանձնահատկություն. այն երբևէ հանդես չի գալիս առանց անորոշ դերբայի: Երբ ասում ենք՝ **կարող եմ**, հետևում է հարցը՝ **ի՞նչ** — *կարող եմ գրել, կարող եմ երգել* և այլն: Այսինքն՝ այն դրսևորում է սեռային հատկանիշ (ներգործական)՝ իբրև ուղիղ խնդիր ընդունելով անորոշ դերբայ (սրան կանդրադառնանք ավելի ուշ): Այս առումով նույնական են,

տրական բառարան, հ. 3, Ե., 1974, էջ 90: Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 2010, էջ 414:

ասենք, *սիրում եմ երգել* (**դիմավոր բայ + անորոշ դերբայ**) և *կարող եմ երգել* կառույցները: Տրամաբանական է, որ նշված կազմությունը շարահյուսական մակարդակում կարող ենք ընդունել իբրև բաղադրյալ ստորոգյալ՝ **դիմավոր բայ + անորոշ դերբայ** կառույցի օրինակով⁴:

«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության **«Բայական բաղադրյալ ստորոգյալ»** բաժնում նշվում է, որ «բաղադրյալ ստորոգյալ են կազմում պարտավորական, անհրաժեշտական, կարելի-ական կամ հնարավորական նշանակություն արտահայտող **պետք է, պիտի, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, անհնար է, անհնարին է, կարող է, դժվար է, հեշտ է, պատրաստ է, ապարդյուն է** և այլ ձևերը անորոշ դերբայի հետ»: Նույն տեղում շարունակում է. «Սրանք, որ կազմված են ածականից, մակբայից կամ այլ խոսքի մասից և բայական հանգույցից, հարադրվելով անորոշ դերբային, արտահայտում են մեկ գործողություն, հանդես գալով որպես բաղադրյալ ստորոգյալ անդեմ նախադասության համար: Սրանց արտահայտած գործողությունը կապվում է ոչ թե որևէ դեմքի հետ, այլ վերաբերում է ընդհանուրին»⁵: Անշուշտ, մեջբերումը վերաբերում է միադիմի բայերին, որոնց մեջ ներկայացվում է նաև **կարող է** ձևը:

Վերլուծությունը շարունակելով՝ դիմենք հայերենին ցեղակից և մեզանում խիստ գործածական լեզուների միևնույն իրողության արտահայտությանը ևս: Այսպես՝ հարադրության ռուսերեն համարժեքն է՝ **морь**, որը նույնպես գործածվում է անորոշ դերբայի հետ միայն՝ ձևավորելով բաղադրյալ ստորոգյալ: Ռուսերեն **Морь**,

⁴ Տե՛ս **Գ.Բ. Զահուկյան**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 403-404:

⁵ **Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ.Գ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն*, հ. 3, Ե., 1976, էջ 161:

ли я вас попросить? արտահայտությունը թարգմանվում է՝ *Կարո՞ղ եմ արդյոք ձեզ խնդրել*: Բայի ուղիղ ձևն է՝ **мочь** «կարողանալ, ի վիճակի լինել»⁶: Անգլերենում *կարող եմ* ձևի համարժեքներն են՝ **can** «կարողանալ, ի վիճակի լինել»⁷ և **may** «կարենալ, թույլտվություն ունենալ»⁸: Նշված լեզուներում ներկայացված ձևերը դիտվում են իբրև մոդալ (եղանակավորող կամ պակասավոր) բայեր, որոնց բնորոշ է անորոշ դերբայի հետ գործածությունը⁹:

«Լեզվաբանական բառարանում» եղանակավորող բայերը բնորոշվում են հետևյալ կերպ. «Եղանակավորման նշանակությամբ հանդես եկող որոշ բայաձևեր, որոնք արտահայտում են գործողության սուբյեկտի՝ ենթակայի վերաբերմունքը գործողության նկատմամբ: Այդպիսիք են, օրինակ, գերմ. **können, dürfen, mögen, müssen, sollen, wollen, lassen** բառերը: Դրվում են սովորաբար դերբայական ձևերի (անորոշ դերբայի) վրա»¹⁰:

Անդրադառնանք մեր լեզվի նախորդ փուլերին և տեսնենք, թե մեզ հետաքրքրող միավորն ինչպիսի՝ արտահայտություն ուներ նախկինում: Այսպես՝ գրաբարում նույն նշանակությամբ գործածվում է *մարթի* բայը, որը թարգմանվում է «կարելի է, կարող է, հնարավոր է»¹¹: Օրինակ՝ «Եւ զայն ոչ գիտեն, թէ որպէս վնասակարացն ընդ անվնասակարսն չմարթի բնակել, նոյնպէս եւ ոչ բարւոյն ընդ չարին մարթի ի միում արգանդի յղենալ»¹²: Թարգմանվում է՝ «Եվ չգիտեն այն, որ ինչպէս վնասակարներն անվնասների հետ չեն

⁶ Ա.Մ. Ղաբիբյան, *Ռուս-հայերեն բառարան*, Ե., 1977, էջ 497:

⁷ Հ.Ա. Ասմանգուլյան, Մ.Ա. Հովհաննիսյան, *Անգլերեն-հայերեն բառարան*, Ե., 1984, էջ 133, էջ 579:

⁸ Նշվ. աշխ., էջ 579:

⁹ Տե՛ս Ալ. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 390-392:

¹⁰ Հ.Զ. Պետրոսյան, Մ.Ա. Գալստյան, Թ.Ա. Ղարազյուլյան, *Լեզվաբանական բառարան*, Ե., 1975, էջ 88:

¹¹ Վ.Առաքելեան, *Գրաբարի քերականություն*, Ե., 2010, էջ 174:

¹² Նշվ. աշխ., *Եզնիկ*, Բ, էջ 132-133:

կարող բնակվել, այնպես էլ բարին և չարը **չեն կարող** միևնույն արգանդում **հղանալ**»: Բացի միադիմի լինելուց, այն նաև կանոնավոր խոնարհման բայ է՝ բազմաթիվ իմաստային նրբերանգներով: ՆՀԲ-ն նշում է բայի «կարել, գորել, կարօղ եմ» նշանակությունները՝ բերելով մի շարք օրինակներ, ինչպես՝ «Երանի է ձեզ, թե *մարթիցէք* աղաչել զերեսս տեառն» (Ագաթանգեղոսից): Կամ՝ «Դիւրաւ ճանաչել *մարթիցենք* (Եվսեբիոս Կեսարացոյց) և այլն¹³: Նշում է նաև **կարեն (կարացի, կարացեալ)** չեզոք բայը և մեկնաբանում է՝ «ունել զկար բաւական առ ի գործել ինչ, ձեռնհաս լինել» (1, 1067): Դարձյալ բերվում են բազմաթիվ օրինակներ, ինչպես՝ «**Ոչ կարենք** հակառակ ինչ չար ասել բարւոյ» (Ագաթանգեղոսից), «Յով և կարաց ոք զերծանել» (Թովմա Արծրունուց) և այլն: Ի դեպ, ՆՀԲ-ն նշում է **կարող եմ** հարադրության գործածության օրինակներ ևս՝ վկայելով «Հաճախապատումը» (1, 1076), ինչպես նաև **կարողիմ/եմ** «կարողանալ, հնարիլ» նշանակությամբ ձայնակրական բայը՝ վկայելով Ագաթանգեղոսին, 10-11-րդ դդ. հեղինակի (1, 1076): Ստ. Մալխասյանցը նույնպես նշում է **կարող եմ** բայը՝ «կարողանալ, հնարավորություն գտնել» իմաստներով (հ. 2, 414): Թերևս այս բայի հետագա տրոհմամբ էլ առաջացել է քննվող հարադրությունը:

Միջին հայերենում գործածական է **կարնալ** (համապատասխանում է գրաբարյան **կարել** «կարողանալ» բային), ինչպես՝ «**Չեմ կարնար** գրել չարիքն, գոր վերին աշխարհն քաշեց ևս առաւել ծովու բոլորս»¹⁴:

Վերադառնալով հայերենի արդի փուլ՝ նախ նշենք, որ մեզ հետաքրքրող լեզվական միավորն ունի իր խոսակցական և բարբառային տարբերակները: Արարատյան բարբառի տարբեր խոս-

¹³ Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ.Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ.1, Վենետիկ, 1836 թ., էջ 224-225:

¹⁴ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 367:

վածքներում գործածական է **կարամ** բայը: Բայագետի բարբառում գործածվում է **կանալ** անկանոն բայը (այն հանդես է գալիս նաև որպես կանոնավոր բայ՝ գրական հայերենի **կարողանալ** բայի արժեքով) և այլն¹⁵: Հր. Աճառյանը բառի **կար** իրանական ծագման արմատի համար նշում է նրանից բաղադրված **գ'արնիլ** (Սվեդիայի), **գրրնալ** (Մեքաստիայի), **գոնալ** (Խարբերդի), **գրրամ**, **կոնալ** (Ալաշերտի, Մշո), **գրնամ** (Ակնի), **կանամ** (Վանի) և բարբառային այլ տարբերակներ¹⁶: Պետք է նկատել, որ մի շարք բարբառներում էլ բայն անորոշ դերբայի առումով պակասավոր է, կամ նվազ գործածական է:

Ամփոփելով գրաբարյան, միջինհայերենյան, ժամանակակից հայերենի բարբառային օրինակների գրառումը՝ փաստենք, որ մեզ հետաքրքրող կազմության համարժեքները բոլոր դեպքերում բայեր են:

Արևմտահայ գրական լեզվում **կրնամ** բայը ներկայացվում է պակասավոր բայերի շարքում: Ռ. Սաքապետոյանը գրում է. «**Կրնամ** բայը ունի բոլոր ժամանակաձևերը, բացի սահմանական ապառնի, անցյալ ապառնի և ըղձականի ձևերից, որոնք լրացվում են **կարենալ** բայի ձևերով (*պիտի կարենամ, պիտի կարենայի*): **Կարենալ** և **կրնամ** բայերը փոխադարձաբար լրացնում են միմյանց. **կարենալ** բայի պակասող ձևերը լրացվում են **կրնամ** բայի ձևերով»¹⁷: Պետք է նկատել, որ գրական արևելահայերենում ևս **կարող եմ** և **կարողանում եմ** ձևերը լրացնում և փոխարինում են միմյանց՝ ըստ համապատասխան կիրառությունների:

¹⁵ Տե՛ս Վ.Լ. Կատվայան, *Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները ջրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 428-437:

¹⁶ Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., 1973, էջ 543:

¹⁷ Ռ. Կ. Սաքապետոյան, *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006, էջ 172:

Գարող եմ հարադրությանն անդրադառնում է Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ՝ «Հավելավոր բայերի սահմանական ներկա և անկատար անցյալ ժամանակները և ստորադասությունը» բաժնում, որում այն իբրև բայ է ներկայացվում: Ըստ Աբեղյանի՝ «Գարող եմ» բայի ստորադասականը լրանում է *կարենալ* և *կարողանալ* բայերով¹⁸: Գրաբարի քերականական առանձնահատկությունների մասին՝ Աբեղյանը գրում է, որ կան բայեր, որոնք առանձին գործածությամբ դրվելով անորոշ դերբայի հետ՝ տալիս են նրան որևէ եղանակի, երբեմն աշխարհաբարի որևէ բաղադրյալ ժամանակի իմաստ: Այդ բայերը դիտելով իբրև եղանակիչներ՝ այնուհետև նշում է, որ *բոլոր պակասավոր բայերը եղանակիչ բայեր են*: Ապա թվարկում է այդ բայերը՝ *ունիմ, պարտիմ, պիտի, մարթի, լինիմ, եմ*¹⁹: Նույն տեղում ներկայացնում է *ունիմ* բայի նշանակություններն անորոշ դերբայի հետ՝ «կարեմ, մարթեմ, գիտեմ=կարողանալ, կարող լինել, գիտենալ, ունենալ»: Իբրև օրինակ՝ նշում է հետևյալ նախադասությունները՝ «Նաև ոչ շնչական **ունիմ անուանիլ**» = «Շնչավոր էլ **չեմ կարող կոչվել**»²⁰:

Աբեղյանը գրում է. «...ինչպես շատ լեզուների մեջ, նույնպես և հայերենում, կարելիական կամ հարկադրական բնավորություն է ստանում, երբ բայի սահմանական կամ ըղձական եղանակի վրա ավելանում է ձևական նշանակություն ունեցող մի բառ կամ մասնիկ, որ ցույց է տալիս հնարավորություն կամ անհրաժեշտություն, կամ թե անորոշ դերբայը դրվում է իբրև լրացում այնպիսի բայերի, որոնք նշանակում են՝ կարողանալու, կարելի, հնարավոր կամ անհրաժեշտ, հարկավոր լինելու գաղափարը: Դրանք եղանակական կամ եղանակիչ բայեր են: Գրաբարի սովոր-

¹⁸ Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 310:

¹⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Զ, Ե., 1974, էջ 752:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

րական եղանակիչ բայերն են կարելիական նշանակությամբ՝ **կարեմ, մարթեմ, մարթի, մարթ է.** աշխարհաբար **կարող եմ, կարելի է, գուցե, թերևս** և նման բառեր: Այս բայերի սահմանական եղանակի հետ անորոշ դերբայը ստանում է ենթադրական կամ հարկադրական եղանակի նշանակություն»²¹:

Քննվող միավորին անդրադարձել է նաև Հրաչյա Աճառյանը: Այսպես՝ **կրնամ _կարենամ** արևմտահայերենի ձևերը վերլուծելիս Աճառյանը գրում է. «Արևելյան գրականում սովորական են միայն ստորադասական ներկա **կարենամ...** և ստորադասական անկատար **կարենայի** ձևերը: Մնացյալի համար գրական լեզուն գործ է ածում **կարողանալ** կամ **կարող եմ** բայերը»²² (այստեղ կարևորում ենք հատկապես **բայ** եզրույթի գործածությունը): Այնուհետև ներկայացնում է **կարամ** գավառական ձևի խոնարհման եղանակաժամանակային դրսևորումները՝ դրանք դիտելով իբրև «խտտելի» գործածություններ:

Հետագայում **կարող եմ** բայը կարծես թե ուշադրությունից դուրս է մնում հայ քերականագիտության մեջ, կամ գուցե նրա քննությունը կարևորություն չի ստանում:

Խոսելով պարզ բայերի սոսկաձանցավոր բառազույգերի իմաստային նրբերանգների մասին (գիտեմ-գիտենում եմ, ունեմ-ունենում եմ)՝ Մ. Ասատրյանը գրում է. «Իմաստային այս նույն երանգն է դրսևորվում նաև **կարող եմ-կարող էի/կարողանում եմ-կարողանում էի, ուզում եմ-ուզենում էի** համապատասխան զույգերի մեջ»²³: Սակայն ոչինչ չի նշվում **կարող եմ** հարադրության ձևաբանական արժեքի մասին:

²¹ Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 244:

²² Հր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 4, գիրք Բ, Ե., 1961, էջ 38:

²³ Մ.Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2002, էջ 325:

Հայերենի եղանակավորիչ բայերի քննությանը անդրադարձել է Ալ. Մարգարյանը՝ «Հայերենի հարադիր բայերը» աշխատության մեջ, որում հանգամանալից քննում է վերը նշված բայերի և անորոշ դերբայի միասին գործածվելու երևույթը: Թեև **կարող եմ** բայը հատուկ ուշադրության չի արժանացնում, սակայն **կը** եղանակիչի ծագումը քննելիս (այն կապում է **կամիլ** եղանակիչ բայի ներկայի 3-րդ դեմքի **կամի** ձևի և **անորոշ դերբայի** լայն գործածության հետ, մեկի «անսովոր կրճատման», իսկ մյուսի դիմավորման ենթարկվելու ճանապարհով) կարևոր դիտարկումներ է անում, որոնք ընդհանրություններ ունեն ուսումնասիրվող միավորի հետ նա: Այսպես՝ Մարգարյանը գրում է. «...գործողության նկատմամբ խոսողի վերաբերմունքը ոչ միայն «մաքուր եղանակային» ձևերով է արտահայտում, այլև գործ է ածում այլ լեզվական միջոցներ, որոնք և, անորոշի հետ արտահայտելով եղանակային կամ դրան մոտ նշանակություն, անխզելի ու սերտ կապի մեջ են գտնվում նրա հետ, մի կապ, որ մթագնել է տալիս եղանակիչ բայերի նախնական նշանակությունը և առանձին լեզուներում նրանց զրկելով եղանակային նշանակությունից՝ վերածում եղանակիչ-մասնիկի»²⁴: Այստեղ կարևորվում է **կարող եմ + անորոշ դերբայ** կառուցի նույն յուրահատկությունը: Մեկ այլ կարևոր դիտարկում կա եղանակավորող բայերի խնդրառության վերաբերյալ. «Եղանակավորող բայերի մեջ կան այնպիսիները, ինչպես՝ **կարողանալ, կարենալ, ճգնել, պատրաստվել, համարձակվել** և այլն, որոնք չեզոք սեռի բայեր են: Դրանք հանդես են գալիս անորոշ դերբայի հետ, բայց անորոշը ոչ թե **ուղիղ խնդիր է, այլ ստորոգյալի մաս է** և այդ չափով էլ ենթակայի գործողություն է ցույց տալիս»²⁵: Դրանով է լեզվաբանը բացատրում այն, որ ժողովրդախոսակցական լեզվում անորոշ դեր-

²⁴ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 378:

²⁵ Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 249:

բայը հաճախ դիմավորվում և գործածվում է խոնարհված ձևով: Միաժամանակ Մարգարյանը գրում է. «Ինչպես համադրական, այնպես էլ հարադրական բայերի անորոշի ձևերը եղանակավորիչ բայերի հետ հավասարապես բաղադրյալ ստորոցյալ են կազմում»²⁶:

Հարադրությունը դիտարկելով իբրև մեկ ամբողջական լեզվական միավոր՝ պետք է հաշվի առնել մեկ հանգամանք ևս. այն եզակի երրորդ դեմքով գրական և խոսակցական տարբերակներում հանդես է գալիս **եղանակավորող բառի** արժեքով՝ երկբայական նշանակությամբ, ինչպես՝ «-Ա՛, մե՛ծ պապիկ,- ուրախ գոչեցի ես՝ նույնիսկ չմտածելով, որ մերոնք **կարող է** արթնանան ու զարմանան, թե այդ ու՛մ հետ եմ խոսում» (Ս. Խանգաղյան, «Արաքսը պղտորվում է», Ե., 1985, էջ 4), կամ՝ «Արձակուրդից վերադառնալը դժվար է. **կարող է** հիվանդանաք» (www.tert.am): Ակնհայտ է, որ այն հանդես է գալիս իբրև մեկ ամբողջական միավոր: Մեկ այլ պարագայում՝ **կարող է/չի կարող պատահել** հարադրության մեջ, այն գործածվում է իբրև միադիմի բայ:

Ուսումնասիրելով **կարող եմ** հարադրության գործածության գանազան դրսևորումները, եղանակավորող բայերի ընդհանուր առանձնահատկությունները՝ կարելի է ասել, որ այն գրական արևելահայերենում հանդես է գալիս իբրև մեկ ամբողջական, անտրոհելի լեզվական միավոր: Եղանակավորումը բնորոշ է ոչ միայն ռուսերենի, անգլերենի, գերմաներենի և այլ լեզուների, այլև հայերենի որոշ բայաձևերի (և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ ժամանակակից հայերենում): Այդ երևույթի դրսևորումներից է **կարող եմ** հարադիր կազմությամբ բայը, որն ունի **եղանակավորող կամ եղանակիչ** (ինչպես Արեղյանն է բնորոշում) **բայի** արժեք: Խոնարհվում է ներկա և անցյալ ժամանակների բոլոր դեմքերով և հանդես է

²⁶Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., նույն տղում:

գալիս միայն անորոշ դերբայի հետ: Շարահյուսական մակարդակում ձևավորում է բաղադրյալ ստորոգյալ:

Հարադրությունը հանդես է գալիս նաև իբրև վերաբերական խոսքի մաս՝ երկբայական նշանակությամբ:

2.2. ՄԵՐՈՆՔԵՎ ՉԵՐՈՆՔ ԲԱՌԵՐԻ
ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՐՑԸ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի հայերենի թե՛ գրական և թե՛ խոսակցական տարբերակներում լայն գործածություն ունեցող **մերոնք** և **ձերոնք** բառերի խոսքիմասային պատկանելության հարցը ուշադրության են արժանացրել բազմաթիվ լեզվաբաններ, և այն իր արտացոլվել է հայերենագիտական համապատասխան աշխատություններում, ինչպես նաև այս կամ այն չափով ներկայացվել է հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում: Չնայած դրան՝ վերը նշված բառերի խոսքիմասային պատկանելության հարցն առ այսօր շարունակում է մնալ վիճելի և տարակարծությունների տեղիք տվող:

Մեր նպատակն է ուսումնասիրել հարցի պատմությունը հայերենի քերականական աշխատություններում, բառարաններում, համադրել և վերլուծել տարբեր քերականների տեսակետներն ու հիմնավորումները, ինչպես նաև պարզել գրական արևելահայերենում բառերի գործածության հաճախականության մոտավոր պատկերը:

Այսպես՝ ըստ «Արևակ» ԱԱԿ էլեկտրոնային շտեմարանի տվյալների (պարունակում է 110 մլն բառամթերք, 19-րդ դ. կեսերից մինչ այսօր հրատարակված տեքստեր)՝ **մերոնք** (միայն ուղիղ ձևով) բառն ունի 2739 համատեքստային և 1112 տեքստային գործածություն, իսկ **ձերոնք**-ը՝ 317 համատեքստային, 173 տեքստային գործածություն²⁷:

²⁷ Տե՛ս www.eanc.net/EANC/search/?interface_language=am/27.07.21:

Շատ քերականներ բառերը ներկայացնում են որպես հավաքական գոյականներ²⁸, ոմանք էլ՝ որպես դերանուններ՝ առանց տեսակը նշելու²⁹: Որոշ քերականներ էլ բառերը ներկայացնում են որպես փոխանուն ստացական դերանուններ: Այդպես է վարվում Ալ. Մարգարյանը՝ բառերի շարքը լրացնելով **իմը-իմոնք, քոնք-քոնոնք, մերը, ձերը** միավորներով: Լեզվաբանը նաև իրավացիորեն նշում է, որ անձնական դերանունների փոխանվանական այդ ձևերը տակավին հիմնավոր ու ճիշտ պատասխան չեն ստացել և «պահանջ են դնում պարզելու, թե իրապես լեզվական ինչ կամ ինչպիսի իրողություններ են դրանք»³⁰:

Մ. Ասատրյանը, խոսելով հավաքական գոյականների կազմության և դրանց քերականական առանձնահատկությունների մասին, «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ գրում է. «Կան նաև **ՈՆՔ** ձևով կազմված բառեր դերանունների սեռական հոլովաձևերից, օրինակ՝ **մերոնք, ձերոնք**: Ժողովրդական – բարբառային են **իմոնք-քոնոնք** և այլ ձևերը»³¹: Այսինքն՝ բառերի խոսքիմասային պատկանելությունը չի նշում՝ միաժամանակ դրանք առանձնացնելով գոյականներից:

Ներկայացնելով դերանվան յոթ տեսակ՝ Ալ. Մարգարյանը գրում է. «Բայց միաժամանակ հարկ է նշել, որ պատմական զարգացման բոլորովին այլ ընթացք են ունեցել գրաբարի ստացական դերանունները՝ **իմ-իմք, մեր-մերք, իւր-իւրք, քո/քոյ-քոյք, ձեր-**

²⁸ Տե՛ս **էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976 (**մերոնք**), էջ 922, (**ձերոնք**), էջ 1002: **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան* (հմմտ. **ձերոնք, իմոնք**), հ. 3, Ե., 2010, էջ 312: Ժամանակակից հայերենի քառահատոր բացատրական բառարանում **մերոնք**-ի խոսքի մասը չի նշվում, հ. 3, Ե., 1976, էջ 525, իսկ **ձերոնք**-ը նշվում է որպես հոգնակի գոյական (բրբ.), էջ 416:

²⁹ Տե՛ս **Մ. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 2, Ե., 1974, էջ 101 («Դերանուն» բաժինը՝ Մ. Աբրահամյանի):

³⁰ Տե՛ս **Ալ. Մարգարյան**, *Հայոց լեզվի քերականություն*, Ե., 2004, էջ 309:

³¹ **Մ. Ասատրյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2002, էջ 53:

ձերը: Դրանք ստացականություն, պատկանելություն են ցույց տվել և եթե գրաբարում թե՛ առանձնաբար, թե՛ գոյականների հետ հոլովվել են եզակի ու հոգնակի թվով (օր.՝ **իմ տուն//տուն իմ, իմոյ տան//տան իմոյ-իմում տան//տան իմում-(գ)իմ տուն-(գ)տուն իմ- ի տանէ իմմէ- յիմմէ տանէ, իմով տամք// տամք իմով** և այլն), ապա նոր հայերենում՝ աշխարհաբարում, տեղի տալով անձնական՝ հատկապես սեռական 1-ին և 2-րդ դեմքի դերանունների սեռական հոլովածներին՝ դադարել են այդպիսիք՝ ստացական դերանուններ լինելուց:

Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ ժամանակակից հայոց լեզվում ստացական դերանվան սոսկ յուրատեսակ դեր են կատարում **ես, դու, մենք, դուք** անձնական դերանունների սեռական հոլովածները, երբ փոխանվանական նշանակությամբ են գործածվում, հմմտ. **իմ-իմը-իմոնք, քո-քոնը- քոնոնք, մեր-մերը-մերոնք, ձեր- ձերը- ձերոնք**³²: Ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա բառերի շարքը լրացվել է **իմը-իմոնք, քոնը- քոնոնք, մերը, ձերը** բառերով, որոնք ավելի հաճախ որպես բարբառային ձևեր են համարվել: Այնուհետև դրանց գործածության բազմաթիվ օրինակներ է բերում և գրում. «Թե ի՞նչ խոսքի մասի են պատկանում կամ ի՞նչ խոսքիմասային իմաստ են արտահայտում անձնական դերանունների՝ սեռականների փոխանվանաբար գործածվող այդ ձևերը, տարբեր կերպ է մեկնաբանվել հայ լեզվաբանական գրականության մեջ: Ոմանք դրանք չեն զատել դերանուններից և կամ սեռականի փոխանվանական ձևեր, կամ սոսկ դերանուններ են համարել՝ չնշելով տեսակը (Ս. Աբրահամյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, 2-րդ հ., էջ 101): Ոմանք էլ անտեսել են **իմը-իմոնք, քոնը-քոնոնք, մերը, ձերը** ձևերը և դերանուն են համարել միայն վերջիններիս հոգնակիները (**մերոնք, ձերոնք**), իսկ ոմանք էլ,

³² Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 308:

հատկապես բառարաններում, իբրև գոյականներ են ներկայացրել, դրանցից բացի, նաև **խմոնք**-ը»³³:

Այնուհետև Մարգարյանը եզրակացնում է՝ «Անձնական դերանուններից սերող այդ ձևերը բոլոր դեպքերում դերանուններ են և, իբրև այդպիսիք, հատկանշվում են դրանց իսկ հատուկ խոսքամասային իմաստով. **խմը - խմոնք, քոնը - քոնոնք, մերը - մերոնք, ձերը - ձերոնք** զուգադիր ձևերը ընդհանուր, չտարբերակված առարկայական և ներունապես էլ պատկանելության, ստացականության իմաստ են արտահայտում, ուստի և դերանվան մի առանձին տեսակ են հանդիսանում և իրավամբ էլ կարող են կոչվել **փոխանուն ստացական դերանուններ**: Իբրև դերանվան մի առանձին տեսակ, դրանք հարաբերակցվում են գոյականներին և հոլովվում են՝ եզ. թվում **-ի**, հոգնակի թվում **-ց** հոլովմամբ»³⁴: Ապա հոլովում է բառերը՝ այս խմբի մեջ մտցնելով նաև **իրենը** և **իրենցը** ձևերը, որոնք, սակայն, կազմվում են տրականից:

Ս. Աբրահամյանն իր «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ նշելով, որ պրոֆ. Ն. Աճառյանն ընդունում է ստացականն իբրև դերանվան առանձին տեսակ, այնուհետև մեջբերում է Աճառյանի հետևյալ ձևակերպումը՝ «Ստացական դերանուն է կոչվում այն բառը, որ ցույց է տալիս, թե առարկան երեք (կամ ավելի) դեմքի դերանուններից ում է պատկանում: Օր.՝ այսինչ ձին իմն է» (Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Եր., 1954, էջ 139), ապա գրում է. «Պարզ է, որ **խմն** դերանունը **ես** դերանվան փոխանուն սեռականն է: Այդ հաստատում է նաև ինքը՝ պրոֆ. Աճառյանը: Որ ստացական կոչվող դերանունները արդի հայերենում դերանվան առանձին տեսակ չեն, այդ մասին խոսվել է վերևում, և դա երևում է հենց այդ դերանունների վե-

³³ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 309:

³⁴ Ալ. Մարգարյան, նույն տեղում:

րոհիշյալ սահմանումից, որը փաստորեն հանդիսանում է անձնական դերանվան սեռական հոլովի բնորոշում: Այդ պատճառով էլ դերանվան այս տեսակի գոյությունը արդի հայերենում վաղուց մերժված է քերականների կողմից»³⁵:

«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ Աբրահամյանը գրում է. «**Ց** հոլովման են պատկանում նաև մի շարք դերանունների հոգնակիներ՝ **իմոնք-իմոնց, քոնոնք-քոնոնց, մերոնք-մերոնց, ձերոնք-ձերոնց, իրենք-իրենց, սրանք-սրանց, նրանք-նրանց, որոնք-որոնց, ոմանք-ոմանց**, ինչպես և որոշ յուրահատկությամբ՝ **կին** գոյականի հոգնակին՝ **կանայք- կանանց**»³⁶: Ս. Աբրահամյանն ընդունում է բառերի դերանուն լինելը, պարզապես չի նշում տեսակը՝ ստացական դերանունները որպես առանձին տեսակ չընդունելու պատճառով:

Հ. Հարությունյանն «Ածական անուն. դերանուն» գրքում առաջարկում է դերանունները բաժանել հետևյալ 3 տեսակների՝ որոշ հարցերում, ինչպես ինքն է գրում, հետևելով ռուս լեզվաբանությանը:

1) Առարկայանիշ կամ գոյական դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկա՝ *ես (մենք), դու (դուք), ամեն ինչ, նա (նրանք), մերոնք, ձերոնք, սա, դա, միմյանց, իրար, մեկմեկու, ամենքը, ամեն ոք, ամեն ինչ, մեկը, ոչ մեկը, ոչինչ, ոչ ոք, ոմանք, ով (ովքեր), ինչ (ինչեր), որոնք*:

2) Ածականանիշ կամ ածական դերանուններ՝ *այս, այդ, այն* և այլն:

³⁵ Ս. Գ. Աբրահամյան, *Արդի հայերենի դերանունները*, Ե., 1956, էջ 178:

³⁶ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 2, էջ 101 (Դերանուն բաժինը՝ Ս. Աբրահամյանի):

3) Մակբայանիշ կամ մակբայ դերանուններ՝ *այսպես, այդպես* և այլն³⁷:

Կարևոր է, որ մեզ հետաքրքրող բառերը որպես դերանուն են ներկայացվում: Վերոհիշյալ աշխատության «Դերանվան ձևաբանական առանձնահատկությունները» բաժնում Հ. Հարությունյանը գրում է. «**Մերոնք** և **ձերոնք** դերանունները հոգնակի են, որոնք կազմված են անվանական **-ոնք** հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում են առաջին կամ երկրորդ դեմքերին վերաբերող, մոտ անձ, առարկա, **-ոնք**-ը փաստորեն նաև գոյականի հոգնակիությունը, հավաքականությունն է ցույց տալիս»³⁸:

Նշված բառերի խոսքիմասային պատկանելության հարցին անդրադարձել է նաև Ֆ. Խլղաթյանը՝ 1968 թ. տպագրված հոդվածում. մանրամասնորեն քննելով դերանունների և գոյականների իմաստային առանձնահատկությունները՝ իրավացիորեն կարծում է, որ դրանք պետք է համարել դերանուններ³⁹: «**Մերոնք** և **ձերոնք** բառերը,– գրում է Խլղաթյանը,– իրենց բառային քերականական առանձնահատկություններով և, նամանավանդ, առարկայական իմաստի արտահայտման բնույթով անձնական դերանուններ են, ուստի պետք է հայերենի խոսքի մասերի համակարգում նրանց հատկացնել իրենց օրինական տեղը»⁴⁰: Իր հետագա աշխատություններում անձնական դերանունները բաժանում է հետևյալ ենթատեսակների՝ դիմային (**ես, դու, ինքը, մենք, դուք, իրենք**), հատկացական (**մերոնք, ձերոնք**), ցուցական (**նա, նրանք**), սաստկական (**ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք**

³⁷ Տե՛ս Հ.Ա. Հարությունյան, *Ածական անուն. դերանուն*, Ե., 1976, էջ 71:

³⁸ Հ.Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 76:

³⁹ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, «*Մերոնք*» և «*Ձերոնք*» բառերի մասին, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1-2, Ե., 1968, էջ 99-102:

⁴⁰ Ֆ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 101:

ինքներդ, նրանք իրենք)⁴¹: Ուշագրավ է այն, որ խնդրո առարկա բառերը ներկայացված են որպես առաջին և երկրորդ դեմքերի դերանուններ, մինչդեռ դրանք երրորդ դեմքի են: Ըստ Խլղաթյանի՝ «Աբեղյանը, հետևելով օտար լեզուների ավանդույթներին, *իւմ, քո, մեր, ձեր* սեռական հոլովածները համարում է ստացական ածական: Այս տեսակետն ընդունելություն չգտավ»⁴²:

Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ նշում է. «Իրադրական և կոնտեքստային իմաստը բնորոշ է նաև մի շարք այնպիսի բառերի համար, որոնք, ինչպես **ինչ**-ը, հոլովվում են անվանական տիպի հոլովմամբ: Դրանք մասամբ ինքնին առարկայանիշ են (**միմյանց, իրար, մեկմեկու**), մասամբ առարկայանիշ են դառնում փոխանունաբար (**մեր-ոնք, ձեր-ոնք, որ-ոնք, մի քանիսը, մեկը, ոչ մեկը**)»⁴³: Այնուհետև ավելացնում է. «Ինչպես վերևում նշվեց, դերանվանական հոգնակին ոչ միայն ձևով, այլև իմաստով հիշեցնում է **անք, ենք, ոնք** վերջավորություններով կազմությունները, այսինքն՝ վերջիններիս նման լրացական բնույթ ունի՝ **մենք=ես+այլ անձինք (դու, դա, դուք, նրանք), դուք=դու+այլ անձինք (նա, նրանք), իրենք=ինքը +այլ անձինք**»⁴⁴: Այսինքն՝ Ջահուկյանը ևս բառերը դերանուն է համարում:

Խնդրո առարկա բառերը դերանուն համարելու միտում կա նաև արդի շրջանի աշխատություններում, թեև նշվում է, որ դրանք երկակի բնույթ ունեն: Այսպես՝ Յու. Ավետիսյանի և Հ. Ջաքարյանի գրքում բառերը ներկայացված են անձնական դերանունների բաժնում՝ իբրև ծանոթություն. «1-ին և 2-րդ դեմքերին են հարաբերակց-

⁴¹ Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. Գ, Ե., 2007, էջ 114-115:

⁴² **Ֆ. Խլղաթյան**, նույն տեղում:

⁴³ **Գ. Ջահուկյան**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 215:

⁴⁴ **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 215:

վում 3-րդ դեմքի **մերոնք**, **ձերոնք** բառերը, որոնք մասնանշում են խոսողի կամ խոսակցի անունից հանդես եկող խումբ՝ բացառյալ խոսողը կամ խոսակիցը (Սիրելի՛ս, **ձերոնք** արդեն գնացել են: **Մերոնք** իմ մասին մոռացել են): Անեզական այս բառերը ենթարկվում են **g** հոլովման: Դրանք սովորաբար համարվում են գոյականներ, երբեմն՝ դերանուններ»⁴⁵:

Ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա բառերի խոսքիմասային պատկանելության հարցը սերտորեն կապված է արդի հայերենում ստացական դերանունների՝ որպես առանձին տեսակ ընդունելու կամ չընդունելու հետ: Ստացական դերանունների հարցին անդրադարձել են մի շարք հայերենագետներ, որոնց տեսակետների ամփոփ շարադրանքը տվել է Մ. Պ. Մինասյանը «Հայերենի ստացական դերանունները» հոդվածում՝ այն միտումով, որ արդի հայերենում այդպիսիք չկան⁴⁶:

Ներկայացնելով հայ քերականների դիտարկումները գրաբարի ստացական դերանունների՝ իբրև առանձին տեսակ ընդունելու վերաբերյալ՝ Թրակացու աշխատության թարգմանությունից մինչև 20-րդ դարի լեզվաբանություն՝ Մինասյանը եզրակացնում է. «Սակայն քանի որ գրաբարում ստացական դերանունները մի անգամ ծագած լինելով անձնական դերանունների սեռական հոլովաձևերից՝ իբրև ինքնուրույն բառեր, գոյականի հետ գործածվելիս դարձյալ ենթարկվում են հոլովման և ստացականություն կամ պատկանելություն են ցույց տալիս և նախադասության մեջ հատկացուցիչ են ոչ միայն իրենց ուղիղ կամ անձնական դերանվան սեռական հոլովի ձևով, այլ նաև դերանվան սեռական հոլովի ձևով, այլ նաև իրենց թեք հոլովաձևերում, ապա դրանք իրավամբ կազ-

⁴⁵ Թու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, *Հայոց լեզու. ձևաբանություն*, Ե., 2008, էջ 126:

⁴⁶ Տե՛ս Մ. Պ. Մինասյան, *Հայերենի ստացական դերանունները*, «Պատմաբանասիրական հանդես», N 4, Ե., 1959, էջ 153-167:

մում են դերանունների առանձին տեսակ՝ ստացական դերանուններ»⁴⁷:

Մինչ այս եզրակացությանը հանգելը հեղինակը զուգահեռներ է անցկացնում թուրքերենի հետ (թեև սպասելի էր, որ դա կարվի հայերենին ցեղակից լեզուների հետ), և գրում է, որ «թուրքերենում անձնական դերանունը չունի սեռականի առանձին ձև, ինչպիսին ունի գրաբարյանը կամ ընդհանրապես հայերենը»⁴⁸: Ապա շարունակում է. «Բայց քանի որ գրաբարում անձնական դերանունները սեռական հոլովի համար (ոչ միայն սեռական) ունեն ձև՝ դերանվան արմատի փոփոխմամբ, ուստի գրաբարում անթույլատրելի է ասել **տուն էս-ի**, **որդի դու-ի** և այլն: Ասվում է, բայց տարբեր արտահայտությամբ՝ **տուն իմ**, **որդի քո**, **այգի մեր** և այլն, որոնք իմաստով նույնն են, ինչ թրք. **benim evim**, **senin**, **oglund**, **bisim**, **bahce** և այլն»⁴⁹: Նույն էջի տողատակում ծանոթագրության տեսքով գրում է նաև, որ «թուրքերենում, ինչպես և արդի հայերենում, անձնական դերանունների սեռականը իբրև հատկացուցիչ գործածվելիս մնում է անփոփոխ, ուստի նրանում ևս չկան ստացական դերանուններ իբրև առանձին խումբ»⁵⁰:

Հեղինակը չի անդրադառնում խնդրո առարկա բառերի քըննությանը և իր դիտարկումները կատարելիս շեշտում է ստացական դերանունների ծագումը, դրանց տարահիմք հոլովումը, ինչպես նաև հատկացուցիչ – հատկացյալի համաձայնությունը:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ներկայացնում հայերենի ստացական դերանունները Հր. Աճառյանը: Ըստ նրա՝ «Ստացական դերանուն է կոչվում այն բառը, որ ցույց է տալիս, թե այսինչ առար-

⁴⁷ Մ. Պ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 165:

⁴⁸ Մ. Պ. Մինասյան, նույն տեղում:

⁴⁹ Մ. Պ. Մինասյան, նույն տեղում:

⁵⁰ Մ. Պ. Մինասյան, նույն տեղում:

կան երեք (կամ ավելի) դեմքի դերանուններից ու՛մ է պատկանում: Օր.⁵¹ *այս ձին իմն է*: Այս նախադասության մեջ խոսքի առարկան *ձին* է. *իմն* բառը ցույց է տալիս, որ այդ առարկան առաջին դեմքին (*ես*) է պատկանում, ուստի *իմն* դերանունն է:

Ըստ այսմ ստացական դերանունը իր ծագման բուրանից անմիջապես կապված է, նախ՝ անձնական դերանունների երեք (կամ ավելի) դեմքերից մեկի հետ և, երկրորդ՝ այդ կապը պատկանելությունն է: Եվ որովհետև պատկանելությունը գլխավորապես արտահայտվում է սեռական հոլովով, ուստի ստացական դերանուններն էլ անձնական դերանունների սեռականներն են՝ լեզուների մեկ մասի մեջ»⁵¹: Այնուհետև քննում է ցեղակից և ոչ ցեղակից, հին և նոր բազմաթիվ լեզուներ, որոնցում ստացականները սերում են անձնական դերանունների սեռականներից, այդ թվում՝ չինարեն, ճապոներեն, թուրքերեն, օսեթերեն, պարսկերեն, քրդերեն, շվեդերեն և այլն:

Ապա քննում է գրաբարի ստացականները՝ հետևյալ նախաբանով. «Գրաբարի մեջ ստացական դերանուններն են *իմ, քո, մեր, ձեր, իւր*: Այս բոլորը անձնական դերանունների սեռականներն են՝ անկախ բառ դարձած և առանձին հոլովման ենթակա»⁵²: Այնուհետև գրում է, որ գրաբարի ստացականները միջին հայերենում անփոփոխ մնում են, այսպես՝ *իմ, քո, մեր, ձեր*: Երրորդ դեմքի համար իբրև ստացական է ծառայում անդրադարձ դերանվան սեռականը՝ *իր, իրենց* և քիչ անգամ *իրեն*, որ գրաբարումն էլ *իւրեան* ձևով միայն իբրև անձնական կամ անդրադարձ է գործածվում և ստացականի արժեք չունի⁵³: Աճառյանը հետաքրքիր դիտարկում է

⁵¹ **Հր. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների)*, հ.2, Ե., 1954, էջ 241:

⁵² **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 283:

⁵³ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 289:

անում բարբառային գործածությունների վերաբերյալ՝ գրելով. «Ինչպես միջին հայերենում, նույնպես և արդի բարբառներում գրաբարի ստացականները անփոփոխ պահված են, բայց բարբառներում նրանք այնպես են աճել ու զարգացել, որ բազմաթիվ նորանոր ու տարօրինակ ձևերի էլ են հասել»⁵⁴: Աճառյանը ստացականները ներկայացնելիս նախորդ փուլերը չի հակադրում աշխարհաբարին և որևէ կերպ չի ժխտում դրանց գոյությունը. «Ասացինք արդեն, որ ստացականները՝ ինչպես միջին հայերենում և բարբառներում, նույնպես և աշխարհաբար գրական լեզվի մեջ գրաբարից շատ տարբերություն չունեն: Ահա նրանց թվումը.

Առաջին դեմք	<i>իմ</i>	<i>մեր</i>
Երկրորդ դեմք	<i>քո</i> (արևմտ.՝ <i>քու</i>)	<i>ձեր</i>
Երրորդ դեմք	<i>իր</i>	<i>իրենց</i> ⁵⁵

Այնուհետև անվանի լեզվաբանը հավելում է ստացականների թվային յուրահատուկ դիրքերը, ինչպես նաև երկու գրական լեզուներում դրանց ժողովրդախոսակցական տարբերակները, ապա ավելացնում է. «Ժամանակակից հայերենում ստացականը կարող է լինել թե՛ ածական և թե՛ դերանուն: Ածական է, երբ պատկանում է հաջորդ գոյականին և այն ժամանակ դրվում է միշտ գոյականից առաջ և մնում է անփոփոխ՝ ինչ թվով ու հոլովով էլ լինի գոյականը, իսկ գոյականը ստանում է որոշիչ հոդ»⁵⁶:

Ստացականը, ըստ Աճառյանի, դերանուն է, եթե գործածված է բայի հետ կամ առանձին. այս դեպքում անպատճառ ստանում է որոշիչ հոդ (ը կամ ն): Այսպես՝ *իմը, քոնը, մերը, ձերը*: Այնուհետև հոլովում է միայն եզակիի ձևերը և գրում, որ հոգնակին կազմվում

⁵⁴ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 290:

⁵⁵ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 338:

⁵⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 338-339:

է **-ոնք** մասնիկով: **Մերոնք, ձերոնք** դերանունները հոլովում է միայն արևմտահայերեն՝ *մերոնք, մերոնց, մերոնցմե, մերոնցմով*⁵⁷:

Ինչպես տեսանք, Աճառյանը ընդունում է ստացական դերանունները որպես անկախ բառեր, և սրա մասին, ինչպես արդեն նշել ենք, գրում է նաև Ս. Աբրահամյանը:

Բառերը որպես դերանուն է դիտարկում նաև Հովհ. Բարսեղյանը. «.....Այս դերանուններից **իրենք, մերոնք, ձերոնք, ո՞րը (որո՞նք), (մի) քանիսը, ամենքը, մեկը (մեկն ու մեկը, ամեն մեկը)** առարկայանիշ են դարձել փոխանունաբար: Այդպես, ստանալով որոշիչ հոդ, փոխանունաբար գոյական դերանվան նշանակություն են ձեռք բերում նաև **ամեն, ողջ, ամբողջ, յուրաքանչյուր, բոլոր, նույն, մյուս** ածական դերանունները»⁵⁸: Այնուհետև խոսելով գոյական անունների և գոյական դերանունների հոլովման տարբերությունների մասին՝ գրում է. «Ըստ էության այս ձևերից երեքը՝ **սրա, դրա, նրա**, տրականից տարբերվում են միայն **ն** մասնիկով, ուրեմն առանձին հոլովաձև չեն, իսկ մյուսները (**իմ, քո, մեր, ձեր, իր**) Ս. Աբեղյանի, Հ. Աճառյանի, այլև Գ. Զահուկյանի համար ստացական դերանուններ են»⁵⁹:

Ամփոփելով մեր դիտարկումները ժամանակակից հայերենի ստացական դերանունների վերաբերյալ, որոնց մեջ են մտնում մեզ հետաքրքրող բառերը, կարող ենք ասել հետևյալը. հայ քերականները հիմնականում ընդունում են արդի հայերենի ստացական դերանունների առկայությունը, իսկ ովքեր չեն ընդունում, հիմք են համարում դրանց սերումը անձնական դերանուններից: Սակայն ստացականների այդ յուրահատկությունը՝ սեռականից ծագած լինելու առումով, բնորոշ է ոչ միայն հայերենին, այլև բազմաթիվ այլ

⁵⁷Տե՛ս նշվ. աշխ., էջ 343:

⁵⁸Հովհ. Բարսեղյան, *Հայերենի խոսքի մասերի ուսմունքը*, Ե., 1980, էջ 509-510:

⁵⁹Հովհ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 510-511:

լեզուների, և դրա հիմնավորումը, ինչպես տեսանք, շատ համոզիչ տալիս է Հրաչյա Աճառյանը: Կարծում ենք՝ գրական արևելահայերենում այդ դերանունները պիտի ընունվեն որպես առանձին տեսակ՝ **ստացական դերանուններ** անվանումով՝ դրվելով իրենց տեղում, ինչպես ընդունված է հայերենի նախորդ փուլերի, գրական արևմտահայերենի և բարբառների պարագայում: Կարծում ենք՝ դա օգտակար է նաև օտար լեզուների դերանունները սովորելու առումով, որոնցում դրանք առանձին տեսակ են համարվում (ռուսերեն, անգլերեն և այլն):

3. ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

3.1. ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի լեզվամտածողության, կենցաղավարման ու կենսակերպի դրսևորման բանահյուսական թերևս ամենատարածված և ամենակիրառելի ժանրերից մեկը հանելուկն է: Այն բնորոշվում է որպես «բառերի որոշակի կապակցություն, որի մեջ այլաբանորեն թաքնված է որևէ իմաստ, որը ենթակա է վերհանման կամ գուշակման»¹: Հանելուկները, հին ժամանակներից ի վեր, «կենցաղավարել են իբրև մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարգոլ մի մտախաղ՝ որոշակի սահմանազատվելով զգայական հաճույք պատճառող կամ բարոյակրթական նպատակներ հետապնդող բանահյուսական մյուս ժանրերից»²:

Ծառայելով մարդկային միտքն ու բանականությունը ստուգելու նպատակին՝ հանելուկներին բնորոշ են լեզվաոճական մի շարք առանձնահատկություններ, որոնցով էլ դրանք զգալիորեն տարբերվում են բանահյուսական և գրական այլ ժանրերից:

Ներկայացնենք հանելուկների այդ առանձնահատկություններն ըստ լեզվական առանձին մակարդակների:

1. Հնչյունական առանձնահատկություններ: Հնչյունների ոճական արժեքը դրսևորվում է ամենից առաջ երկու ձևով՝ *բաղաձայնությո՞ւն* և *առձայնությո՞ւն*: Բաղաձայնության առհասարակ խորթ չէ ժողովրդական բանահյուսյանը³: Եվ ահա բազմաթիվ հանելուկնե-

¹ Մ. Հարությունյան, *Բանագիտական ակնարկներ*, Ե., 2010, էջ 250:

² Տե՛ս Մ. Հարությունյան, *Հայ ժողովրդական հանելուկներ* (համահավաք բնագիր, այսուհետև՝ ՀԺՀ), Ե., 1965, էջ Ը: Այսուհետև գրքի էջերը կնշվեն տեքստում՝ օրինակներին կից:

³ Տե՛ս Լ. Եզեկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Ե., 2003, էջ 113:

րում առկա է բաղաձայնների կուտակում: Օրինակ՝ *Տիզը տզիցը* կպավ, *Տիզը* պատիցը կպավ, Գնացեք *տզան* մորն ասեք գա, *Տիզը տիզը* պատիցը պոկի «բանալի» (ՀԺՀ, էջ 170):

Բացի նրանից, որ նշված հանելուկի մեջ պարբերաբար կրր-կնվում է *տիզ* բառը՝ զանազան ձևափոխություններով, նաև առկա է *պ* բաղաձայնի կրկնություն:

Հանք, հանք, հրամանք, Օխտը դռան դեմ առանք (ՀԺՀ, էջ 195, Մեծ պաս) հանելուկում առկա է **հ**-երի կուտակում: Կամ՝ **Սուրը տուն, Դավիթը քուն, Էրկաթե սուն** (ՀԺՀ, էջ 190, հրացան և փամփուշտ) հանելուկում առկա է **թ**-երի կրկնություն, ինչպես նաև հանգերի պահպանում: Նույն երևույթի դրսևորումներ են հետևյալ հանելուկները ևս՝

Թուր ու թվանք թամքումը, Զուխտ աղունակ վանքումը

(հարս և փեսա, ՀԺՀ, էջ 87):

Սարի գլխին էրկու դոչ, Մինը փնջած, մինը ոչ,

Մեռնիմ Աստծու ղիվանին (դատաստան),

Մնին կտա, մնին ոչ (հարս և փեսա, ՀԺՀ, էջ 88):

Ժողովրդական հանելուկներում լայն գործածություն է ստացել նաև առձայնությոը, ինչպես՝

1. Անծին ծնավ, Անմահ մեռավ, Անեղնել եղավ (ՀԺՀ, էջ 193, Քրիստոս):

2. Էն ի նչն ա, ի նչ. Էստեղ պուպուզ, Էնտեղ պուպուզ,

Դոնովը դուս (ՀԺՀ, էջ 203, աղբ):

3. Անծակ մարգրիտ, Անուր դերձան, Աստուծ կու շարէ,

Մարդը կու քաշէ (էջ 97, ատամներ):

Ինչպես և նկատելի է բերված օրինակներից, հանգավորումը գրեթե միշտ հանդես է գալիս առձայնության կամ բաղաձայնության

հետ միաժամանակ: Եվ երբեմն դժվար է լինում գտնել այն սահմանը, որով կարելի է տարբերակել այս երևույթները:

1. Կուգա աղի պես, Նստի փաշի պես,

Կերթա բոշի պես (ձյուն, ՀԺՀ, էջ 17):

2. Դանակ զարկի դուռը բացի,

Սև-սև ուլեր դուս լըցի (ձմերուկ, ՀԺՀ, էջ 42):

3. Սև՝ քյանձ սաթ, Միվտակ՝ քյանձ կաթ,

Կլորված նուկի (կշռաքար),

Կերթա՝ քյանձ նետի (ՀԺՀ, լոռ, էջ 77):

4. Պապեն նստե տունը,

Ոտեր խանե տունը (ծխամորձ, ՀԺՀ, էջ 115):

5. Հնդստան, Արաբստան, Երկու կաքավ էկան նստան,

Չագեր թռան, մերեր նստան (կողպեք-բանալի, ՀԺՀ, էջ 170):

6. Տիգը վզից ա կապած,

Վիգը տզից ա կապած.

Մինչև տերը տուն չգա,

Տիգը տզից պոկ չի գա (բանալի, ՀԺՀ, էջ 170):

7. Մեկ լցնեմ՝ խնդաս, Մեկ լցնեմ՝ դնտաս,

Մեկ էլ լցնեմ՝ աշխար մոռնաս (գինի-գավաթ, ՀԺՀ, էջ 114):

8. Օջլի բուն, լվի քաղաք, Շոքուն թևաշալակ,

Անձրևուն խաղկ ու խայտառակ (ՀԺՀ, քուրք, էջ 117):

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, հանգավորումը դրսևորվել է թե՛ ամբողջական բառերի կրկնությամբ, թե՛ բառամասերի մասնակի կրկնությամբ (**պես-պես, քյանձ-քյանձ, մեկ-մեկ** և այլն), թե՛ բառամասերի մասնակի կրկնությամբ՝ **մեկ-երկու** հնչյունի տարբերությամբ (**աք-ակ-ակ, դաս-տաս-նաս**), թե՛ այլ տարբերակներով:

Բառապաշարային առանձնահատկություններ: Ժողովրդական հանելուկներում առանձին քննության առարկա է բառապաշարը, որը, բնականաբար, լի է բարբառային տարրերով: Հանելուկներում, անշուշտ, առկա են համագործածական կամ միջոճական բառեր (**ջուր, կարմիր, ցորեն, գլուխ, ոտք** (ՀԺՀ, էջ 174)), **կով, եղբայր, քար, թագ** և այլն (ՀԺՀ, էջ 175)), որոնք, հանդես գալով ուղղակի կամ փոխաբերական իմաստներով, երբեմն շատ գեղեցիկ նրբերանգներ են հաղորդում խոսքին և ստանում ոճական յուրահատուկ կիրառություն:

Հանդիպում են նաև կրկնավոր բարդություններ, ինչպես՝ Սևսև ուլնիկ, (ուլեր), **Պառկի կողիկ** (հոնքեր և ճակատ, ՀԺՀ, էջ 93), **Շարան-շարան, Ուղտի քարվան** (շուշուխ, ՀԺՀ, էջ 113): Այդ բառերը շատ են, և, բնականաբար, կարիք չկա բոլորը թվարկելու: Սակայն, իհարկե, հանելուկներում գերակշռում են բարբառային և ժողովրդախոսակցական բառաշերտերը ներկայացնող միավորները: Դա ամենից առաջ պայմանավորված է հանելուկների՝ գլխավորապես առօրյա-խոսակցական ոճում գործածական լինելու փաստով: Հետաքրքիր է, որ հանելուկները, ստեղծվելով բարբառային տարբեր միջավայրերում, գլխավորապես հյուսված են ժողովրդախոսակցական բառապաշարի հիմքով: Ընդունելով բարբառային բառերի գործածության բաժանումն ըստ **գավառաբանությունների** և **հասարակաբանությունների**,՝ պետք է ասել, որ վերջինները գերակշռում են ժողովրդական հանելուկներում: Թերևս դա է պատճառը, որ հանելուկների լեզուն հասկանալի է տարբեր բարբառներով խոսող մարդկանց համար: Պետք է նշել, որ համահավաք բնագրում ներկայացված այս կամ այն հանելուկը գրառվել է տարբեր տարածքներում, և առկա են միևնույն բովանդակությամբ հանելուկի տարբերակներ: Դրանք երբեմն կարող են տարբերվել մեկերկու բառով: Օրինակ՝

1. Ծովակ մը կա, Մեջ ծովակին օձիկ մը կա,

Օձիկին բերան ծաղիկ մը կա (Սասուն):

2. Մե ծով մը կա, Ծովու մեջ օձ մը կա,

Օձու բերան խնձոր մը կա (Վան, ՀԺՀ, էջ 153):

Հանելուկների պատասխանն է՝ ճրագ:

Երկու տարբեր տարածքներում գրառված հանելուկներից մեկում ճրագը նույնացվել է ծաղկի, մյուսում՝ խնձորի հետ: Նույն բառերն այս դեպքում հանդես են գալիս հնչյունական տարբեր դրսևորումներով: Եվ նմանատիպ հանելուկներում լեզվական տարբերությունները հիմնականում քերականական իմաստների արտահայտությամբ են պայմանավորված: Այդուհանդերձ, հանելուկներում կարելի է հանդիպել նաև բառերի, որոնք ընդհանուր չեն, այլ սահմանափակվում են տեղային գործածություններով, և որոնց իմաստները մեկնաբանվում են բանահավաք հեղինակի կողմից: Ուստի այդ կարգի բառերն առանձնացրել ենք իբրև գավառաբանություններ: Գավառաբանություններ կարող են դիտվել, օրինակ, **տալղա տալ** (ալեկոծվել), Լոռի⁴ (ՀԺՀ, էջ 84), **օրդուն** (բանակ, 84, Լոռի), **երկեն** (երկար, Ալաշկերտ, էջ 78), **ճնճղներ** (խոտրջուր, էջ 78), **վեխճար** (ոչխար, Ղարաբաղ, էջ 76), **երտիս** (երդիկ, Սասուն, 74), **խող** (Դարալագյազ, Լոռի, էջ 67), **ըստիան** (այստեղից, Դարալագյազ, Լոռի, էջ 67), **յազի** (լանջ, սարահարթ, Արաբկիր, էջ 66), **կայնել է օլլրել է** (Շիրակ, էջ 61) և այլն: Դրանց մեջ կան նաև բազմաթիվ հարադրություններ և կրկնավոր բարդություններ:

Օրինակ՝

Վիզը քյառթ-քյառթ (ծալքավոր),

Խոտ կուտի՝ ճուր չի խմի (շերամ, Սալմաստ, Մուշ, էջ 83),

⁴ Բառերը ներկայացնելիս առաջնորդվել ենք համահավաք բնագրի սկզբունքով և նշել այն տարածքների անվանումները, որոնցում դրանք գրառվել են:

Ալալու-փալալու (վայրիվերո, խառնակիչ արարմունք),
Ցաղգղյան Մարգոս (լու, Նոր Նախիջևան, էջ 82),
Չայիր-չիմեն (մարգ-մարգագետին)
Վրան պյուպյու (սոխակ) **կը պտտի**
(գլուխ և միջատ, էջ 82):

Հանելուկներում կան նաև բառեր, որոնք, կարծում ենք, դիպ-վածային են և գործածված են ոճական նկատառումներից ելնելով, ինչպես՝ **անաճիկ** բառը հետևյալ օրինակում. **Անաճիկ** (չաճող, չմե-ծացող),

Լեզուն տաճիկ (տգրուկ, ՀԺՀ, էջ 84):

Հանելուկներում նկատելի են գոեհկաբանությունների որոշ տարրեր, որոնք շատ փոքր տոկոս են կազմում և նշված չեն ամբող-ջական բառերով: Հետաքրքրական է բառերի ձևախմաստային խմբերի կիրառությունը՝ հատկապես հականիշների գործածու-թյան առումով: Օրինակ՝

1.Չոր բացում եմ, Թաց փակում (անձրևանոց, ՀԺՀ, էջ 203):

2.Ուղտը մոտիկ կարածի,

Բայց հեռու կը նայի (միտք-երևակայություն, ՀԺՀ, էջ 105):

3.Ինքը սև, Երեսը ճերմակ (սուրճ, ՀԺՀ, էջ 114):

Հականիշները, որոնք մեծ մասամբ ածականներով են արտա-հայտվում, յուրահատուկ նրբերանգներ են հաղորդում խոսքին՝ ստեղծելով գուշակվելիք առարկայի հեռավոր պատկերը:

Քերականական առանձնահատկություններ: Անդրադառնա-լով ձևաբանական առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ ոճական յուրահատուկ կիրառություն են ստացել քանակական թվականները՝ բարբառային զանազան դրսևորումներով: Օրինակ՝ **մեկ** (մե, էջ 61, **մին**, էջ 60), **երկու** (**երգու**, էջ 56), **չորս** (էջ 54, 56), **տասը** (**տաս**, էջ 56), **քյառսուն** (էջ 52), **խագար** (էջ 52), **խիյնգ խարիր** (էջ 82) և այլն: Դրանք երբեմն հակադիր պատկերներ են ստեղծում,

երբեմն չափազանցություն են արտահայտում, երբեմն էլ՝ առարկաների իրական քանակություն, որոնք վերաբերում են հանելուկի պատասխան առարկաներին:

Դիմավոր բայերից մեծ կիրառություն ունեն սահմանական ներկան, անցյալ կատարյալը, ըղձական ապառնին (դրական և ժխտական խոնարհումներով): Օրինակներ՝

1.Սահմանական ներկա: Սաղ օրը **կը քալե**, Գիշերը բերանը բաց **կը մնա** (կոշիկ, ՀԺՀ, էջ 120): Ես ալ **ունիմ**, Դուն ալ **ունիս**, Ձեր չոր ծառն ալ **ունի** (ստվեր, ՀԺՀ, էջ 24): Գետնի տակը **կապրի**, Ծաղիկներով **կը շարվի** (կարտոֆիլ, ՀԺՀ, էջ 45: Քշերքումն չի քաշվիլ, Բազարումն չի ծախվիլ, Նրա պես քաղցր բան չկա (քուն, ՀԺՀ, էջ 105):

2.Անցյալ կատարյալ: Թուրն **վար ինկավ**, Չթկուն (ձայն) **չելավ** (արև, ՀԺՀ, էջ 5): Լուսամուտից գողը **մտավ** ներս՝ Տերը **բռնվավ** (արև, ՀԺՀ, էջ 5):

3. Ըղձական ապառնի: Ես **քնիմ**՝ դու **քնիս**, Ես **խածիմ**՝ դու **թոնիս** (լու, ՀԺՀ, էջ 82): **Լցնեմ տամ** բուռը, **Քշես** ծակ դուռը, **Բացվի** քեֆը, **Կորչի** խելքը (օղի, ՀԺՀ, էջ 11): **Լըցնեմ տամ** ձեռը, **տաքնա** փորը, **Թախտըփի** գլուխը (օղի, ՀԺՀ, էջ 113):

Ի դեպ, շատ գործածական են հարադիր բայերը՝ եղանակաժամանակային տարբեր դրսևորումներով: Օրինակ՝ **Ման եմ գալիս**՝ հավ չեմ, **Լույս եմ տալիս**՝ ճրագ չեմ (լուսատուիկ, ՀԺՀ, էջ 83):

Ինչպես և նկատելի է, նշված օրինակներում միաժամանակ առկա են հնչյունի ոճական գրեթե բոլոր նրբերանգները՝ թե՛ նմանաձայնություն, թե՛ առձայնությո՝ ը-երի կրկնությամբ, թե՛ բաղաձայնությո:

Շարահյուսական առանձնահատկություններից ակնհայտ է միակազմ միակազմ նախադասությունների գործածությունը: Դրանք գլխավորապես անվանական անդեմ նախադասություններ

են: Օրինակներ՝ **Օսկե սուն, Էրդիքից կախված** (արև, ՀԺՀ, էջ 5), **Մկորտապոչ քյուլքյուլ խաթուն** (տեսքով տիկին) (ականջմտուկ, ՀԺՀ, էջ 83), **Երկու տուն՝ Մեկ սյուն** (քիթ, ՀԺՀ, էջ 93), **Մսե շամփուր, Էրկաթե խորոված** (մատ-մատանի, ՀԺՀ, էջ 122), **Սև ոչխար՝ սիպտակ սար** (թուղթ և գիր, ՀԺՀ, էջ 178), **Դաստեմ ժախ** (բանջար), **Պատեն կախ** (մորուք, ՀԺՀ, էջ 99), **Ռաֆատեն** (բաղաթ) **Կախված պատեն** (մորուք, ՀԺՀ, էջ 99):

Հաճախ բարդ նախադասության առաջին բաղադրիչը միակզմ է, երկրորդը՝ երկկզմ: Օրինակ՝ **Մե չոբան**, Օխչըրներ գիշերն է արածցնում (լուսին և աստղեր, ՀԺՀ, էջ 10):

Պարզ նախադասություններ՝ **Անշունչը շնչավորին բռնումա** (թակարդ, ՀԺՀ, էջ 10):

Բազմաբաղադրիչ նախադասություններ՝ **Գիտեմ, որ կա, Բայց չգիտեմ երբ կը գա** (մահ, ՀԺՀ, էջ 107):

Երկկզմ նախադասություններում ստորոգյալը հիմնականում պարզ է, սակայն քիչ չեն նաև բաղադրյալ ստորոգյալները: Օրինակ՝ Ինքը փատ է Ուտքը մազ է (վրձին, ՀԺՀ, էջ 181): Ուշագրավ է խառը տիպի հնչերանգային նախադասությունների գործածությունը: Դրանցում առաջին նախադասությունը հարցական բնույթի է, երկրորդը՝ պատմողական, ինչպես՝ **Էն ի՞նչն ա, ի՞նչը. Բռնեմ՝ բռնովը մին, Բաց թողամ՝ աշխարքովը մին** (փետուր, ՀԺՀ, էջ 77): **Էն Ի՞նչն ա, ինչ. Տանս ապրող մարդ չկա, Իսկ դոնադ էկողը տարով նստում ա** (գրապահարան, ՀԺՀ, էջ 181):

Պատկերավորման միջոցները թելադրում է հենց հանելուկը, որը, լինելով գուշակման ենթակա խոսք, կառուցվում է փոխաբերությունների և համեմատությունների հիմքերով՝ ստեղծելով համապատասխան իրի կամ երևույթի պատկերը: Դա պայմանավորված է հետևյալով. հանելուկները «վիպական մյուս ժանրերից տարբերվում են նրանով, որ իրենց արտաքին պյուժեներից և պատ-

կերներից գատ ունեն նաև դրանցից զգալիորեն տարբեր իմաստ և բովանդակություն» (ՀԺՀ, էջ 7): Այս առումով հանելուկները շատ հետաքրքրական առանձնահատկություններ են դրսևորում: Այսպես՝ բառը բնագրում սովորաբար գործածվում է ուղիղ իմաստով, և միայն պատասխանը գուշակելուց հետո այն վերածվում է փոխաբերական գործածության: Ակնհայտ դրսևորում ունեն թե՛ անձնավորումը, թե՛ չափազանցությունն ու նվազաբանությունը: Օրինակներ՝ 1. **Բյուլլուր (շուրջը) ծմակ (անտառ)**, **Էծերը մեջը լիկը** (գլուխ, մազեր, ՀԺՀ, էջ 89): 2. **Մեզի մե ջուխտ գոմեջ ունինք**, **Արար աշխարհին վարում է**, **Մեր տան հետևն չի վարում** (աչքեր, ՀԺՀ, էջ 90): 3. **Աղբյուր իմ, չորս դիս կամարները մազ է**, **Ալ (հենց որ) տուրտում** (տխուր, տրտում) **եկա**, **ջուրըս կը վազե** (աչք և արտասուք, ՀԺՀ, էջ 93):

Նվազաբանության օրինակ՝ **Մի հավանոց ունեմ, Մեջը երկու թուխս կա՝ իրանց ճուտերովը** (երկինք, արեգակ, լուսին և աստղեր, ՀԺՀ, էջ 10):

Լեզվի արտահայտչամիջոցներից կամ բանադարձումներից գործածական են հատկապես կրկնությունը, աստիճանավորումը, հակադրությունը: Շատ գործուն է հակադրությունը, որն արտահայտվում է լեզվական տարաբնույթ միջոցներով: Ինչպես՝ **Քույր ու եղբայր են**. **Մինն առավոտն է ծնում, երեկոյան մեռնում**, **Սյուսը՝ երեկոյան ծնում, առավոտը մեռնում** (արև և լուսին, ՀԺՀ, էջ 7): **Ծնունդս երկինք, Թաղումս գետին** (անձրև, ՀԺՀ, էջ 13): **Տանեմ դուսը՝ ծըծղա**, **Բերեմ ներսը՝ լա** (սառույց, ՀԺՀ, էջ 20): **Աչքեր ունի, ոտքեր չունի**, **Ձու է ածում՝ փետուր չունի** (օձ, ՀԺՀ, էջ 64): **Աշխարք է՝ տուն չկա**, **Ծով է՝ ջուր չկա** (քարտեզ, ՀԺՀ, էջ 181): **Ոսկորե չափար (ցանկապատ)**, **Մսե պահակ (լեզու և ատամներ, ՀԺՀ, էջ 98)**:

Աստիճանավորումը հիմնականում դրսևորվում է մարմնի մասերին վերաբերող հանելուկներում: Ի դեպ, այն արտահայտված

Է ն՝ բուն բնագրում, ն՝ հանելուկի պատասխան հատվածում:

Օրինակ՝

Մեկ սուն,

Կելնի վերն՝ մեկ տուն, մեջը լիքը ուրազ,

Կելնի վերն՝ մեկ սուն, երկու տուն,

Կելնի վերն՝ երկու լուսնակ,

Ընտից վերն՝ բաղ ու բոստան,

Խոզեր մեջը կարածան (վիզ, քիթ, աչքեր, գլուխ,
միջատ, ՀԺՀ, էջ 101):

Իբրև ամփոփում՝ նշենք, որ ժողովրդական հանելուկները հետաքրքրական են ոչ միայն իրենց գործածությամբ, այլև լեզվա-
ոճական առանձնահատկություններով, որոնք արտահայտում են
ժողովրդի լեզվամտածողության տարբեր կողմերը: Ի վերջո, հանե-
լուկներին ամենից բնորոշ առանձնահատկություններից է նաև
նուրբ հումորը, որը դրսևորվում է դիպուկ համեմատություններով:
Այս առումով հանելուկը հարուստ է կատակաբան ոճի զանազան
դրսևորումներով:

3.2. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՄ

Գեղարվեստական ոճի յուրաքանչյուր դրսևորում ամենից առաջ առանձնանում է պատկերավորման և արտահայտչական միջոցների լայն գործածությամբ: Ժողովրդական բանահյուսությունն այդ առումով բացառություն չէ և ունի արտահայտչամիջոցների հարուստ համակարգ:

Հանելուկը ժողովրդական ստեղծագործության տեսակներից մեկն է, որը «առարկան, երևույթը պատկերում է այլաբանորեն, նրա հատկանիշները նկարագրում գաղտնագրված ձևով»⁵: Ինչպես նշում են Էդ. Ջրբաշյանը և Հ. Մախչանյանը, հանելուկների գեղարվեստական առանձնահատկություններից են պատկերման այլաբանական ձևը, սուր դիտողականությունը, պատկերավոր արտահայտիչ մտածողությունը⁶:

Հանելուկ բառն ունի հետևյալ կազմությունը՝ *հանել* բայ + *-ուկ* ածանց, և նշանակում է՝ «մի բան՝ ի ներքուստ վեր հանելիք, այսինքն՝ ներքին իմաստի բացահայտում»⁷: Եզրույթն «առաջին անգամ հանդիպում է Անանիա Շիրակացու մոտ, որին վերագրվում է 19 հանելուկ՝ «Հանելուկ դիմակք» վերնագրով»⁸:

Ինչպես նշում է Ս. Հարությունյանը, «հանելուկները վաղ անցյալում ունեցել են գործնական տարբեր կիրառություններ և հնուց անտի կենցաղավարել են իբրև մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ»⁹: Նույն աղբյու-

⁵ Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Ե., 1980, էջ 177:

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 178:

⁷ Ս. Հարությունյան, *Բանագիտական ակնարկներ*, Ե., 2010, էջ 250:

⁸ Ս. Հարությունյան, *Հայ ժողովրդական հանելուկներ* (ուսումնասիրություն), Ե., 1960, էջ 7:

⁹ Ս. Հարությունյան, *Բանագիտական ակնարկներ*, էջ 253:

րից տեղեկանում ենք, որ տարբեր ժողովուրդների կյանքում հանելուկները հնում կիրառվել են տարբեր կերպ և տարբեր նպատակներով՝ թե՛ հարցահանելուկների ձևով (հարցուպատասխան), թե՛ կրոնական-ծիսական արարողություններում (երբեմն հանելուկների միջոցով լուրջ փորձությունների են ենթարկվել մարդիկ), թե՛ իբրև մտախաղ երկու մասնակիցների միջև, և այլն:

Անշուշտ, քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ՝ հանելուկները ժամանակի ընթացքում կորցրել են իրենց հասարակական գործառնություններից շատերը և վերածվել ժողովրդական գվարձալի ժամանցի միջոցների: Մեր օրերում հանելուկները դարձել են մանկական բանաստեղծության ամենասիրված և տարածված տեսակներից մեկը:

Գաղտնիք չէ, որ պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է, որը բնորոշ է գործառական տարբեր ոճերի՝ այս կամ այն չափով: Պատկերավորությունը բնորոշ է հատկապես գեղարվեստական ոճին, նրա զանազան դրսևորումներին, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվին, որն էլ յուրահատուկ դրսևորում է ստացել հայկական ժողովրդական հանելուկներում:

Հանելուկը, լինելով գուշակման ենթակա խոսք, կառուցվում է փոխաբերություններով, համեմատություններով՝ ստեղծելով համապատասխան իրի կամ երևույթի պատկերը: Չէ՞ որ հանելուկային առարկայի այլաբանական պատկերը սովորաբար ձևավորվում է հանելուկային առարկայից սեռով ու տեսակով բոլորովին տարբեր այլ առարկաների կամ երևույթների հատկանիշների հիման վրա՝ հատկանիշների, որոնք մերձավոր կամ հեռավոր որևէ նմանություն ունեն. հանելուկների մեծ մասը հորինված է ոչ թե հանելուկային առարկայի ձևական, այլ երկրորդական, երրորդա-

կան հատկանիշների նմանության վրա, որոնցով խիստ դժվարանում է հանելուկների գուշակումը¹⁰:

Այս առումով շատ հետաքրքրական առանձնահատկություններ են դրսևորում հայ ժողովրդական հանելուկները, որոնց լավագույն գիտակը, անշուշտ, Սարգիս Հարությունյանն է. նա ոչ միայն բարեխղճորեն հավաքել և կազմել է ժողովրդական հանելուկների համահավաք բնագիրը, այլև զբաղվել է դրանց ուսումնասիրությամբ: Պատահական չէ, որ Վիլյամ Սարոյանը նրան անվանել է «Հանելուկ Սարգիս»¹¹:

Ժողովրդական հանելուկներում գործածված պատկերավորման միջոցներին Ս. Հարությունյանն անդրադարձել է իր ուսումնասիրության «Հանելուկների արվեստը» գլխում, մասնավորապես՝ համեմատություններին, անձնավորմանը, խորհրդանիշին, չափազանցությանը: Բանագետ բացահայտել է այն պատճառահետևանքային կապերն ու հարաբերությունները, որոնք հիմք են դարձել այդ միջոցների կիրառման համար: Մեր նպատակը, սակայն, հանելուկների գուշակական կոդի քննությունն է, որի արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Այսպես՝ հանելուկներում բառը սովորաբար գործածվում է ուղիղ իմաստով, և միայն պատասխանը գուշակելուց հետո այն վերածվում է փոխաբերական գործածության:

Փոխաբերության տեսակներից ակնհայտ դրսևորում ունեն թե՛ անձնավորումը, թե՛ չափազանցությունը և թե՛ նվազաբանությունը: Երկխոսությամբ արտահայտված հետևյալ հանելուկում, օրինակ, անձնավորված է արևը՝

Էն ի նչն ա, ի նչք.

¹⁰ Տե՛ս Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 252:

¹¹ Տե՛ս Վ. Դավթյան, *Բարի հսկան (Հանդիպումներ Վիլյամ Սարոյանի հետ)*, Ե., 1979, էջ 112:

-Ալամա (աշխարհից) գեղան (գնացող), որդիա՞ն ես գալի:
-Ծովիցն եմ գալի:
-Բա խի՞ չես թաց:

-Կիսիցն եմ գալի (արև, էջ 5)¹²:

Այլ տարբերակում անձնավորված է լուսինը՝
Էն ի շ՞ (ինչ) տղա ելավ մորուց՝ դրեցին թագյավոր,
Տասը խինգ տարի թագյավորութեն արեց,
Տասնվեց տարուց խիվնդցավ,

Եռսուն տարին թմեց (լրացավ)՝ մեռավ (լուսին, էջ 5):

Անձնավորված ներկայացված են ոչ միայն բնության երևույթներն ու լուսատուները, այլև սովորական կենցաղային առարկաները, պտուղներն ու բանջարեղենը, բնության երևույթները, ինչպես՝

Անշունչը շնչավորին բռնում ա (թակարդ, էջ 203):

Էն ի նչն ա, ի նչը.

Գեղնի տակից դուս ա գալի,

Շորերով մտնըմ ա տաք-տաք բաղնիս,

Որ դուս ա գալիս բաղնրսից՝

Տկլորվըմ ա (կարտոֆիլ, էջ 45):

Աղբյուր իմ, չորս դիս կամարները մազ է,

Ալ (հենց որ) տուրտում (տխուր, տրտում) եկա, ջուրըս կը վազե (աչք և արտասուք, էջ 93):

Պապիկ էկավ վազնեվազ,

Խոնջան (գոտի) իթալ (զցել) քյառսուն գյազ (ծիածան, էջ 15):

Երկան տերտեր, Կարդալեն կերթա (ջուր, գետ, էջ 19):

¹² Մ. Հարությունյան, *Հայ ժողովրդական հանելուկներ* (համահավաք բնագիր), Ե., 1965, էջ 15 (այսուհետև էջը կնշվի բնագրին կից): Հանելուկները գրաված են տարբեր տարածքներում և տարբեր բարբառներով, որոնք նշված են համահավաք բնագրում, և մենք նպատակահարմար չենք համարել նշել դրանց գրառման վայրերը:

Մե տախ (տաբեց) ախշիկ կա, Խով չունի (ջուր, գետ, էջ 19):

Հանելուկներում վառ կերպով դրսևորվել են նաև չափազանցությունը և նվազաբանությունը:

Օրինակ՝ Բյուլլուր (ջուրջը) ծմակ (անտառ),

էծերը մեչը լիկը (գլուխ, մազեր, էջ 83):

Նախ գլուխը չափազանցությամբ ներկայացված է որպես անտառ, ապա՝ ոջիլը՝ այծ: Հաջորդ օրինակում չափազանցությամբ աչքերը ներկայացված են որպես գոմեշներ՝

Մեզի մի ջուխտ գոմեշ ունինք,

Արար աշխարհին վարում է,

Մեր տան հետեն չի վարում (աչքեր, էջ 90):

Ներկայացնենք նվազաբանության օրինակներ՝

Մի հավանոց ունեմ, Մեջը էրկու թուխս կա՝ իրանց ճուտերովը (երկինք, արեգակ, լուսին և աստղեր, էջ 10): *Կապուտ քաֆիկ* (սփռոց), *Զմեն նիշունիկ* (երկինք, էջ 3): *Մեկ բակ օխչար ունիմ, Քնա էլա՝ մեկ հատ չկեր* (երկինք և աստղեր, էջ 8):

Երբեմն հանելուկներում չափազանցությունն այնքան մեծ է լինում, որ այն կարելի է պարզապես սուտ համարել: Օրինակ՝ *Էն ի նչն ա, ի նչ. Անգերան շինած ա, Անսին կաղնած ա* (երկինք, էջ 3): *Եզ ծնավ՝ բերեց կով* (Ադամ-Եվա, էջ 197):

Որոշակի թիվ են կազմում նաև համեմատությունները:

Օրինակ՝ *Սարեն կուգա սարի պես,*

Թները բուղաղի պես, Կզում է (կռանալ) թե ջուր խմե,

Բդավում է երեխի պես (ամպ և որոտ, էջ 10):

Միպտակ ա կաթի նման,

Սև ա, սաթի նման,

Բլիկ ա, իլկի նման,

Պուլիկ (կավե փոքր աման)՝ պուլկի նման (կաշաղակ, էջ 76):

Անշուշտ, թաքնված համեմատություն առկա է գրեթե բոլոր հանելուկներում, որոնցում կա փոխաբերություն: Չէ՛ որ «փոխաբերությունը այլաբերության տարատեսակ է, խոսքի պատկերավորման, ոճավորման այնպիսի միջոց, որի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը»¹³: Մինչդեռ բուն համեմատությունները հանելուկներում քիչ են:

Հազվադեպ են նաև մակդիրի գործածությունները, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, պատասխանը գուշակելուց հետո է միայն բառը փոխաբերական գործածություն ստանում: Այնուամենայնիվ, կարելի է նշել մի քանի օինակ, ինչպես՝

Մի **հրեղեն** ձի ունեմ, Ամեն տեղից կը թռչի.

Մի պճիր (փոքր) կլուխը կհանի,

Համա (բայց) չի կարա տուրս գա (լեզու և ատամներ, էջ 98):

Ոսկորե չափար (ցանկապատ),

Մսե պահակ (լեզու և ատամներ, էջ 98):

Փետե օրոցք, **փետե** տղա,

Քանի օրեմ՝ վրդվրդա (քամանչա, էջ 183):

Լեզվի արտահայտչամիջոցներից կամ բանադարձումներից գործածական են կրկնությունը, աստիճանավորումը, հակադրությունը: Խիստ գործուն է հատկապես հակադրությունը, որն արտահայտվում է լեզվական տարաբնույթ միջոցներով: Օրինակներ՝

Քույր ու եղբայր են.

Մինն առավոտն է ծնում, երեկոյան մեռնում,

Մյուսը՝ երեկոյան ծնում, առավոտյան մեռնում (արև և լուսին, էջ 7):

Ծնունդս երկինք,

Թաղումս գետին (անձրև, 13):

Կը կապիմ՝ կը քալե,

¹³Լ. Եզեկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Ե., 2003, էջ 345:

Կը արձկիմ՝ քուն կըլա (տրեխ, էջ 120):

Մամաս սավան ունի՝ ծալել չի կրնա,

Պապաս ստակ (ղրամ) ունի՝ համրել չի կրնա (երկինք և աստղեր, էջ 8):

Տանեմ դուսը՝ ծրծղա,

Բերեմ ներսը՝ լա (սառույց, էջ 20):

Աչքեր ունի, ոտքեր չունի,

Ձու է ածում՝ փետուր չունի (օձ, էջ 64):

Աշխարք է՝ տուն չկա,

Ծով է՝ ջուր չկա (քարտեզ, էջ 181):

Ոսկորե չափար (ցանկապատ),

Մսե պահակ (լեզու և ատամներ, էջ 98):

Ներկայացված օրինակներում **հակադրությունն** արտահայտված է ինչպես հականիշային գույգերով (գոյականական՝ *քույր-եղբայր, երկինք - գետին, ծնունդ-թաղում*, բայական՝ *կը կապիմ- կը արձկիմ, ծնում-մեռնում, տանեմ- բերեմ*, դերանվանական՝ *մինը- մյուսը*), ոչ հականիշային, սակայն հակադիր իմաստներ արտահայտող գույգերով (*մսե չափար-ոսկորե պահակ*), այնպես էլ հակադրական հարաբերություն արտահայտող համադաս նախադասություններով (*Ծով է՝ ջուր չկա, Ձու է ածում՝ փետուր չունի*):

Կրկնությունը հաճախ հանդես է գալիս հակադրության հետ միաժամանակ, ինչպես՝

Ըստի պուպուզ, ընդի պուպուզ,

Մըն էլ տեհար,

Կըտրովը դուս (արեգակ, էջ 5):

Բերան ունի՝ լեզու չունի,

Կաշի ունի՝ մազ չունի (տիզ, էջ 83):

Կրակն ընկնի՝ էրվիլ չի,

Ջուրն ընկնի՝ խեղդվիլ չի (դոդ, էջ 202):

Շատ գործածական է նաև այլաբանությունը, ինչպես՝

Սարի վրա ածը (այծը) կը մըկըկա (քահանա և բեմ, էջ 88):

Պոլատ (պոչատ) գըղել (գղալ), Գեղի դընտեր (տանուտեր)
(գզիկ, էջ 88):

Մին ծառ եմ ջղում (պատվաստել),

Բարը (պտուղը) օրիշը օտում (աղջիկ, էջ 87):

Էն ի նչ պտուղ է,

Քանի խակ է՝ քաղցր է,

Բիոր (երբ որ) հասնում է՝ դառը (որդի, էջ 87):

Աստիճանավորումը հիմնականում վերաբերում է այն առարկաներին ու երևույթներին, որոնք իրենց բաղադրիչներով են դրսևորվում, ինչպես օրինակ, մարմնի մասերը: Ի դեպ, այն արտահայտվում է և՛ բուն բնագրում, և՛ պատասխանական մասում: Օրինակներ՝

Մեկ տուն,

Կելնի վերն՝ մեկ տուն, մեջը լիքը ուրազ,

Կելնի վերն՝ մեկ տուն, էրկու տուն,

Կելնի վերն՝ էրկու լուսնակ,

Ընտից վերն՝ բաղ ու բոստան,

Խոզեր մեջը կարածան (վիզ, քիթ, աչքեր, գլուխ, միջատ, էջ 101):

Երկու իլիկ՝ վրան տիկ,

Տիկին վրա խաչ,

Խաչին վրա գունտ,

Գնտին վրա՝ մերի (անտառ),

Մերին մեջը հարեմի (ափազակ) (ոտներ, փոր, իրան և թևեր, գլուխ, մազեր, միջատ, էջ 101):

Մի քաղաք ունեմ՝ տասերկու բազար ունի.

Ամեն բազարին՝ եռեսուն մարթ,

Ամեն մարթին՝ քսանչորս թեխա (տարի, էջ 16):

Մե տունըմ կա՝ տուն ի,

Տան մեջ խսիր ի,

Խսրի տկից նալչեն (փոքր պայտ) գնաց (երկինք, ամպ լուսին, էջ 7):

Մեկ հոգու՝ շատ է,

Երկու հոգու՝ հերիք է,

Երեքին հիչ է (գաղտնիք, էջ 202):

Էկան լցվան,

Բռնին կցվան,

Էլան ցուցվան.

Տըտոզեցին (օրորվել), տըտոզեցին,

Բան չը խասկցան, էլան գացին (հարսանիք և պարողներ, էջ 88):

Իբրև ամփոփում՝ նշենք, որ ժողովրդական հանելուկները հետաքրքիր են ոչ միայն իրենց գործածությամբ առհասարակ, այլև պատկերավորման և արտահայտչական միջոցների հարուստ համակարգով, որը ցայտուն կերպով արտացոլում է մեր ժողովրդի լեզվամտածողության տարբեր կողմերը:

3.3. ԼԵԶՎԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԻՇՅԱՆԻ «ՄՈՒՍԱԼԵՈՑԻ ՊԱՊՍ» ԽՈՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ուսումնասիրության մեջ ներկայացված է պատկերավորման միջոցների գործածությունը Գևորգ Բաղդիշյանի «Մուսալեոցի պապս» խոհագրության մեջ: Բնագրային օրինակներով ցույց է տրվել համեմատությունների, փոխաբերությունների, ճարտասանական բանադարձումների կիրառությունը: Խոհագրությունը հարուստ է պատկերավորման միջոցներով, որոնք ոչ միայն հարստացնում են երկի լեզուն և ընթերցողին մղում մեկ շնչով ավարտելու ընթերցումն ու մտորելու առաջ քաշված խնդիրների շուրջ, այլև յուրահատուկ կերպով պարզորոշ գծագրում են ծերունու դիմանկարը՝ իր կենսափորձով, խորիմաստ մեկնաբանություններով և աշխարհընկալման իր փիլիսոփայությամբ:

Պատկերավորման միջոցների, դարձվածքների, թևավոր խոսքերի առատ գործածությունը, զրույցը որպես սյուժեի հյուսման հիմնական միջոց դարձնելը և Մովսես պապի կյանքի փիլիսոփայությունը ներկայացնելը մի կողմից պարզորոշ գծագրում և ամբողջացնում են Մովսես պապի դիմանկարը, մյուս կողմից՝ Իսկուհի տատի և նրան «համախոհ» ընտանիքի անդամների հավաքական կերպարը:

Արևմտահայ ծագումով լեզվաբան, գրաբարագետ Գևորգ Բաղդիշյանը մասնագիտական շրջանակներում հայտնի է իր լեզվաբանական աշխատություններով, գրախոսականներով, բանասիրական այլ հրապարակումներով, որոնցից առավել հայտնի է «Սեբեոսի «Պատմության» լեզուն և ոճը»¹⁴ մենագրությունը:

¹⁴ Տե՛ս Գ. Բաղդիշյան, *Սեբեոսի «Պատմության» լեզուն և ոճը*. - Հայոց լեզվի պատմության հարցեր, պր. 1, Ե., 1981:

Ընթերցողի համար, կարծում ենք, հաճելի անակնկալ էր նրա՝ 2017 թ. լույս տեսած **«Մուսալենցի պապս»** ինքնակենսագրական պատումը, որը գրված է արևմտահայերեն և, կարծում ենք, արտացոլում է հեղինակի լեզվաբանական հետաքրքրություններն ու դրանք կիրառելու հմտությունները: Այն հեղինակի առաջին գեղարվեստական երկն է և ներկայացվում է իբրև **կտավային աշխատանք**¹⁵:

Պատումի պյուժեն զարգանում է հարյուրամյա Մեսրոպ պապի և քսանամյա երիտասարդի՝ ընդամենը մեկ օրում ունեցած գրույցի նկարագրությամբ: Խոհագրության կենտրոնում **Մովսես պապի** կերպարն է: Նա, չնայելով իր պատկառելի տարիքին և ընտանիքի անդամների՝ մասնավորապես կնոջ՝ Իսկուհու դիմադրությանը՝ շարունակում է աշխատել իր այգում՝ **«Չաշխատիլը մեռնիլ է: Կուզեք մեռնի՞մ, մեռնի՞լս կուզեք, հա՞»** խոսքերն իր համար նշանաբան դարձրած:

Հեղինակն այսպես է սկսում իր կտավի պատկերումը. «Հին պատմութիւն էր: Կինը՝ շուրջ իննսունամեայ Իսկուհին, ընտանիքը, ազգուտակը մէկ կողմ էին, Մովսես պապս՝ մի՛ւս կողմն էր: Անոնք թէ՛ պետք չէ՛ աշխատիս, ամօ՛ք է, ամօ՛ք, մե՛ծ մարդ ես, իսկ պապս թէ՛ դուք բա՛ն չէ՛ք հասկնար:

Ինծի քաջ յայտնի էր այս պատմութիւնը: Ուստի եւ նմանուեցայ կոիւր վայելողներուն՝ աշխատելով աննկատ մնալ» (ԳԲՄՊ, էջ 7):

Պատկերավորման միջոցները ոչ միայն հարստացնում են երկի լեզուն և ընթերցողին մղում մեկ շնչով ավարտելու ընթերցումն ու մտորելու առաջ քաշված խնդիրների շուրջ, այլև յուրահատուկ կերպով պարզորոշ գծագրում են ծերունու **դիմա-**

¹⁵ Գ. Բաղդիշեան, *Մուսալենցի պապս* (այսուհետև՝ ԳԲՄՊ, էջերը կնշվեն բնագրային օրինակներին կից), Ե., 2017, էջ 3:

նկարը՝ իր կենսափորձով, խորիմաստ մեկնաբանություններով և աշխարհընկալման յուրահատուկ փիլիսոփայությամբ...

Երկն ամենից առաջ լի է **փոխաբերություններով**, որոնք արտահայտված են զանազան միջոցներով, կառույցներով, ինչպես. «Ուրիշներուն **բերանը տոպրա՞կ** է, որ քաշեմ ու կապեմ, հը՞» (ԳԲՄՊ, էջ 7): «Ուրեմն **Հոգիդ Մուսա լեռ** է, չէ՞, պա՛պ» (ԳԲՄՊ, էջ 24) : «Հացը մե՛ղք է: **Հացն աշխատանք** է, **քրտինք**, **պատարագի նշխարք**» (ԳԲՄՊ, էջ 22): «Երբ այգեգործի սա մկրատը գրպանս դնեմ, **յոգնութիւնս** ալ հետը հոն **կիյնայ** ու կը մնայ» (ԳԲՄՊ, էջ 20):

Քիչ չեն նաև դարձվածքներն ու շրջասույթները, ինչպես. «Պապս իր **միտքին թելը ո՛չ կտրած էր, ո՛չ ալ կորսնցուցած**» (ԳԲՄՊ, էջ 12): «**Միրտէս ջուր խմեցիր**» (ԳԲՄՊ, էջ 21), որը նշանակում է «ուզածը կատարել, ցանկացածի համեմատ խոսել կամ վարվել»¹⁶: «Մե՛կն ու մե՛կը թող համարձակէ տեղէ տեղ շարժուիլ առանց իր գիտութեան: **Համաշխարհային երրորդ պատերազմը** պատրաստ էր» (ԳԲՄՊ, էջ 8): Մեկ այլ տեղում կնոջն անվանում է **գիշերուան ուսուցչուհի**. «...Քեզի հետ պսակուելով, **գիշերուան ուսուցչուհիս**» (ԳԲՄՊ, էջ 39) :

Զափազանց շատ են **համեմատությունները**, որոնք հիմնականում արտահայտվել են **պէս, նման, իբրեւ** կապերով: Օրինակներ՝ «—Հասա՞ր մուրազիդ, — **չհանդարտած հրաբուխի մը պէս ժայթքեցաւ** տատս: «...կենցաղավարութեան դասական ամբողջ դպրոց մը մարսածի հմտութեամբ...», (ԳԲՄՊ, էջ 9): «...ինծի յառուած **հոգեդարձ եղածի անորոշ հայեացքով** մը կեցաւ Մովսէս պապը» (ԳԲՄՊ, էջ 9): «Կը նայիմ պառաւս՝ Բսկուիին, **իբրեւ մեռեալ մը**, երկնցած է քովս» (ԳԲՄՊ, էջ 10): «...Գէ՛որգ, — շարունակեց Մովսէս պապս՝ **ուժգին երկրաշարժէ մը յետոյ եղող թերթէ**

¹⁶ Ա.Մ. Սուքիասյան, Ս.Ա. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, էջ 540:

ցնցումի մը նման» (ԳԲՄՊ, էջ 11): «Ամօթի զգացումէս ուղեղս խցանի մը նման թռաւ գլուխէս» (ԳԲՄՊ, էջ 16): «Տարեցներու՛ն աշխատանքը մեռոնի պէս բան մըն է, տղա՛ս» (ԳԲՄՊ, էջ 18): «Տեղ հասնելուն պէս, ամէն բան մոռցած, խոր, անու՛շ շունչ մը քաշեց պապս, գրպանէն հանեց աւելորդ ճյուղերը կտրող մկրատը, **եօթ տարուան կարօտը սիրտին մէջ ծրարած սիրահարի մը նման**, համբուրեց զայն...» (ԳԲՄՊ, էջ 19): «Ի՛նչ, մեղք, պա՛պ, -ըսի ինքնամոռաց պլլուելով վտիտ վզին, **երկրի վրայ իբրեւ Աստուծոյ**» (ԳԲՄՊ, էջ 13): «Մարսամ հաւու պէս կը քալեմ» (ԳԲՄՊ, էջ 20): «Տեսնողներն ի՛նչ պիտի մտածեն: Հիմա ալ հեքիաթնե՞ր պիտի հիւսեն, **ակոսներուն տակ ծամօնի պէս պիտի ծամե՞ն մեզի**» (ԳԲՄՊ, էջ 20): Երանի՛, հազա՛ր երանի տեսնէիք պապս այդ պահուն՝ կաս-կարմիր, քրտինքը ճակատին հատիկ-հատիկ, **ինչպէս իւղին կաթիլները ջուրի երեսին՝ տա՛ք, առու՛ յգ**», (ԳԲՄՊ, էջ 22): «Կը քալեմ, **կարծես իբրեւ թռչուն կը թռչիմ**, բայց թիգուկէս մանչ մը կու գայ ու կ'անցնի ինծի», (ԳԲՄՊ, էջ 22): «Տարիներ կ'անցնին եւ, խոնաւութիւն տեսած լուցկիի **հատիկի մը նման**, այլեւս կա՛յծ ալ չեն տար, չեն բոնկիր ու կը մարին, **կը ձուլու՛ին օտարին՝ ծովուն կամ ովկիանին մէջ իբրեւ հեռացող, մարող ալիքներ, խլեակներ**» (ԳԲՄՊ, էջ 26): «Աստուա՛ծ վկայ, մի՛շտ ձանձրացած էի այս պապէս՝ **սփինքսի մը պէս լուռ ու համր, հետախոյզի խորամանկ դիւանագետի մը նման** գրեթէ միշտ աչքերով, հայեացքով խօսող Մովսէս պապէս», (ԳԲՄՊ, էջ 27): Համեմատությունը կարող է լինել նաև առանց կապերի: Օրինակ՝ «Տիկին Իսկուհին, պատուախնդի՛ր, աւանդական հսկա՛յ ընտանիքի մը դէկը ձեռքը՛, **չոր-ճիպոտ...**» (ԳԲՄՊ, էջ 7): Ինչպէս տեսնում ենք, հեղինակն Իսկուհուն համեմատում է չոր ճիպոտի հետ: Երկը թէև հարուստ է փոխաբերություններով և մակդիրներով, սակայն նկատելի է համեմատությունների գերակշիռ լինելը վերջինների նկատմամբ:

Պատումն աչքի է ընկնում նաև ճարտասանական բանադարձումներով, դարձվածքներով, ակնարկներով: Ստորև կներկայացնենք ճարտասանական հարցում արտահայտող նախադասությունների օրինակներ, ինչպես՝ «Խիղճս մուկե՞րը, շունե՞րը, կատունե՞րը կերած են, ի՛նչ է», (ԳԲՄՊ, էջ 12): «Համոզելու՞, թե՞ համոզուելու ներքին խանդով, բախտ նայողի հետաքրքրությամբ եւ շարժուձեւով մը վրայ բերաւ Մովսէս պապս...» (ԳԲՄՊ, էջ 22): «...ագռաւը Նոյին բարի լուր մը բերելու համար թռաւ: Բերա՞ւ: Ո՞վ որկեց Սահակս Ամերիկա» (ԳԲՄՊ, էջ 31): «Ամուսիններէն մէկը, անգամ եթէ միտքին ծայրէն բաժնուիլ անցըներ, պատմութիւն կը դառնար եւ պատմութեան գիրքերուն մէջ կը գրէին: Այսօր ալ այդպէս է, չէ՞, - հեզնանքով եւ ափսոսանքով ինծի դիմելով, խօսքն աւարտեց Մովսէս պապս», (ԳԲՄՊ, էջ 18): Ինչպես տեսնում ենք, վերջին օրինակում առկա է նաև չափազանցություն, որի գործածությամբ ևս հարուստ է երկը: Բերենք չափազանցության այլ օրինակներ. «Ապրածս օրերէն աւելի երկար պապանձեցար,— սրտնեղած ըսաւ պապս» (ԳԲՄՊ, էջ 15): «Ասոնց քիթը միայն երկինքներէն ջուր կը խմէ» (ԳԲՄՊ, էջ 18): Հետևյալ նախադասությունն իր մեջ ամփոփում է և՛ հարցում, և՛ համեմատություն, և՛ չափազանցություն. «Ինչու՞: Հարցրի՛ հայեացքս սրընթաց նետի մը պէս գամելով անոր ճիշդ բիբերուն մէջ» (ԳԲՄՊ, էջ 25):

Բազմաթիվ են հակադրության օրինակները. «Սակայն Մովսէս պապիս «կարճ խելքը», այս կետին շուրջ, շա՛տ ու շատ ուսումնականներու երկար խելքէն աւելի երկար էր եւ ընդունելի» (ԳԲՄՊ, էջ 15): Նշված օրինակում հակադրությունն արտահայտված է կարճ խելք և երկար խելք դարձվածքներով, որոնցից միայն առաջինն է վկայված բառարաններում՝ «հեռուն չտեսնող, անհեռատես,

տգետ, անմիտ»¹⁷ իմաստներով: Դարձվածային հակադրություններ առկա են նաև այլ օրինակներում, ինչպես՝ «Մարդը, **աշխարհ գալեն** մինչև **ի վերին Երուսաղեմ** երթալը, պետք է սորվի», (ԳԲՄՊ, էջ 14): Գոյականներով արտահայտված հակադրության օրինակ. «Վառողի պէս կը պայթի: Ուր **կին** կայ, հոն **խաղաղութիւն** չ'ըլլար» (ԳԲՄՊ, էջ 17):

Հակադրությունը կարող է արտահայտվել ամբողջական նախադասություններով, ինչպես՝ «Շա՛տ ու՛շ հասկցայ, թէ ամուսնացող **երիտասարդը սկիզբը ի՛նչ ալ որ ըսէ, աղջիկը «այո՛, այո՛» կըսէ, իսկ յետոյ «ո՛չ, ո՛չ» կ'ըլլայ**», (ԳԲՄՊ, էջ 17): Կամ՝ «**Ինքը՝ մէկ բուռ, տարիքը՝ հարիւր, հոգին՝ կրակ**» (ԳԲՄՊ, էջ 22): Հակադրությունն արտահայտված է համեմատություններով. «Գիշերն ալ՝ անկողինս առողջ կը մտնեմ, բայց առտու վերմակիս տակէն **բամբակի պէս կակուղ**, հանգստացած մարմինով դուրս ելլելու փոխարէն, հիւանդ կ'արթննամ» (ԳԲՄՊ, էջ 22): «**Արևածագը** նման է նորածինին, ոչինչով փոխարինելի անոր անու՛շ բոյրին», իսկ **արեւամուտը՝ ինծի**» (ԳԲՄՊ, էջ 24):

Երկում իր յուրահատուկ դրսևորումն է գտել նաև **ակնարկը**, որի ներսում կարող է լինել ինչպես **համեմատություն**, այնպես էլ **հակադրություն**, հաճախ՝ ն՛ մեկը, ն՛ մյուսը, ինչպես՝ «Միրելը մեղք չէ, եթէ սերը եւ սիրելը միշտ իբրեւ աստուածային գաղտնիք մը մնան, չսպառուին: Այսօր տեսածիս չեմ ուզեր հաւատալ: Դեռ երեկ ամուսնացած կլինէր, **ամուսիններ թաշկինակներու պէս կը փոխուին**» (ԳԲՄՊ, էջ 17): «Հայրենիքն ա՛յն է, ուր ցաւդ մօրմէդ սորված լեզուովդ կու լաս, ուր պապենական գերեզմա՛ն ունիս, ուր **ողջը՝ ողջին հետ է գետնին վրայ, իսկ մեռածը՝ մեռածին հետ է հողին տակ**» (ԳԲՄՊ, էջ 26): «Նայէ՛, Գէ՛որգ, մարդը թիթեռնիկի մը կեանք

¹⁷ Ա.Մ. Սուքիասյան, Ս.Ա. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, էջ 316:

ունի այս աշխարհիս վրայ, բայց անթիվ - անհամար մարդ **արարածներ թիթեռնիկի մը պէս ալ այս ու այն կողմ կը թռչին** եւ ժամանակ ալ չեն ունենար յիշելու, թէ ու՞ր ծնած են եւ հասկնալու, թէ ու՞ր եւ ինչպէ՞ս պիտի մեռնին» (ԳԲՄՊ, էջ 26): «Կնոջը Աստուած չկայ, տո՛ւ: **Կատուի նման մի՛շտ պիտի շոյես:** Չշոյեցիր՝ կը ճանկոռտ» (ԳԲՄՊ, էջ 33): «Հասկցի՛ր, Գէ՛որգ, անկողինին մէջ միայն նորապսակները շատ պիտի ըլլան, մէկ ալ՝ հիւանդները» (ԳԲՄՊ, էջ 17): «Հիմիկուան օրիորդներուն եւ կիներուն ձեռքերն անգամ այսքան նագուկ չեն»: «Մեր կոիւր սէ՛ր է, կեա՛նք է»: «Բայց Իսկուհիս ուրիշ է: Ան հի՛ն գինի է, գինի՛, տղա՛յ» (ԳԲՄՊ, էջ 34):

Մովսէս պապի բերանով յուրահատուկ իմաստային նրբերանգներ են ունենում ինչպէս հայտնի, այնպէս էլ իրեն բնորոշ թևավոր խոսքերն ու ասացվածքները, որոնք որպէս հայրենասիրության, ազգայինի պահպանման յուրահատուկ կոչ են հնչում և շատ արդիական ու տեղին են նաև այսօր, ինչպէս՝ «**Լաւ է քան մը չունենալ, քան ունեցածդ չկարենաս պահել**» (ԳԲՄՊ, էջ 26): «**Թմբուկին ձայնը հեռուէ՛ն անուշ կու գայ**» (ԳԲՄՊ, էջ 27): «**...շատ պտտող հաւը շա՛տ կեղտ կը բերէ ոտքերուն հետ**» (ԳԲՄՊ, էջ 30) (նկատի ունի հայրենիքից գնացողներին՝ Վ.Ն.): «**...գաւակ չունեցողը մէ՛կ ցաւ ունի, ունեցողը՝ հազա՛ր ու մէ՛կ ցաւ...**» (ԳԲՄՊ, էջ 27): Աշխատանքը գովերգող յուրահատուկ կոչ է հետևյալ խոսքը. «**...աղքատին խելք տուողներ շա՛տ կ'ըլլան, հաց, ապրուստ տուողներ՝ ո՛չ**» (ԳԲՄՊ, էջ 30): Կյանքի տարբեր երևույթների նկատմամբ նույնպէս իր մոտեցումներն ունի Մովսէս պապը, ինչպէս՝ «**Շատը կ'ուտեն մինչեւ կշտանան, քիչը կ'ուտեն, մինչեւ լմնայ**» (ԳԲՄՊ, էջ 35): «**Ուսումը, համալսարանը երկինքէն կախուած կանթեղ մը պէտք է ըլլայ՝ խի՛ստ արժանատրներուն միայն հասանելի**» (ԳԲՄՊ, էջ 37): Վերջինի ամփոփումն է որպէս անեծք

հնչող հետևյալ խոսքը. «**Ձեռքը կոտրուէր քեզի տիպլումայ տուողին, հա՛**» (ԳԲՄՊ, էջ 25):

Այսպիսով՝ պատկերավորման միջոցների, դարձվածքների, թևավոր խոսքերի առատ գործածությունը, զրույցը որպես սյուժեի հյուսման հիմնական միջոց դարձնելը և Մովսես պապի կյանքի փիլիսոփայությունը ներկայացնելը մի կողմից պարզորոշ գծագրում և ամբողջացնում են Մովսես պապի **դիմանկարը**, մյուս կողմից՝ Իսկուհի տատի և նրան «համախոհ» ընտանիքի անդամների հավաքական կերպարը: Կտավային աշխատանքը ներկայացնում է հայ տղամարդու օրինակելի մի կերպար, որը, կարծում ենք, իր յուրահատուկ տեղն ու նշանակությունը կունենա հայ գրականության մեջ:

КРАТКИЕ АННОТАЦИИ НА РУССКОМ ЯЗЫКЕ

(Перепечатаны из соответствующих научных журналов)

1.1. Значение интерфикса (соединительной гласной) в аффиксальных словах современного армянского языка

Статья посвящена употреблению и оценке интерфикса в аффиксальных словах современного армянского языка. Поскольку в армянском языке компоненты сложных слов соединяются как с помощью интерфикса, так и без него, сложные слова делятся на два типа - сложные слова, части которых соединены с помощью интерфикса и без него. Со временем из разных корней создаются аффиксы, перед которыми или после которых тоже употребляется интерфикс. Последний может срастаться с аффиксом, в результате чего один и тот же аффикс может иметь два варианта выражения: без гласной *ш* и вместе с ней. В теоретических исследованиях эти аффиксы представлены различными способами: соединительная гласная может быть указана в скобках (*h̄ur(ш)-*, *h̄wɫ(ш)-*, *h̄wɫ(ш)-*, *uɫr(ш)-*, *-(ш)q̄h̄n̄*, *-(ш)ɫ̄w̄h̄n̄*, *-(ш)uɫ̄w̄h̄n̄* и т. д.), могут быть представлены два варианта (алломорфа) одного аффикса (*uɫr-* (*uɫrш-*), *ɫ̄n̄ɫ̄u-* (*ɫ̄n̄ɫ̄uш-*), *-r̄w̄h̄n̄* (*-ɫ̄r̄w̄h̄n̄*) и т. д.). Поскольку в теоретических исследованиях не отмечается, как нужно поступать в процессе словообразовательного анализа слов, возникают определенные трудности. Интерфикс в армянском языке определяется как соединительная гласная между частями сложных слов, а не как соединительная гласная, необходимая для соединения любых морфем. Исходя из этого и принимая во внимание некоторые другие аргументы, в аффиксальных словах армянского языка интерфикс не стоит отделять от аффикса.

1.2. Оценка морфем **-եւր, -աւր, -ուր, -ուր**, выражающих значения собирательности и множественности в трудах по грамматике армянского языка

В армянском языке морфемы **-եւր, -աւր, -ուր, -ուր** образуют слова, которые передают разные значения. Среди таких слов особое место занимают существительные и местоимения, выражающие значения собирательности, притяжательности и множественности и обозначающие семью, род, группировку и т.д. (**Պողոսեւր, Վարդանաւր, Աերոնր, Կապուր, Բաղրուր**).

Данная статья посвящена морфемам, имеющимся в подобных словах и выражающим двойственное значение (суффикса и окончания множественного числа).

1.3. Словообразование и употребление слов **նոյան** и **նոյան** в армянском языке

В данной статье рассмотрены словообразование и употребление слов **նոյան** и **նոյան** в армянском языке. С опорой на анализ лингвистических фактов древнеармянского языка мы попытались доказать, что **նոյան**-неправильный, а **նոյան**-правильный вариант.

1.4. Семантика глаголов **կիւել** и **կիւլել** в армянском языке.

Армянские глаголы **կիւել** и **կիւլել** наряду со своими основными значениями имеют также дополнительные значения. Относительно употребления данных глаголов в разных значениях существуют различные точки зрения в грамматике армянского языка. Данная статья посвящена анализу семантики этих глаголов.

1.5. Употребление слов *տնօրենություն* и *տնօրհնություն* в армянском языке.

Слова *տնօրենություն* и *տնօրհնություն*, широко используемые в современном армянском языке, образованы от существительного *տնօրեն* (директор). Указанные слова идентичны по своему образованию и различаются формально тем, что первое является фонетическим видоизменением, а второе – нет. Различные точки зрения в отношении указанных лексем обусловлены лишь употреблением их в значении «ղեկավարություն» (“руководство”), которое в настоящее время заменяет лексему դիրեկցիա (дирекция), широко используемую в советское время. В статье предпринята попытка выяснить смысловые различия и использование данных слов в армянском языке с опорой на словари, в которых представлена лексика армянского языка, теоретические труды, а также Восточно-армянский национальный корпус (ВАНК).

1.6. К вопросу о семантической дифференциации глаголов *համաձայնել* и *համաձայնվել* в армянском языке

Статья посвящена проблеме семантической дифференциации глаголов *համաձայնել* и *համաձայնվել* в армянском языке.

В армянском языке есть паронимические глаголы, которые отличаются друг от друга только инфиксом *-վ-*. Значения этих глаголов, как правило, представлены в толковых словарях, а также в различных исследованиях, посвященных грамматике языка.

Дело обстоит иначе с глаголами *համաձայնել* и *համաձայնվել*, семантическая дифференциация которых не представлена в достаточной степени в этих трудах.

2.1. Вопрос морфологического значения сочетания *կարող եմ* в восточноармянском языке

Модальность характерна для некоторых глаголов не только русского, английского, немецкого и других языков, но и армянского (в древнем, среднем и новом периодах).

Одно из выражений этого явления - сочетание *կարող եմ* („могу”), которое имеет значение модального глагола. Глагол склоняется в настоящем и в прошедшем временах во всех лицах и употребляется вместе с инфинитивом. На синтаксическом уровне глагол образует сложное сказуемое.

2.2. Вопрос о частеречной принадлежности слов *սիրով, ձերով* в восточноармянском языке

Вопрос о частеречной принадлежности слов *սիրով, ձերով*, часто употребляемых в литературном и разговорном вариантах современного армянского языка, являлся предметом исследования многих лингвистов и нашел свое отражение в соответствующих трудах. В той или иной степени эта проблема затрагивалась в словарях, содержащих лексику армянского языка. Несмотря на это, вопрос о частеречной принадлежности вышеназванных слов, образованных от форм родительного падежа личных местоимений, до сих пор остается спорным.

Некоторые грамматисты относят эти слова к собирательным существительным, другие – к местоимениям без указания на их разряд, третьи считают их субстантивированными притяжательными местоимениями.

3.1. Лингвостилистическое исследование армянских народных загадок

В исследовании представлены некоторые лингвостилистические особенности армянских народных загадок. Язык загадок выделяется прежде всего особым проявлением **аллитерации** и **ассонанса**, **звукоподражания** и **рифмы**. Примечателен ряд особых проявлений морфологического уровня, разных слоев лексик. В загадках большой интерес представляют также некоторые синтаксические явления, такие как предложения с характерным особенным звучанием, в которых одно из составляющих предложений **вопросительное**, другое **повествовательное**. Примечательно также обилие односоставных предложений. Из выразительных и описательных способов особое проявление получили метафора, гипербола и градация.

3.2. Описательные и выразительные средства в армянских народных загадках

В исследовании представлены описательные и выразительные средства в армянских народных загадках, представляющие разные стороны армянского народного языкового мышления.

Широко применяются олицетворение, гипербола, литота, менее употребительны сравнение и эпитет.

Из выразительных средств используются повтор, градация, аллегория, антитеза.

3.3. Изобразительно-выразительные средства языка в эссе-размышлении Геворга Багдишяна «Мой дед из Муса-Дага»

В статье представлено использование изобразительно-выразительных средств в эссе-размышлении Геворга Багдишяна «Мой дед из Муса-Дага». На примерах из оригинального текста произведения продемонстрировано использование сравнений, метафор, фигур речи. В эссе-размышлении в изобилии представлены изобразительно-выразительные средства, которые не только обогащают язык произведения, подталкивают нас к прочтению произведения на одном дыхании и размышлениям над выдвинутыми проблемами, но и своеобразным способом очерчивают портрет старика с его жизненным опытом, глубокомысленными комментариями и философией мировосприятия.

Богатство и изобилие изобразительно-выразительных средств, фразеологизмов, крылатых слов, беседа как основной способ построения сюжетной линии, представление жизненной философии деда Мовсеса, с одной стороны, четко очерчивают и дополняют портрет деда Мовсеса, а с другой стороны, создают коллективный образ бабушки Искуи и членов-«единомышленников» ее семьи.

ENGLISH SUMMARIES

(reprinted from relevant scientific journals)

1.1. The Value of Interfix in Modern Armenian Affixal Words

The article discusses the use and the value of the interfix in Modern Armenian affixal words. Since in the Armenian language the parts of the compound words can be connected with and without the interfix, all compound words are divided into two types – compound words with the interfix and without it. With the historic development of the language affixes can be derived from the roots. The interfix can proceed or follow these roots. The interfix in such cases can coalesce with the root and as a result the same affix can have two variants of expression – with the vowel *u* and without it. In theoretical researches these affixes are displayed differently: the interfix can be presented in brackets (*ենթ(ւ)-*, *հաւ(ւ)-*, *հալ(ւ)-*, *տաք(ւ)-*, *-(ւ)գին*, *-(ւ)պան*, *-(ւ)ստան*, etc.), two variants of the same affix can be presented (*տաք-* (*տաքա-*), *փոխ-* (*փոխա-*), *-բան* (*-աբան*), etc). Since it is not mentioned in the theoretical works how we should act while performing a word formation analysis, several difficulties occur. The interfix in Modern Armenian is defined as a linking vowel between the parts of a compound word and not as a linking vowel between any affixes. Taking into consideration this and several other facts the interfix should not be separated from the affix in Modern Armenian affixal words.

1.2.The value of the morphemes *-ենք, -անք, -ոնք, -ունք* denoting collectiveness and plurality in the works on the Armenian grammar

The morphemes *-ենք, -անք, -ոնք, -ունք* form the words, which have different meanings in the modern Armenian language. Of special importance among these words are the nouns and pronouns, which denote collectiveness and possessiveness as well as plurality such as *Պողոսենք, Վարդանանք, մերոնք, պապոնք, Բաղունք*, meaning the family, group, etc.

The given paper is devoted to the study of morphemes in such words which have double value in the Modern Armenian language (suffix and plural forming ending).

1.3. Formation and usage of the words *նոյան* and *նոյյան* in the armenian language

The article studies the formation and usage of the words *նոյան* and *նոյյան* in the Armenian Language. Based on the analysis of the linguistic facts of old Armenian, we have tried to prove that *նոյան* is the wrong, and *նոյյան* is the right variant.

1.4.The semantic peculiarities of the verbs *կհսել* and *կհսվել* in the Armenian language

The Armenian verbs *կհսել* and *կհսվել* besides their main meanings have some additional meanings as well. Concerning the usage of these verbs in their different meanings there are various viewpoints in the Grammar of the Armenian language. The given paper is devoted to the analysis of the semantic features of these verbs.

1.5. Using the words *տնօրենություն* and *տնօրինություն* in Armenian

The words *տնօրենություն* and *տնօրինություն*, which are widely used in present-day Armenian, are coined from the noun *տնօրեն* (*director*). The given words are completely identical and differ formally: the first one has undergone phonetic changes while the second one hasn't. The existence of various perspectives on the given words can be explained only by their usage in the meaning «ղեկավարություն» (“management”) which nowadays is used as a substitute of the word *դիրեկցիա* (*directorship*) widely used in the Soviet period. In this paper an effort has been made to find out the differences in meaning and the application of these two words based on the data found in the dictionaries of the Armenian language, theoretical works and Eastern Armenian National Corpus (EANC).

Key words: words *տնօրենություն* and *տնօրինություն* in the Armenian language, phonetic changes, ancient Armenian (grabar), middle Armenian, Western Armenian, Eastern Armenian, dictionaries, Armenian Literature.

1.6. On the issue of semantic differentiation of the verbs *համաձայնել* and *համաձայնվել* in the Armenian language

The article is devoted to the issue of semantic differentiation of the verbs *համաձայնել* and *համաձայնվել* in the Armenian language.

There are some paronymic verbs in the Armenian language differentiated by the infix *-վ-*. The meanings of these verbs are usually presented in dictionaries and various works on grammar.

But other is the question in case of the verbs *համաձայնել* and *համաձայնվել*, the semantic difference of which is not explained properly.

2.1. The Question of Morphological Value of the Compound Structure *կարող էմ* in Eastern Armenian Literary Language

The modality is typical not only of some verbs in Russian, English, German and other languages, but also of verbs in Armenian (in Old, Middle and Modern periods).

One of such examples is the compound structure with the verb *կարող էմ* (“can”) which develops as a modal verb in Eastern Armenian literary language. It is conjugated in all persons of present and past tenses and is used only with the infinitive. In the syntactical level, it forms a compound verbal predicate.

2.2. The Issue of the Part of Speech of the words *սերունք, ձերունք* in the *Western Armenian language*

The issue of the part of speech of the words *սերունք, ձերունք*, widely used in the literary and colloquial variants of contemporary Armenian, has been in the focus of attention of many linguists and has been reflected in corresponding researches. It has been presented in certain dictionaries containing the word stock of the Armenian language as well. In spite of this fact the issue of the part of speech of these words derived from the forms of the Genitive Case of Personal Pronouns is still argumentative and continues to arise various opinions.

Some grammar researchers consider these words to be collective nouns, others – pronouns without mentioning their type. Besides, there are scholars who consider them to be substantivized possessive pronouns.

This article is devoted to morphemes in this type of words, and which have twice value in the Modern Armenian language: plural ending and suffix.

3.1.The Lingvostylistic Study of Armenian National Riddles

Several lingvostylistic peculiarities of the Armenian national riddles are presented in this research. The language of the riddles is first of all characterised by the expression of **alliteration**, **assonance** and **rhyme**. The demonstration of different **lexical layers** and some particular peculiarities in **morphological** level are remarkable.

In the national riddles several syntactical facts are of special interest, for instance sentences with a particular characteristic **intonation**, where the first component is interrogative, and the other is narrative. The use of **mononuclear** sentences is typical of riddles as well. From the expressive means **metaphors**, **exaggerations**, **gradations** are widely used in riddles.

3.1.The Lingvostylistic Study of Armenian National Riddles

Several lingvostylistic peculiarities of the Armenian national riddles are presented in this research. The language of the riddles is first of all characterised by the expression of **alliteration**, **assonance** and **rhyme**. The demonstration of different **lexical layers** and some particular peculiarities in **morphological** level are remarkable.

In the national riddles several syntactical facts are of special interest, for instance sentences with a particular characteristic **intonation**, where the first component is interrogative, and the other is narrative. The use of **mononuclear** sentences is typical of riddles as well.

From the expressive means **metaphors, exaggerations, gradations** are widely used in riddles.

3.2.The descriptive and expressive means in Armenian national riddles

The descriptive and expressive means in Armenian national riddles are presented in this research displaying different sides of Armenian national linguistic thinking. From the descriptive means exaggerations, personalization, diminution, gradations are widely used in the riddles. The comparison and epithet are rarely used. From the expressive means are widely used repetition, gradation, opposition, allegory.

3.3.The article touches upon the application of literary devices (rhetoric devices) in the essay «My Musa Daghatian Grandfather» by Gevorg Baghdishyan

The application of comparisons, metaphors, figures of speech has been demonstrated with the authentic examples. There is a great number of literary devices (figures of speech) in the essay which enrich the language of the work and urge the reader to finish the essay in one breath and reflect on the problems raised in it, but also outline the old man's portrait with his life experience, profound comments and his unique philosophy of perception.

Abundance of rhetorical devices (literary devices), idioms (phraseological units), aphorisms, conversation as the main means of the plotline, grandfather Movses's philosophy of life, on the one hand, outline clearly and complete fully grandfather Movses's portrait, and on the other hand, develop the collective image of grandmother Iskuhi and like-minded members of her family.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
2. Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Ե., 1974:
3. Աբրահամյան Ա.Ա., Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962:
4. Աբրահամյան Ա.Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, 28-34:
5. Աբրահամյան Մ. Գ., Արդի հայերենի դերանունները, Ե., 1956:
6. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2, 1974:
7. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976:
8. Աբրահամյան Ս., Հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2004:
9. Աղայան Էդ.Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:
10. Աղայան Էդ.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
11. Աղայան Էդ.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
12. Աղայան Էդ. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
13. Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
14. Աճառյան Հ., Հայերեն անձնանունների բառարան, Եր., 4, 1942:
15. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.2, Ե., 1973:

16. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հ.2, Ե., 1954:
17. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե., 1957:
18. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Ե., 1961:
19. **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 2005:
20. **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, հ.1-ին, (բաժինը՝ Ս. Էլոյանի), Ե., 1979, էջ 311:
21. **Առաքելյան Վ.**, Գրաբարի քերականություն, Ե., 2010:
22. **Ասատրյան Մ.**, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Ե., 1959:
23. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 2002:
24. **Ասմանգուլյան Հ., Հովհաննիսյան Մ.**, Անգլերեն-հայերեն բառարան, Ե., 1984:
25. **Ավետիսյան Յու.**, Ձայնավորների հնչյունափոխական առանձնահատկությունները արդի հայերենում.— «ԲԵՀ.Հայագիտություն», 133.1, Ե., 2011, էջ 15-30:
26. **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն, Ե., 2007:
27. **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում.—«ՎԷմ» համահայկական հանդես, Թ (ԺԵ), Ե., 2017, 1, էջ 125-147:
28. **Ավետիսյան Յու., Հ. Զաքարյան**, Հայոց լեզու, Ձևաբանություն, Ե., 2008, էջ 46:

29. **Ավետյան Ս.**, Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն).— «Հայագիտության հանդես», 2, Ե., 2020, էջ 206-219:
30. **Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1, Վենետիկ, 1836:
31. **Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 2, 1837:
32. **Աւգերեան Մկ., Ճէլալեան Գր.**, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
33. **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Ե., 2010:
34. **Բաղիկյան Խ.**, Ճիշտ խոսենք հայերեն, Ե., 2012:
35. **Բաղդիշյան Գ.**, Սեբեոսի «Պատմության» լեզուն և ոճը.- Հայոց լեզվի պատմության հարցեր, պր. 1, Ե., 1981:
36. **Բաղդիշեան Գ.**, Մուսալեռցի պապս, Ե., 2017:
37. **Բարսեղյան Հ.Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973:
38. **Բարսեղյան Հովհ.**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:
39. **Բեղիբյան Պ.**, Հայերեն դարձվածաբանական ընդարձակ բառարան, Ե., 2011:
40. **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:
41. **Գալստյան Ս.**, Դպրոցական բառակազմական բառարան, Ե., 2011:
42. **Գալստյան Հ.**, Ճիշտը և սխալը, Բառագործածության, բառաձևի և կապակցական սխալները հայերենում, Ե., 2007:

43. **Գևորգյան Ե.**, Ժամանակակից հայերենի համանունների բառարան, Ե., 1978:
44. **Գույումճեան Ս., Թորոսեան Լ.**, Գրպանի նոր բառարան. հայերեն-անգլերեն, անգլերեն –հայերեն, Պէյրութ, 2002:
45. **Դավթյան Վ.**, Բարի հսկան (Հանդիպումներ Վիլյամ Սարոյանի հետ), Ե., 1979:
46. **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003:
47. **Էլոյան Ս.**, Հոդակապով և անհոդակապ բարդությունները ժամանակակից հայերենում, «Լրաբեր», 1, Ե., 1972, էջ 77-85:
48. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Լեզվի ինստ., Ե., 3, 1969:
49. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Լեզվի ինստ., հ.4, Ե., 1980:
50. **Խաչատրյան Լ.Ս.**, Թոսունյան Գ.Բ., Գրաբարի դասագիրք, 2004:
51. **Խաչատրյան Լ.Ս.**, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:
52. **Խաչատրյան Լ.Ս.**, Գրաբարի ուսումնական բառարան, Ե., 2013:
53. **Խլդաթյան Ֆ.Հ.**, «Մերոնք» և «Ձերոնք» բառերի մասին, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1-2, Ե., 1968, էջ 99-102:
54. **Խլդաթյան Ֆ.Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, Գ պրակ, Ե., 2007:
55. **Խլդաթյան Ֆ.Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, Բ պրակ, Ե., 2008:
56. **Կատվալյան Վ.Լ.**, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016:
57. Հայ-ռուսերեն բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987:

58. **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, Ե., 2011:
59. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, ԳԱԱ ԼԻ, Ե., 2004:
60. **Համբարձումյան Վ.**, Հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., 2012:
61. **Համբարձումյան Վ.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018, 88:
62. **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Ե., 1960:
63. **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ (համահավաք բնագիր), Ե., 1965:
64. **Հարությունյան Հ. Ա.**, Ածական անուն. դերանուն, Ե., 1976:
65. **Հարությունյան Ս.**, Բանագիտական ակնարկներ, Ե., 2010:
66. **Հովհաննիսյան Լ.Շ.**, Գրաբարի բառարան-Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010:
67. **Հովսեփյան Լ.**, Բառերի ստուգաբանական և բառակազմական վերլուծությունը հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2006, հուլիսի 3-4, էջ 127:
68. **Ղազարյան Ռ. Ս.**, Գրաբարի բառարան, հ. 1, Ե., 2000:
69. **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Նորայայտ բառեր գրաբարում, Ե., 2007:
70. **Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ.**, Միջին հայերենի բառարան, Ե., 2009:
71. **Ղազարյան Ռ.Ս.**, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., 2012:
72. **Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ.**, Միջին հայերենի բառարան, Ե., 2009:
73. **Ղարիբյան Ա.Ս.**, Ռուս-հայերեն բառարան, Ե., 1977:

74. **Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա.,** Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992:
75. **Մալխասեանց Ստ.,** Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Ե., 1944:
76. **Մալխասեանց Ստ.,** Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944, 3:
77. **Մալխասեանց Ստ.,** Հայերէն բացատրական բառարան, հ.4, Ե., 1944:
78. **Մարգարյան Ալ.,** Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն, Ե., 1993:
79. **Մարգարյան Ալ.,** Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:
80. **Մարգարյան Ալ.,** Հայոց լեզվի քերականություն, Ե., 2004:
81. **Մինասյան Մ.Պ.,** Հայերենի ստացական դերանունները, «Պատմաբանասիրական հանդես», հ. 4, Ե., 1959, էջ 153-167:
82. **Նազարյան Ռ., Գյոդակյան Ա.,** Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան. պատկերազարդ, Ե., 2011:
83. **Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարաբյուլյան Թ.Ա.,** Լեզվաբանական բառարան, Ե., 1975:
84. **Զահուկյան Գ.Բ.,** Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Պատմաբանասիրական հանդես», 1-2, Ե., 1994, էջ 54-62:
85. **Զահուկյան Գ.Բ.,** Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
86. **Զահուկյան Գ. Բ.,** Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
87. **Զահուկյան Գ.Բ.,** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
88. **Զահուկյան Գ. Բ.,** Ստուգաբանական բառարան, Ե., 2010:

89. **Զահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ.,**
Հայոց լեզու, 1-ին մաս, Ե., 1980:
90. **Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ.,** Գրականագիտական
բառարան, Ե., 1980:
91. **Սաքապետոյան Ռ.Կ.,** Հոդակապը արդի հայերենում,
«Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 2000, հ. 1, 47-51:
92. **Սաքապետոյան Ռ.Կ.,** Արևմտահայերենի դասագիրք, Ե.,
2006:
93. **Սաքապետոյան Ռ. Կ.,** Արևմտահայերեն- արևելահայե-
րեն նոր բառարան, Ե., 2011:
94. **Սարգսյան Ա.,** Արևմտահայերենի բառարան, Ե., 1991:
95. **Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա.,** Հայոց լեզվի
դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
96. **Սուքիասյան Ա.Մ.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:
97. **Սուքիասյան Ա.Մ.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1967:
98. **Սուքիասյան Ա.Մ.,** Հայոց լեզվի հոմանիշների բառարան,
Ե., 2009:
99. **Սուքիասյան Ա.Մ., Սուքիասյան Ք.Ա.,** Ուղղագրական-
ձևակազմական բառարան (տապան, աղավնի), Ե., 2002:
100. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու,
կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝
Հ.Խ. Բարսեղյան (1956-2006), Ե., 2006, 279:
101. [http://eanc.net/EANC/search/?interface language=am](http://eanc.net/EANC/search/?interface_language=am),
29.07.21:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ -----	5
ԳԼՈՒԽ 1. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ	
1.1. Հոդակապի արժեքը ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում-----	7
1.2. Հավաքականություն և հոգնակիություն արտահայտող -ԵՆՔ, -ԱՆՔ, -ՈՆՔ, -ՈՒՆՔ ձևայինների գնահատումը հայերենի քերականական աշխատություններում-----	16
1.3. <i>Նոյան</i> և <i>նոյան</i> բառերի կազմությունը և գործածությունը հայերենում-----	27
1.4. <i>Կիսել</i> և <i>կիսվել</i> բայերի իմաստային դրսևորումները հայերենում-----	33
1.5. <i>Տնօրենություն</i> և <i>տնօրինություն</i> բառերի գործածությունը հայերենում-----	43
1.6. Հայերենի <i>համաձայնել</i> և <i>համաձայնվել</i> բայերի իմաստային տարբերական հարցի շուրջ-----	52
ԳԼՈՒԽ 2. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ	
2.1. Գրական արևելահայերենի <i>կարող եմ</i> հարադրության ձևաբանական արժեքի հարցը-----	63
2.2. <i>Մերոնք</i> և <i>ձերոնք</i> բառերի խոսքիմասային արժեքի հարցը գրական արևելահայերենում-----	74
ԳԼՈՒԽ 3. ՈՃԱԿԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ	
3.1. Հայկական ժողովրդական հանելուկների լեզվաոճա- կան քննություն-----	87
3.2. Պատկերավորման և արտահայտչական միջոցները հայկական ժողովրդական հանելուկներում-----	97
3.3. Լեզվի պատկերավորման միջոցները Գևորգ Բաղդիշյանի «Մուսալեռցի պապս» խոհագրության մեջ---	106
КРАТКИЕ АННОТАЦИИ НА РУССКОМ ЯЗЫКЕ -----	114
ENGLISH SUMMARIES -----	120
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ -----	126

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՐՍԻԿ ԱՐՄԵՆԻ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս.Արևշատյանի

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025